ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

2024 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024 թ.

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

1.1 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգը

1.2 Բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններ

1.3 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման միասնական համակարգի ներդնումը

1.4 Իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ և վերապատրաստումներ

1.5 Բարեվարքության համակարգի վիճակի գնահատում

II. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

2.1 Հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ Հանձնաժողով ներկայացված ծանուցումներ

2.2 Աջակցություն հայտարարտուներին, իրազեկման միջոցառումներ, խորհրդատվություն

2.3 Հայտարարագրերի ներկայացման գործընթաց

2.4 Հայտարարագրերի ուղղման գործընթաց

2.5 Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ

III. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Հայտարարագրերի ստուգում

3.2 Հայտարարագրերի վերլուծություն

IV.ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

4.1 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտ

4.2 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում

4.3 Կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների հրապարակում և ներկայացում

4.4 Միջազգային համագործակցություն

4.5 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների և ղեկավար մարմնի անդամների հայտարարագրերի՝ էլեկտրոնային եղանակով ներկայացում

V ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վարույթների իրավական ապահովման աշխատանքներ

5.2 Հանձնաժողովի մասնակցությունը իրավական ակտերի նախագծերի մշակմանը

5.3 Հանձնաժողովում ստացված՝ այլ մարմինների գրություններին, անձանց դիմումներին /հարցումներին/ պատասխանների ներկայացման ապահովում

5.4 Հանձնաժողովի այլ մասնագիտական ստորաբաժանումներին շարունակական իրավական աջակցության, այլ կանոնադրական գործառույթների ապահովում

VI. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

6.1 Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ

6.2 Բարեվարքության ուսումնասիրության գործընթացի արդյունքում ներկայացված եզրակացությունների առանձնահատկությունները

6.3 Բարեվարքության ուսումնասիրության գործընթացին առնչվող օրենսդրական փոփոխություններ

VII. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԶՍՊՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1 *Կոռուպցիոն ռիսկերի կառավարման մեթոդաբանությունների մշակումը և պիլոտային գործարկումը*

7.2 *Կոռուպցիոն ռիսկերի կառավարման և դրա կարևորության վերաբերյալ կարողությունների զարգացում*

VIII. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

8.1 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը և համագործակցային շրջանակը

8.2 Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերը

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

I. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Հանձնաժողովը 2024 թվականի առաջին կիսամյակում շարունակել է հանրային ծառայության բարեվարքության համակարգի կայացմանն ուղղված՝ իր լիազորություններից բխող գործառույթների իրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում հաստատվել և ուժի մեջ է մտել պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը, որի ընդունմանը հաջորդել են իրազեկման լայնածավալ աշխատանքներ: Ուժի մեջ են մտել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման կարգերը, մշակվել և ներդրվել է նվերների հաշվառման էլեկտրոնային ձևաթուղթ՝ նախքան էլեկտրոնային ռեեստրի գործարկումը հաշվառման գործընթացը կազմակերպելու նպատակով:

Հանձնաժողովը շարունակել է վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման գործընթացում հանրային իշխանության մարմիններին աջակցության տրամադրումը, ոլորտային կանոնագրքերի դիտարկումը, առաջարկների ներկայացումը, ինչպես նաև թիրախային քննարկումներին մասնակցությունը:

Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և դրա գործողությունների ծրագրի շրջանակներում կատարվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի գործունեության խնդիրների վերլուծություն, ինչի շուրջ

իրականացվել են քննարկումներ շահագրգիռ գերատեսչությունների հետ և նախանշվել ինստիտուտի լավարկման հեռանկարները:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը շարունակել է բարեվարքության տարրերի խախտումներին առնչվող դեպքերի ուսումնասիրությունները, առաջարկների ներկայացումը համապատասխան մարմիններին, ինչպես նաև բարեվարքության հարցերով կազմակերպիչներին բարեվարքության համակարգին առնչվող հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրումը: Զուգահեռաբար իրականացվել են բարեվարքության համակարգի և Հանձնաժողովի գործունեության ոլորտների վերաբերյալ վերապատրաստումները՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար:

1.1 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգը

Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների կիրառումը և մեկնաբանումը

Հանձնաժողովը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով լիազորվել է ապահովելու հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքների մեկնաբանման, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների պահպանման միասնականությունը: Սույն լիազորությունն անմիջականորեն բխում է հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների սահմանման և դրանց հետագա տեղայնացման օրենսդրական պահանջից:

Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 17-ին հաստատել է Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները (այսուհետ՝ Տիպային կանոններ), որով, ըստ էության, դրվել են վարքագծի կանոնների միասնական համակարգի հիմքերը: Տիպային կանոնների սահմանմամբ՝ Հանձնաժողովը նպատակ է հետապնդել ապահովել հանրային ծառայողների բարեվարք և կանխատեսելի վարքագիծը, հանրային ծառայողների մոտ ձևավորել բարեվարքության վերաբերյալ միասնական ընկալում, բարձրացնել և ամրապնդել կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ հանրային ծառայողների զգոնությունն ու անհանդուրժողականությունը: Տիպային կանոններով կարգավորվում են ի

պաշտոնե հանդես գալիս, ինչպես նաև մասնավոր կյանքում հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի դրսևորած վարքագիծը, նաև հանրային ռեսուրսների օգտագործման, շահերի բախման, նվերների ընդունման սահմանափակումների, քաղաքական չեզոքության, հանրային հաղորդակցության հետ կապված հարաբերությունները:

Հանձնաժողովը պարբերաբար ընդգծել է, որ բարեվարքության ընդհանուր միջավայրի ձևավորման համար չափազանց կարևոր է, որ հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները մեկնաբանվեն և կիրառվեն միատեսակ մոտեցմամբ՝ ապահովելով կանոնների նորմերի որոշակիությունն ու միասնականությունը, բացառելով անորոշությունը, դրանց հայեցողական մեկնաբանումը կամ երկիմաստությունը: Այս նպատակով՝ Հանձնաժողովը 2023 թվականին մշակել և հաստատել է Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանությունների ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց), որն ուղենիշային փաստաթուղթ է՝ միտված օժանդակելու հանրային իշխանության համապատասխան մարմիններին հանրային ծառայողների վարքագիծը քննելիս և մեկնաբանելիս: Միաժամանակ, Ուղեցույցը կիրառվում է որպես պրակտիկ գործիք՝ հանրային ծառայողների և հանրային իշխանության մարմինների կողմից համապատասխան մարմիններում իրականացվող վերապատրաստումների կազմակերպման համար:

Կարևոր է նշել, որ Ուղեցույցը կարող է կիրառելի լինել ոչ միայն հանրային ծառայության առանձին տեսակների՝ վարքագծի ոլորտային կանոնագրքերով սահմանված նորմերի մեկնաբանման համար, այլև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց առանձին խմբերի համար սահմանված/սահմանվող կանոնագրքերի կիրառման ընթացքում, եթե դրանց մշակման հիմքում դրված լինեն Տիպային կանոնները:

Ուղեցույցի մշակման ընթացքի, դրա կիրառման վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար ներկայացվել է Հանձնաժողովի գործունեության հաղորդումներում: Ուղեցույցը հասանելի է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղումով՝ http://cpcarmenia.am/hy/news/item/2023/11/16/1/:

Թեև Տիպային կանոնները և դրանց մեկնաբանությունների ուղեցույցը հաստատվել են նախորդող տարիներին, դրանց գործնական կիրառելիությունը պահպանվել է նաև հաշվետու ժամանակահատվածում: Տիպային կանոնները և դրանց մեկնաբանությունների ուղեցույցը Հանձնաժողովի և հանրային իշխանության առանձին մարմինների կողմից, մասնավորապես, օգտագործվում են վերապատրաստումների, ինչպես նաև հանրային ծառայողներին վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվության տրամադրման շրջանակներում:

Ոլորտային կանոնագրքերի մշակման աջակցությունը

Հանձնաժողովի կողմից հաստատված Տիպային կանոնները, «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հիմք են հանդիսանում հանրային ծառայության առանձին տեսակների վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման համար: Մասնավորապես, հանրային ծառայության առանձին տեսակները ղեկավարող մարմինները, ոլորտային առանձնահատկությունների առկայության դեպքում, կարող են սահմանել վարքագծի ոլորտային կանոնագրքեր:

Ոլորտային կանոնագրքերի մշակման գործընթացի պարզեցման և կանոնագրքերի ընդունման գործընթացի միատեսակության ապահովման նպատակով՝ Հանձնաժողովի կողմից մշակվել և ներկայացվել են Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցի և հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ներքին իրազեկման պլանի նախագծերը: 2023 թվականի մարտի 24-ին Ուղեցույցը հրապարակվել է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Ուղեցույցը նպատակ ունի մեթոդական աջակցություն տրամադրել պետական կառավարման մարմիններին՝ ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրարկման գործընթացում: Այն առավելապես գործնական ձեռնարկ է, որը ներկայացնում է ոլորտային կանոնագրքերի մշակման գործընթացում և կիրարկման ընթացքում ձեռնարկվելիք ներինստիտուցիոնալ քայլերը, կանոնագրքերի կարգավորման ենթակա հարցերի շրջանակը, կառուցվածքը և այլ հարցեր: Ուղեցույցում հատուկ ուշադրություն է դարձվում կանոնագրքերի մշակման ընթացքում ներառական մոտեցման ապահովմանը, ինչպես նաև կանոնագրքերի ընդունումից հետո՝ բարեվարքության համակարգի վերաբերյալ աշխատակիցների կարողությունների շարունակական զարգացմանը և վերապատրաստումներին:

Որպես ոլորտային կանոնագրքի մշակման գործընթացի մաս՝ ընդունող մարմինները պարտավորվում են կանոնագրքերի նախագծերը և ամփոփաթերթերը ներկայացնել Հանձնաժողով՝ վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծով սահմանված դրույթների՝ Տիպային կանոններին համապատասխանելիության վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով: Վերոգրյալով պայմանավորված՝ ոլորտային կանոնագրքերը դիտարկելիս Հանձնաժողովը հետևում է, որ մշակող մարմինների կողմից պահպանված լինեն և՛ օրենսդրորեն վերջիններիս ներկայացվող պահանջները, և՛ Ուղեցույցով

սահմանված ընթացակարգերը, հատկապես՝ մշակման գործընթացի ներառականությունը: Ընդ որում, համապատասխանությունը որոշելիս Հանձնաժողովը հետևում է, որ ոլորտային կանոնագրքերում պահպանված/արտացոլված լինեն Տիպային կանոններով սահմանված պարտադիր պահանջները և Տիպային կանոնների ընդհանուր կառուցվածքը:

Վերոգրյալի շրջանակներում Հանձնաժողովը 2024 թվականի առաջին կիսամյակում մասնակցել է Պաշտպանության նախարարության կողմից նախաձեռնված՝ «ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի պայմանագրային զինծառայողների վարքագծի կանոնների» նախագծի շուրջ հանրային քննարկումներին, ինչպես նաև Ներքին գործերի նախարարության կողմից մշակվող՝ «Փրկարար ծառայության ծառայողների վարքագծի կանոնագրքի» նախագծի վերաբերյալ քննարկմանը՝ ներկայացնելով համապատասխան դիտարկումներ և առաջարկություններ՝ ոլորտային կանոնագրքերի՝ Տիպային կանոններին համապատասխանեցման առնչությամբ:

Հարկ է նշել, որ Տիպային կանոնների կիրառման միասնականության և ոլորտային կանոնագրքերի՝ Տիպային կանոններին համապատասխանեցման հարցը սահմանված է որպես ռազմավարական թիրախ Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրում, ինչով նախատեսվում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, համայնքային ծառայողների ոլորտային վարքագծի կանոնագրքերի մշակման հաստատման և փուլ առ փուլ կիրարկման միջոցով պետք է ապահովի դրանց համապատասխանությունը հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններին: Տիպային կանոնների տեղայնացմանը խոչընդոտող հանգամանքների և ոլորտային կանոնագրքերի մշակման գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է նաև Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդման շրջանակներում:

Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի ընդունումը

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովին վերապահված է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող

անձանց վարքագծի կանոնագիրքն (այսուհետ՝ Կանոնագիրք) ընդունելու լիազորություն:

Սույն լիազորության շրջանակներում Հանձնաժողովը մշակել և 2024 թվականի փետրվարի 6-ին ընդունել է Կանոնագիրքը, որն ուժի մեջ է մտել սույն թվականի ապրիլի 1-ից:

Կանոնագրքով սահմանվում են համապատասխան պաշտոնատար անձանց թվով 55 վարքագծի պարտադիր կանոններ, որոնց միջոցով մեկնաբանվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները:

Մասնավորապես, հանրությանը ծառայելու գիտակցման սկզբունքի ներքո Կանոնագիրքն անդրադառնում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելիս Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահպանման, վերադաս լիազորությունը չչարաշահելու, տրվող հանձնարարականները ՀՀ օրենսդրության շրջանակում պահելու, ինչպես նաև ցանկացած հակաօրինական վարքագծի նկատմամբ անհանդուրժողականություն դրսևորելու պահանջներին: Նույն սկզբունքի ներքո առանձին կանոններով սահմանվում է ենթակաների և հանրային իշխանության տվյալ մարմնի հետ հարաբերվող անձանց օրինական շահերի պաշտպանության պարտականությունը:

Հանրային շահին հավատարմության սկզբունքի ներքո Կանոնագիրքը սահմանում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագիծը շահերի կառավարման, ինչպես նաև նվերների ընդունման սահմանափակումների համատեքստում: Նույն սկզբունքի ներքո սահմանվում են նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից իրավասու մարմինների կողմից ընդունված պարտադիր կատարման ենթակա և վերաբերելի քաղաքականությունների, որոշումների, ուղեցույցների, ռազմավարական փաստաթղթերի պահանջների կատարման պարտականությունը, ինչպես նաև իր և հանրային իշխանության տվյալ մարմնի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովման պահանջները:

Բարեկրթության և հարգալիրության սկզբունքի ներքո սահմանվում են կանոններ, որոնք կանխատեսում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի վարքագիծը հանրության հետ հարաբերություններում, մասնավորապես՝ ի պաշտոնե հանդես գալիս անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելը, պաշտոնեական պարտականություններն իրականացնելիս պատշաճ տեսքով հանդես գալը, ֆիզիկական ուժի կիրառման սահմանափակումները, աշխատավայրում վարվելակերպի այլ կանոններ:

Բարեխղճության սկզբունքը ներառում է կանոններ, որոնք կարգավորում են

հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից պաշտոնեական տեղեկատվության հրապարակման, ինչպես նաև այլ կերպ դրա օգտագործման հետ կապված իրավիճակները, ինչպես նաև հանրային ռեսուրսների բարեխիղճ օգտագործումը:

Օբյեկտիվության սկզբունքի ներքո սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից որևէ կերպ խտրականության կամ կողմնակալության, հովանավորչության դրսևորման արգելքները, նախատեսվում են նաև նախընտրական քարոզների, կուսակցական շահի սպասարկման նպատակով այլ հանրային ծառայողների կամ հանրային ռեսուրսների ներգրավման սահմանափակումները, ինչպես նաև քաղաքական զսպվածության պարտավորություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, այդ թվում՝ անկախ ու ինքնավար մարմիններում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց համար քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալու, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելու, ինչպես նաև սոցիալական մեդիայում ծավալվող գործունեությանը վերաբերելի սահմանափակումներ:

Նույն սկզբունքի ներքո նաև սահմանվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից օրենքի առերևույթ խախտումների մասին իրեն հայտնի դարձած տեղեկությունների (այդ թվում՝ կոռուպցիոն բնույթի հանցագործության, շահերի բախման իրավիճակների, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների) վերաբերյալ գրավոր հաղորդում ներկայացնելու պարտականությունը, ինչպես նաև նման հաղորդում ներկայացրած անձանց նկատմամբ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից դրսևորվող վարքագիծը:

Հարկ է նշել նաև, որ կանոնագիրքը ներառում է վարքագծի խրախուսելի կանոններ ևս, որոնք, թեև պարտադիր չեն պահպանման համար, սակայն ուղենիշային են և միտված են հանրային ծառայության ոլորտում գերազանցության ապահովմանը:

Կանոնագրքով սահմանված նորմերի չպահպանումը օրենքով սահմանված դեպքերում առաջացնում է կարգապահական պատասխանատվություն:

Կանոնագրքի, դրանով սահմանվող նորմերի, ինչպես նաև կիրառման և հետևանքների մասին իրազեկվածության բարձրացումը կարևորելով՝ Հանձնաժողովը նախքան Կանոնագրքի ուժի մեջ մտնելը Կանոնագրքի սուբյեկտ հանդիսացող անձանց շրջանում իրականացրել է իրազեկման մեծածավալ աշխատանքներ: Մասնավորապես, նախապես հաստատված իրազեկման պլանի համաձայն՝ Կանոնագրքի վերաբերյալ տեղեկացումներ են ուղարկվել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բոլոր մարմիններ, գերատեսչություններին ուղարկվել են նաև Կանոնագրքի և առանձին կանոնների վերաբերյալ մշակված իլյուստրացիոն պատկերներով տպագիր գրքույկներ:

Կանոնագրքի ընդունման վերաբերյալ հրապարակումներ են արվել Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում: Հարկ է հավելել, որ Կանոնագիրքը թարգմանված և հասանելի է նաև անգլերեն տարբերակով:

Հաշվի առնելով Կանոնագրքի ուժի մեջ մտնելու ժամկետը՝ Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում հնարավորություն է ունեցել համապատասխան պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների խախտման դեպքերը քննության առնելու և ապահովելու իրավական ընթացք: Կանոնագրքի ուժի մեջ մտնելուց հետո արդեն իսկ աճել է վարքագծի կանոններին վերաբերելի մեդիա հրապարակումների և Հանձնաժողով հասցեագրվող դիմումների թիվը:

Վարքագծի կանոնների քննության և հարուցված վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է սույն հաղորդման համապատասխան գլխի ներքո:

Հարկ է նշել, որ Կանոնագրքի սուբյեկտ հանդիսացող անձանց կողմից վարքագծի կոնկրետ կանոնների խախտման դեպքերը քննելիս Հանձնաժողովը հիմք է ընդունում և՛ Տիպային կանոնների մեկնաբանությունների ուղեցույցով համանման կանոնների պարզաբանումը, և՛ առկա դատական նախադեպերը, և՛ միջազգային վերաբերելի փաստաթղթերով վարքագծային նորմերի մեկնաբանումները՝ ապահովելով դրանց առավել լայն/համալիր վերլուծություն:

Միևնույն ժամանակ, վարքագծի կանոնների համակարգի միասնականության ապահովման տեսանկյունից առկա են որոշակի մարտահրավերներ, որոնց պայմաններում անգամ հաստատված կանոնագրքերի կիրառումը գործնականում խոչընդոտների է հանդիպում: Որպես օրինակ՝ համայնքի ղեկավարների վարքագիծը ենթակա է քննության Հանձնաժողովի հաստատած Վարքագծի կանոնագրքի ներքո, մինչդեռ, սահմանված չեն համայնքի ավագանու անդամի վարքագծի կանոնները, ինչը անհամաչափ է դարձնում կանոնների կիրառումը: Ընդ որում՝ ավագանու անդամի վարքագծի կանոնների դեպքում առկա չէ նաև դրա սահմանումը երաշխավորող օրենսդրական նորմ և լիազոր մարմին: Սահմանված չեն նաև Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնները, ինչը կրկին խաթարում է վարքագծի կանոնների միասնական համակարգի ձևավորման ջանքերը:

1.2 Բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններ

Հանձնաժողովը 2024 թվականի առաջին կիսամյակում շարունակել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ դիմումների և մեդիա հրապարակումների ուսումնասիրությունը և պարզաբանումների տրամադրումը: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է ընդհանուր թվով 59 դիմում և մեդիա հրապարակում: Ուսումնասիրված հրապարակումների ընդհանուր թիվը կազմել է 34, ևս 25 ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել այլ պետական մարմիններից և քաղաքացիներից ստացված դիմում-գրությունները:

Ուսումնասիրված դեպքերից 25-ը վերաբերել են անհամատեղելիության պահանջներին, 21-ը՝ շահերի բախման իրավիճակներին, 11-ը՝ վարքագծի կանոններին: Երկու դեպքում ուսումնասիրության առարկան վերաբերել է նվերների ընդունման սահմանափակումներին:

Բարեվարքության համակարգի տարրերի առնչությամբ ստացված դիմումների ուսումնասիրության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է սույն հաղորդման «5.3» գլխի ներքո:


2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
մեդիա հրապարակումներ
դիմումներ
25
34


Բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններ
30
25
20
15
10
5
0
Անհամատեղելիության պահանջներ
Շահերի բախման կարգավորումներ
Վարքագծի կանոններ
Նվերների ընդունման սահմանափակումներ

Մեդիա հրապարակումներ

1. *«Դիանա Գասպարյանի սկեսուրն էջմիածնում ապօրինի շինարարություն է սկսել»*, https://hetq.am/hy/article/162586, «Հետք», դեկտեմբերի 5, 2023

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը շինարարական թույլտվություններ է տրամադրել իր հետ փոխկապակցված անձի՝ իր ամուսնու՝ Արամայիս Միրզոյանի մորը պատկանող «Նարե Պլյուս» ՍՊ ընկերությանը: Միաժամանակ, հրապարակման մեջ հիշատակվում է, որ «Նարե Պլյուս» ՍՊ ընկերությանը նշված շինարարական թույլտվությունները տրամադրվել են շինարարությունը սկսելուց հետո միայն, իսկ համայնքի ղեկավարի համապատասխան որոշումները չեն հրապարակվել համայնքապետարանի կայքէջում:

Հրապարակման մեջ անդրադարձ է կատարվում նաև Դիանա Գասպարյանի ամուսնու հոր՝ Աշոտ Միրզոյանի կողմից իր աշխատակցին՝ Շ. Շահինյանին փոխառության տրամադրման և նշված փոխառությամբ գնված համայնքային սեփականությամբ հողատարածքը Աշոտ Միրզոյանի կնոջ բաժնեմասնակցությամբ՝ «Նարե Պլյուս» ՍՊ ընկերությանը վաճառելու դեպքին:

Հանձնաժողովը սույն գործը քննել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված շահերի բախման կարգավորումների համատեքստում, որի շրջանակում ուսումնասիրել է Դիանա Գասպարյանի և Արամայիս Միրզոյանի հայտարարագրերը, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլ. համակարգում առկա, ինչպես նաև Հանձնաժողովին հասանելի՝ պետական տեղեկատվական այլ շտեմարանների տվյալները:

Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով՝ այն է՝ շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով, սույն թվականի ապրիլի 15-ին հարուցել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

Միաժամանակ, գործի շրջանակներում հիշատակվող՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ենթադրյալ հանցագործության հատկանիշները քննելու նպատակով Հանձնաժողովը հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն, ինչի հիման վրա սույն թվականի մարտին հարուցվել է քրեական վարույթ: Վարույթը միացվել է «Հետք»-ի նույն հրապարակման հիման վրա Հակակոռուպցիոն կոմիտեում ավելի վաղ հարուցված վարույթին:

2-6. «Ավագանու ՔՊ խմբակցության մի շարք անդամներ ավագանու անդամի պաշտոնի հետ անհամատեղելի պաշտոններ են զբաղեցնում», https://www.aravot.am/2024/02/06/1398057/, «Առավոտ», փետրվարի 6, 2024

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ ԱԺ նախագահի ռեֆերենտ Զինա Չալիկյանը, Անտառային կոմիտեի նախագահ Վլադիմիր Կիրակոսյանը, Քաղաքացիական պայմանագիր կուսակցության խմբակցության փորձագետ Նատալյա Սինորյանը, ԱԺ նախագահի խորհրդական Արման Բարխուդարյանը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնական Լևոն Լևոնյանն իրենց պաշտոններին զուգահեռ զբաղեցնում են համայնքի ավագանու անդամի պաշտոն:

Վարչությունը հրապարակման մեջ տեղ գտած յուրաքանչյուր պաշտոնատար անձի առնչությամբ իրականացրել է առանձին ուսումնասիրություն՝ վերջիններիս կողմից անհամատեղելիության պահանջների խախտման գնահատման նպատակով:

Մասնավորապես, ուսումնասիրվել են վերջիններիս հայտարարագրերը և Հանձնաժողովին հասանելի պետական տեղեկատվական շտեմարաններում առկա տվյալները, ինչի արդյունքում հաստատվել է, որ հրապարկման սուբյեկտ հանդիսացած անձինք հանրային պաշտոնում պաշտոնավարմանը զուգահեռ զբաղեցրել են համայնքի ավագանու անդամի պաշտոն:

Հանձնաժողովը, քննարկելով հարցը «Հանրային ծառայության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների կարգավորումների համատեքստում, գտել է, որ հանրային/հանրային ծառայության պաշտոնների և ավագանու անդամի պաշտոնի համատեղելիությունը ենթակա է քննարկման հանրային պաշտոնին ներկայացվող պահանջների համատեքստում, որտեղ վերջիններիս՝ պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն զբաղեցնելու արգելքը բացարձակ է: Հետևապես՝ հանրային պաշտոն և/կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի համար համայնքի ավագանու անդամի պաշտոնը դիտարկվել է անհամատեղելի:

Հանձնաժողովը սույն դեպքերի առնչությամբ հարուցել է համապատասխան վարույթներ: Վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է սույն հաղորդման համապատասխան գլխի ներքո:

Նույն անձանց առնչությամբ առկա են եղել հրապարակումներ նաև այլ լրատվամիջոցների կողմից՝

1. https://ankakh.com/hy/article/149309
2. https://infopress.am/31048/
3. https://armlur.am/1341274/
4. https://auroranews.am/news/2024-02-06-qp-akan-avaganu-andamnery-mi-qani-or-zhamanak-unen-oroshum-kayatsnelu-vayr-dnel-kam-toghnel-pashtony
5. https://lurer.com/?p=554390&l=en

6. *«Կա՛մ մանդատից պիտի հրաժարվեն, կա՛մ զբաղեցրած պաշտոնից. ուշագրավ իրավիճակ՝ Երևանի ավագանիում»,* https://mediahub.am/post/16c6720c628d7bcc?fbclid=IwAR1qVA68K3etGGxyYu7KOnIlHINFNhptn1WJLBvmJxQKu1p13ouZF2z0WpM_aem_AQX8lnaudj_3_MmA9CaaKB9Adv05VmA0mCF5D2o90RUSuFgLM7f9tXlQ3LdOu4_SdiI
   «Mediahub.am», հունվարի 30, 2024

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ ԱԺ պատգամավորի օգնական Սամվել Հակոբյանն իր պաշտոնին զուգահեռ զբաղեցնում է համայնքի ավագանու անդամի պաշտոնը: Հանձնաժողովն ուսումնասիրել է Սամվել Հակոբյանի հայտարարագիրը և Հանձնաժողովին հասանելի՝ պետական տեղեկատվական շտեմարաններում առկա տվյալները, ինչի արդյունքում արձանագրել է, որ վերջինս հանրային պաշտոնին զուգահեռ զբաղեցրել է համայնքի ավագանու անդամի պաշտոն:

Հանձնաժողովը, քննարկելով հարցը «Հանրային ծառայության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների կարգավորումների համատեքստում, գտել է, որ հանրային/հանրային ծառայության պաշտոնների և ավագանու անդամի պաշտոնի համատեղելիությունը ենթակա է քննարկման հանրային պաշտոնին ներկայացվող պահանջների համատեքստում, որտեղ վերջիններիս՝ պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն զբաղեցնելու արգելքը բացարձակ է: Հետևապես, հանրային պաշտոն և/կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի համար համայնքի ավագանու անդամի պաշտոնն անհամատեղելի պաշտոն է: Հանձնաժողովը սույն գործի առնչությամբ հարուցել է համապատասխան վարույթ, որի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հաղորդման համապատասխան գլխում:

7. *«Փաշինյանի խորհրդականի ՀԿ-ն պետությունից խոշոր դրամաշնորհներ է ստանում»,* https://hraparak.am/post/fcc50efd774f5b0e68165cc46bbe73d2
   «Հրապարակ», փետրվարի 21, 2024

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի հունվարին 19-ին «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպության նախագահ Սուրեն Մաղաքյանը նշանակվել է ՀՀ վարչապետի խորհրդական: Նշված հասարակական կազմակերպությունը, մինչ Ս. Մաղաքյանի՝ խորհրդականի պաշտոնի ստանձնումը և դրանից հետո, մասնակցել է Աշխատանքի և սոցիալական հարցերի, ինչպես նաև Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների կողմից դրամաշնորհների տրամադրման նպատակով հայտարարված մրցույթներին և հաղթող է ճանաչվել՝ համապատասխանաբար 2022 թվականին՝ 4, 2023 թվականին՝ 6 և 2024 թվականին՝ թվով 2 մրցույթներում:

Թեև «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականի պաշտոնը չի դիտարկվում որպես պետական պաշտոն և վերջինիս նկատմամբ կիրառելի չեն օրենքով սահմանված պահանջները՝ Հանձնաժողովն ուսումնասիրել է հրապարակման մեջ շրջանառվող տեղեկությունները՝ շահերի բախման կարգավորումների համատեքստում:

Հաշվի առնելով, որ նշված կազմակերպությունը գործունեություն է ծավալում 2005 թվականից և հիմնադրման պահից ի վեր ստացել է պետական տարբեր դրամաշնորհներ, իսկ Ս. Մաղաքյանի՝ պաշտոնի նշանակվելուց հետո դրամաշնորհների տրամադրման առերևույթ աճ/ավելացում չի արձանագրվել՝ ուսումնասիրությունն ավարտվել է:

8. *«30 հազար դոլար են ծախսել մեկ ջերմոց կառուցելու համար, որոնցից 4-ը հետո քանդվել է. Սիմիդյանի նախարարությունում բարձիթողի վիճակ է»,* https://armlur.am/1344654/ , «Արմլուր», փետրվարի 28, 2024

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Շրջակա միջավայրի նախարարությունը Անտառային կոմիտեի (ներկայիս՝ Էկոպարեկային ծառայության) «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տարածաշրջանային գրասենյակի հետ համատեղ իրականացրել է «Հայաստանում անտառների դիմակայության բարձրացում՝ մեղմացման միջոցառումների շնորհիվ հարմարեցման և գյուղական վայրերում կանաչ տարածությունների ընդլայնման միջոցով» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Միաժամանակ, նշվում է, որ այն ընկերությունները, որոնք Ծրագրի շրջանակներում ստանձնել են անտառտնտեսության ջերմոցների կառուցումը, փոխկապակցված են Ծրագրի իրականացման մեջ ներգրավված՝ նախարարությանը ենթակա մարմինների ղեկավարների հետ:

Համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ Ծրագրի իրականացման գործընթացում

ներգրավված, մասնավորապես՝ ջերմատների կառուցման համար պատվիրված գնման արդյունքում հաղթող ճանաչված ընկերության և նշված պաշտոնատար անձանց միջև փոխկապակցվածությունը բացակայում է, հետևապես, առերևույթ շահերի բախման հատկանիշներ առկա չեն եղել:

9. *«Տեղի գնումները՝ համայնքի ղեկավարի կնոջից, քեռուց ու քեռակնոջից»*, https://mediafactory.am/our-products/tegh, «Հետք մեդիա գործարան», մարտի 24, 2024

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Տեղ համայնքի համայնքապետարանը համայնքային մանկապարտեզներին սնունդ մատակարարելու նպատակով պայմանագրեր է կնքել համայնքապետ Դավիթ Ղուլունցի կնոջ՝ «Կարմեն Մաիլյան» ԱՁ-ի հետ: Մանկապարտեզների համար սննդի մատակարարման պայմանագրեր են կնքվել նաև «Միշա Քոչարյան» ԱՁ-ի հետ: Միշա Քոչարյանը համայնքապետարանի գլխավոր մասնագետ, հաշվապահ Ա. Ղարագյոզյանի ամուսինն է: Համայնքի կարիքների համար 2,2 մլն դրամի սեղմված բնական գազի գնում է կատարվել «Զանգեզուր գազ» ՍՊ ընկերությունից, որի 50% մասնաբաժինը պատկանում է համայնքապետի մորեղբորը՝ Մարտունիկ Պողոսյանին, իսկ մյուս 50%-ը մորեղբոր կնոջը՝ Նազիկ Սեդրակյանին:

Հանձնաժողովն, ուսումնասիրելով հրապարակման յուրաքանչյուր դրվագ, պարզել է, որ «Տեղի թիվ 1 նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականին կնքված պայմանագրի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գնման պատվիրատուն «Տեղի թիվ 1 նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ-ն է, ուստի գնման պայմանագիրը կնքվել է ոչ թե համայնքապետարանի, այլ ՀՈԱԿ-ի տնօրեն Մելսիդա Պողոսյանի հետ:

Համայնքապետարանի և «Միշա Քոչարյան» ԱՁ-ի միջև կնքված պայմանագրերի առնչությամբ՝ Հանձնաժողովը պարզել է, որ գնումների նշված գործընթացներում Մ. Քոչարյանի կինը՝ համայնքապետարանի գլխավոր մասնագետ Ա. Ղազագյոզյանը չի հանդիսացել գնումների գործընթացը համակարգող, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նախագահ կամ անդամ:

Միաժամանակ, համայնքի կարիքների համար Դ. Ղուլունցի հետ օրենքի իմաստով փոխկապակցված անձի՝ մորեղբոր՝ Մարտունիկ Պողոսյանի մասնակցությամբ «Զանգեզուր գազ» ՍՊ ընկերությունից ձեռք է բերվել սեղմված բնական գազ: Գնման պայմանագրերի ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ դրանք ստորագրվել են համայնքի ղեկավար Դ. Ղուլունցի կողմից: Հարցը

քննարկելով «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումների շրջանակներում՝ Հանձնաժողովը գտել է, որ համայնքի ղեկավարն իր լիազորությունների շրջանակներում կատարել է գործողություն (անգործություն), որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման: Հանձնաժողովը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով, այն է՝ շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով, սույն թվականի հուլիսի 4-ին հարուցել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:Վարույթի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է սույն հաղորդման համապատասխան գլխի ներքո:

10. *«Լուլուն անապահո՞վ է, թե՞ վետերան»*, https://news.am/arm/news/812220.html, «News.am», մարտի 14, 2024

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ ԱԺ պատգամավոր Լուսինե Բադալյանը 2021 թվականին դիմել է Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հանրային առողջապահության ֆակուլտետ և համալսարանի կողմից ստացել է ուսման վարձի ամբողջական վճարմամբ զեղչ՝ 1 միլիոն ՀՀ դրամի չափով:

Հանձնաժողովը սույն գործը քննել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված նվերների ընդունման սահմանափակումների համատեքստում, որի շրջանակում արձանագրել է, որ ԵՊԲ համալսարանը՝ 2021 թվականին ընդգրկված չլինելով պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում ստացող համալսարանների ցանկում, հիմք ընդունելով Լուսինե Բադալյանի՝ ԱԺ պատգամավոր լինելու հանգամանքը, վերջինիս տրամադրել է ուսման վարձի ամբողջական վճարմամբ զեղչ, ինչն օրենքի գործող կարգավորումների շրջանակում կարող է դիտարկվել որպես պաշտոնով պայմանավորված ոչ թույլատրելի համարվող նվեր՝ անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջման դրսևորմամբ:

Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ նվերների ընդունման սահմանափակումների խախտման համար վարչական պատասխանատվության դրույթները ներդրվել են միայն 2022 թվականին (ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 2023 թ. հունվարի 1), իսկ պատգամավորի վարքագծի կանոնների քննությունն, իր հերթին, դուրս է եղել Հանձնաժողովի լիազորությունների տիրույթից՝ Հանձնաժողովը վերջինիս նկատմամբ վարույթ չի հարուցել:

11. *«Թագուհի Թովմասյանը պատրաստվում է «Բաքվում հող գնել, սրճարան կառուցել», Սերժ Սարգսյանը «դաբրոն» տվել է. Կ.»*, https://www.armtimes.com/hy/article/283853, «Armtimes.com», ապրիլի 1, 2024

Հրապարակմանը համաձայն՝ Թագուհի Թովմասյանն իր պատգամավորական գործունեությունը համատեղում է իրեն պատկանող «Ժողովուրդ» օրաթերթում խմբագրական աշխատանքի հետ:

Հանձնաժողովն ուսումնասիրել է հրապարակման առարկան անհամատեղելիության պահանջների համատեքստում: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ Թագուհի Թովմասյանն առևտրային կազմակերպությունում ունեցած իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնել նախքան Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնի ստանձնումը: Հավատարմագրային կառավարման պայմանագիրը վերակնքվել է պաշտոնավարման ընթացքում՝ համապատասխան տվյալ պահին գործող կարգավորումներին: Միաժամանակ, ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ «Ժողովուրդ» օրաթերթում վերջինիս՝ որպես խմբագրի աշխատանքը ևս դադարեցվել է 2018 թվականին, հետևապես՝ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտում չի արձանագրվել:

12. *«ՔՊ-ական պաշտոնյաների արտոնյալ ԽԾԲ-ն. Անահիտ Ավանեսյան»*, https://lurer.com/?p=565780&l=am, «Lurer.com», ապրիլի 2, 2024

Հրապարակման համաձայն՝ Անահիտ Ավանեսյանի՝ նախարարի պաշտոնը ստանձնելուց հետո նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնը զբաղեցրել է վերջինիս ընկերուհին՝ Վարդուհի Գրիգորյանը: Միաժամանակ, ըստ հրապարակման՝ «ԻԲԱՐԻ» ՍՊ ընկերությունը, որը հիմնադրվել է 2017 թվականին, և որի հիմնադիրներից է առողջապահության նախարար Ա. Ավանեսյանի ամուսինը՝ Ստեփան Ավանեսյանը, 2022 թվականին Կառավարության որոշմամբ ազատվել է մաքսատուրքից: Պետական առողջապահական գործակալության ներկայիս ղեկավար Ահարոն Բարսեղյանը Ա. Ավանեսյանին և վերջինիս մերձավորներից մեկին պատկանող «Արֆարմացիա» և «Ուիգմորներ» ընկերությունների նախկին ֆինանսիստն է: Ինչպես նաև, Ա. Ավանեսյանը նախկին փոխնախարար Արսեն Դավթյանի տիկնոջը՝ Հայկուհի Մակարյանին նշանակել է Առողջապահական և ֆինանսական ցուցանիշների ծրագրավորման, հոսքերի կառավարման և վերլուծության բաժնի պետի պաշտոնում:

Հանձնաժողովն ուսումնասիրել է հրապարակմամբ ներկայացված տեղեկությունները՝ շահերի բախման և անհամատեղելիության պահանջների

կարգավորումների ներքո: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ Վ. Գրիգորյանը Առողջապահության նախարարությունում աշխատել է նախքան Ա. Ավանեսյանի՝ նախարարի պաշտոնում նշանակվելը՝ 2010-ական թվականների սկզբից: Վ. Գրիգորյանը Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնին նշանակվել է Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից կազմակերպած մրցութային ընթացակարգով, իսկ Վ. Գրիգորյանին պաշտոնին նշանակող անձը չի հանդիսացել Ա. Ավանեսյանը, հետևապես՝ վերջինիս նշանակման գործընթացում շահերի առերևույթ բախման իրավիճակ առկա չի եղել:

Ինչ վերաբերում է «ԻԲԱՐԻ» ՍՊ ընկերության՝ ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնություն տրամադրմանը, հարկ է նշել, որ Հանձնաժողովը սույն հարցը քննարկել է Կառավարության անդամի գործունեությունը կարգավորող օրենսդրության և շահերի բախման կարգավորումների համատեքստում: Ուսումնասիրության շրջանակներում պարզվել է, որ Կառավարության 2022 թվականի մարտի 24-ի որոշմամբ, «ԻԲԱՐԻ» ՍՊ ընկերությանը տրվել է ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնություն: Որոշման նախագիծը 2022 թվականի մարտի 24-ի Կառավարության նիստի օրակարգում եղել է չզեկուցվող հարցերի շարքում: Ա. Ավանեսյանը մասնակցել է փաթեթի քվեարկությանը: Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրել է, որ արտոնության տրամադրման փաստացի հիմք է հանդիսացել Կառավարության՝ 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1118-Ն որոշումը՝ գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու վերաբերյալ: Միաժամանակ, հաշվի առնելով, որ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքով, որը սահմանում է Կառավարության կազմը, կառուցվածքը և գործունեության կարգը, ինչպես նաև Կառավարության անդամների գործունեության երաշխիքները, Կառավարության անդամի շահեր բախման դեպքերը կարգավորող հստակ դրույթներ նախատեսված չեն, Հանձնաժողովը սույն թվականի մայիսին ««Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի շրջանակներում առաջարկություն է ներկայացրել մշակող մարմնին՝ Արդարադատության նախարարությանը՝ առաջարկելով նախատեսել նաև համապատասխան լրացումներ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում՝ ապահովելու «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված շահերի բախման իրավակարգավորումների պատշաճ

տեղայնացումը:

Ա. Բարսեղյանի պաշտոնավարմանն անդրադառնալիս Հանձնաժողովն արձանագրել է, որ վերջինս իր անձնական դիմումի համաձայն՝ 2024 թվականի մարտի 16-ին ազատվել է Առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետի պաշտոնից՝ ինչով պայմանավորված՝ հրապարակման սույն կետն արդիական չի եղել ուսումնասիրության համար:

Հրապարակման վերջին դրվագի առնչությամբ՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ Հայկուհի Մակարյանն Առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության առողջապահական և ֆինանսական ցուցանիշների ծրագրավորման, հոսքերի կառավարման և վերլուծության բաժնի պետի պաշտոնին նշանակվել է քաղաքացիական ծառայության մրցութային ընթացակարգերին համապատասխան: Նշանակումը կատարվել է ՀՀ Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի կողմից: Վերջինս Առողջապահության նախարարությունում աշխատում է դեռևս 2002 թվականից: Միաժամանակ, Ա. Ավանեսյանի և Հ. Մակարյանի միջև կապի բնույթը փաստող էական հանգամանքներ չեն հայտնաբերվել: Այսպիսով՝ շահերի բախման կարգավորումների առերևույթ խախտում Հանձնաժողովի կողմից չի արձանագրվել:

13. *«Սուքիասյանի և Հակոբյանի հետ կապվող ՍՊԸ-ն 1 մլն դոլարով Ծաղկաձորում հողամաս է գնել. 12 շենք կկառուցեն»*, *https://hetq.am/hy/article/165672*, «Հետք», ապրիլի 15, 2024

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Ազգային Ժողովի պատգամավորներ Խաչատուր Սուքիասյանի և Վաղարշակ Հակոբյանի հետ կապվող ընկերությունը Ծաղկաձորում առաջիկայում 12 շենքից բաղկացած համալիր է կառուցելու: Կառուցապատման համար ընտրված հողամասը ձեռք է բերվել շուկայական արժեքից ցածր՝ կադաստրային արժեքով: Նշված հողամասը ձեռք է բերվել «Սատուրնավան» ՍՊ ընկերության կողմից, որի հիմնադիրներն են հանդիսանում ԱԺ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի եղբորորդին՝ Արիկ Սուքիասյանը և պատգամավոր Վաղարշակ Հակոբյանի հայրը՝ Սոս Հակոբյանը:

Հանձնաժողովը, վերլուծելով գործի շրջանակներում առկա փաստական հանգամանքները, պարզել է, ԱԺ պատգամավորներ Խաչատուր Սուքիասյանը և Վաղարշակ Հակոբյանը չունեն ուղղակի մասնակցություն կամ ներկայացվածություն առևտրային սույն ընկերությունում: Միաժամանակ, Վաղարշակ Հակոբյանի հայրը՝ Սոս Հակոբյանը շարունակում է հանդիսանալ նշված ընկերության բաժնետեր, իսկ Խաչատուր Սուքիասյանի եղբորորդին՝ Արիկ

Սուքիասյանն ունեցել է մասնակցություն 2023 թվականին, որը դադարեցվել է:

Կառուցապատման համար «Սատուրնավան» ՍՊ ընկերությանը համայնքային հողամասի օտարման գործընթացի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ թեև հողամասը չի վաճառվել ավելի բարձր շուկայական արժեքով, հողամասը կադաստրային արժեքի 100%-ի չափով է վաճառվել՝ հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածը: Օրենսգրքի այդ հոդվածը սահմանում է, որ համայնքային հողամասի վաճառքի նվազագույն գինը՝ աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողամասի կադաստրային արժեքի 100 տոկոսից: Ուստի, օրենքով սահմանված կարգավորումներն, ըստ էության, պահպանված են եղել:

14. *««Ձեր տեսակը, մաքսիմում ինչ կարող է անել, հաչալն է». Ավինյանը՝ Մանուկ Սուքիասյանին»*, https://iravaban.net/472071.html, «Iravaban.net», ապրիլի 16, 2024

Հրապարակման և դրան կից տեսանյութի համաձայն՝ Տիգրան Ավինյանը ավագանու՝ ս/թ ապրիլի 16-ի նիստի ընթացքում նկատողություն է հայտարարել «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Մանուկ Սուքիասյանին և «Հանրապետություն» խմբակցության անդամ Անի Խաչատրյանին այն բանից հետո, երբ նիստում վիճաբանություն է սկսվել իշխող և ընդդիմադիր խմբակցությունների ներկայացուցիչների միջև: Միջադեպը և նիստի ընթացքում քաղաքապետի կողմից հնչեցված արտահայտությունները Հանձնաժողովը քննության է առել վարքագծի կանոնների ներքո:

Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները սահմանվել են Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով: Վարքագծի կանոնագիրքն ուժի մեջ է մտել սույն թվականի ապրիլի 1-ից:

Կանոնագրքով սահմանված նորմերի շրջանակներում էական են գնահատվել բարեկրթության և հարգալիրության սկզբունքից բխող՝ հանրության հետ հարաբերությունները կարգավորող նորմերը: Մասնավորապես, Կանոնագրքի 36-րդ կետը սահմանում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հանդես գալիս, ցանկացած իրավիճակում, ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն: Կանոնագրքի 37-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել վերադասի, անմիջական ղեկավարի (առկայության

դեպքում), այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց պատիվն ու արժանապատվությունը:

Հաշվի առնելով, որ ուսումնասիրության սուբյեկտը քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ է՝ Հանձնաժողովն անդրադարձել է նաև քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծին ներկայացվող միջազգային ստանդարտներին և պահանջներին՝ քաղաքական խոսքի և դրա սահմանափակումների համատեքստում:

Վարքագծի կանոնների առերևույթ խախտման հիմքով Հանձնաժողովը սույն թվականի հունիսի 4-ին Տ. Ավինյանի նկատմամբ հարուցել է վարույթ: Վարույթի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է սույն հաղորդման համապատասխան գլխի ներքո:

Միաժամանակ, հրապարակման և ավագանու հիշյալ նիստի տեսագրությունների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կողմից խիստ մտահոգիչ է դիտարկվել վիճաբանությանը մասնակից ավագանու անդամների վարքագիծը, որը սակայն դուրս է քննությունից՝ ավագանու անդամի վարքագծի կանոնների սահմանված չլինելու պատճառով: Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը դիմել է ավագանու խմբակցությունների ղեկավարներին՝ առաջարկելով քաղաքական բոլոր հարթակներում՝ թե՛ ավագանու նիստում, թե՛ հրապարակային այլ ելույթների ժամանակ պահպանել բարեվարքության և հարգալիրության օրենսդրական սկզբունքները, ցուցաբերել զսպվածություն, չչարաշահել քաղաքական խոսքի սահմանները և հետևողական լինել տեղական ինքնակառավարման մարմնի հեղինակության պահպանման հարցում:

15. *«45 000 դոլարով Volkswagen ID 6՝ Արարատի քաղաքապետին. մատակարարը Հովիկ Աղազարյանի որդին է»*, https://lurer.com/?p=568762&l=am, «Lurer.com», ապրիլի 17, 2024

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Արարատի քաղաքապետարանը 45 000 ԱՄՆ դոլարով ծառայողական մեքենա է ձեռք բերել համայնքապետ Ասլան Ավետիսյանի համար: Մեքենայի գնման տեխնիկական բնութագիրը գրվել է այնպես, որ ձեռք բերվի միայն էլեկտրական Volkswagen ID 6 Crozz ամենագնաց: Ավտոմեքենան մատակարարելու հայտ են ներկայացրել թվով 5 ընկերություններ: Մեքենան Արարատի քաղաքապետարանին է մատակարարելու Ազգային ժողովի պատգամավոր Հովիկ Աղազարյանի որդուն՝ Վահե Աղազարյանին պատկանող նորաստեղծ ընկերությունը: Ապրիլի 15-ին Արարատի քաղաքապետարանը ավտոմեքենայի ձեռքբերման պայմանագիր է կնքել «Շին կորտ» ՍՊ ընկերության հետ,

մատակարարման արժեքը կազմել է 18 միլիոն դրամ: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները մտահոգություն են հայտնել՝ նշելով, որ գնման հայտի տեխնիկական բնութագրի բովանդակությունը սահմանափակել է հավանական մասնակիցների մուտքը գործընթացին՝ խախտել մատչելիության սկզբունքը:

Հանձնաժողովն ուսումնասիրել է հրապարակման առարկան՝ համայնքի ղեկավարի շահերի բախման կարգավորումների համատեքստում: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ համայնքի ղեկավարի և Ազգային ժողովի պատգամավոր Հ. Աղազարյանի, ինչպես նաև վերջինիս որդու՝ Վ. Աղազարյանի միջև առկա չէ մերձավոր ազգակցական կապ: Միաժամանակ, բաց աղբյուրների ուսումնասիրմամբ վերջիններիս միջև այլ՝ գործարար, անձնական և գործնական հարաբերութունների վերաբերյալ տեղեկություններ չեն հայտնաբերվել: Միաժամանակ, հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սույն թվականի մայիսին դիմել է Պետական վերահսկողության ծառայությանը՝ խնդրելով ուսումնասիրության առարկա դարձնել ծառայողական ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով կազմակերպված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը՝ համոզվելու, որ վերջինիս շրջանակներում պահպանվել են վերաբերելի օրենսդրական պահանջները: Պետական վերահսկողության ծառայության կողմից տեղեկացվել է, որ ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի անբաժանելի մաս՝ տեխնիկական բնութագրում օգտագործվել են «Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև սույն օրենքի կիրարկումն ապահովող՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներին հակասող դրույթներ: Այդուհանդերձ, գնման ընթացակարգին «Շին կորտ» ՍՊ ընկերության մասնակցությունը սահմանափակող հանգամանքներ առկա չեն եղել:

17. *«Գազը՝ համայնքապետի եղբոր, ճանապարհների վերանորոգումը՝ եղբոր աներորդու ընկերություններից»*, https://hetq.am/hy/article/166148, «Հետք», ապրիլի 29, 2024

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Հրազդանի համայնքապետարանը ծառայողական ավտոմեքենաների լիցքավորման նպատակով գազի ձեռքբերումն իրականացնում է համայնքի ղեկավար Սևակ Միքայելյանի եղբոր՝ Մեխակ Միքայելյանի մասնակցությամբ «Լարգո-Վինչ» ՍՊ ընկերությունից: Միաժամանակ, Հրազդանի համայնքի ճանապարհների վերանորոգման աշխատանքների մի մասն իրականացնում է համայնքի ղեկավարի եղբոր հետ փոխկապակցված ընկերությունը՝ «Հրազդանի

ՃՇՇՁ» ԲԲԸ-ն: Ընկերության բաժնետերերը Մեխակ Միքայելյանի կնոջ մայրը և աներորդին են:

Հրապարակումը նաև նշում է, որ 2019 թվականի փետրվարի 25-ին Հրազդանի ավագանու N 08-Ն որոշմամբ «Վարչական շենքի սպասարկման և պահպանման» բյուջետային հիմնարկի տնօրեն է նշանակվել Ս. Միքայելյանի մորեղբայրը՝ Անդրանիկ Մեսրոպյանը:

Ի լրումն վերոգրյալի՝ հրապարակումն անդրադառնում է Սևակ Միքայելյանի կողմից իր հետ փոխկապակցված անձանց համայնքային հողամասերի օտարման որոշումներին՝ տրված 2020-2024 թվականներին:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է համալիր ուսումնասիրություն՝ քննարկված բոլոր դրվագներով: Արդյունքում՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ Հրազդան համայնքի ղեկավար Սևակ Միքայելյանն իր լիազորությունների շրջանակներում՝ որպես պատվիրատուի ղեկավար, 2022-2024 թվականներին կնքել է թվով 3 գազի մատակարարման պայմանագրեր օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձի՝ եղբոր բաժնեմասնակցությամբ «Լարգո-Վինչ» ՍՊ ընկերության հետ: Վերջինս 2022 և 2023 թվականներին համայնքային ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացման երկու պայմանագիր է կնքել եղբոր՝ Մ. Միքայելյանի հետ խնամիությամբ կապված անձանց բաժնեմասնակցությամբ՝ «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲ ընկերության հետ:

Հանձնաժողովն արձանագրել է, որ Սևակ Միքայելյանն իր լիազորությունների շրջանակներում կատարել է գործողություն (անգործություն), որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին օրենքով սահմանված կարգով գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով՝ այն է՝ շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով վերջինիս նկատմամբ սույն թվականի հուլիսի 4-ին հարուցվել է վարույթ: Վարութային գործընթացի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են սույն հաղորդման համապատասխան գլխի ներքո:

Հրապարակման մյուս դրվագի՝ Անդրանիկ Մեսրոպյանի նշանակման հարցի առնչությամբ ուսումնասիրությունն ընթացքի մեջ է:

Միաժամանակ, համայնքային հողամասերի օտարման գործընթացների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կողմից մտահոգիչ է գնահատվել

աճուրդային եղանակով վաճառված հողատարածքների վաճառքի գործընթացում ներգրավված անձանց շղթայական փոխկապակցվածությունը և հողերի վաճառքի ու գնման ընթացակարգերի հնարավոր խախտման վերաբերյալ հրապարակման մեջ առկա հիշատակումները: Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովը չունի համայնքային սեփականության տնօրինման, այդ թվում՝ աճուրդների կազմակերպման գործընթացի շրջանակներում օրենսդրական ընթացակարգերի պահպանման ստուգման լիազորություն և նկատի ունենալով նաև այն, որ կատարված արարքները (ընդունված որոշումները) կարող են պարունակել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ենթադրյալ հանցագործության հատկանիշներ՝ Հանձնաժողովը դիմել է ՀՀ Գլխավոր դատախազություն՝ քրեաիրավական նորմերով սահմանված հիմքերի առկայությունը պարզելու նպատակով:

18. *«Լևոն Քոչարյանի «ախոռանիկը» Ազգային ժողովի շենքի տարածքում հարվածել է Civic.am-ի լրագրողին»*, *https://civic.am/news/145248-davit-levonyan*, «Civic.am», ապրիլի 30, 2024

Հրապարակման համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավոր Լևոն Քոչարյանի օգնականն Ազգային ժողովի շենքի տարածքում հարվածել է «Civic.am» թերթի լրագրող Դավիթ Լևոնյանին: Դեպքի օրը Ա. Սուքոյանը հրապարակել է ուղերձ, որտեղ վերջինս հաստատել է տեղի ունեցած միջադեպը:

Հանձնաժողովը քննության է առել հրապարակման առարկան վարքագծի կանոնների համատեքստում: «Հանրային ծառայության մասին» օրենքի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները: Սույն թվականի ապրիլի 1-ից ուժի մեջ է մտել Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը, որը տարածվում է նաև ԱԺ պատգամավորի օգնականի՝ պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ: Կանոնագրքի՝ բարեկրթության և հարգալիրության սկզբունքից բխող կանոնները սահմանող բաժնի 1-ին գլխի 36-րդ կանոնը սահմանում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հանդես գալիս, ցանկացած իրավիճակում, ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն: 39-րդ կանոնը սահմանում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձը, պաշտոնեական (ծառայողական) լիազորություններն

իրականացնելիս, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, պարտավոր է չգործադրել ֆիզիկական ուժ կամ չներկայացնել դրա կիրառման սպառնալիք, չգործադրել հոգեբանական կամ այլ տեսակի բռնություն կամ չներկայացնել դրա կիրառման սպառնալիք, ինչպես նաև՝ զերծ մնալ այլ անձանց նկատմամբ ոտնձգության ցանկացած դրսևորումից: Ի թիվս վերագրյալի՝ Կանոնագիրքը սահմանել է հանրային հաղորդակցությանը վերաբերելի նորմեր: Այսպես, համաձայն 51-րդ կանոնի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է լրագրողների, լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս ցուցաբերել հարգալից վերաբերմունք, իր գործողություններով չխախտել լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները, չխոչընդոտել նրանց օրինական գործունեությանը և մասնագիտական աշխատանքին:

Դեպքի առթիվ Հանձնաժողովը սույն թվականի մայիսի 31-ին հարուցել է վարույթ՝ վարքագծի կանոնների առերևույթ խախտման հիմքով: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրապարակման հիման վրա ՀՀ Քննչական կոմիտեում, նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Հանձնաժողովը մինչև քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշման կայացումը կասեցրել է իր կողմից հարուցված վարույթը: Վարութային գործողությունների վերաբերյալ մանրամասները ներկայացված են սույն հաղորդման համապատասխան գլխի ներքո:

19. *«Լրագրողի նկատմամբ բռնություն կիրառած «ախոռաննիկը» նախկին դատավորի որդի է՝ «Զարկ» ռեստորանի տերը. Զարկը, բռնությունը, փաստորեն, քոչարյանների «բրենդն» է»*, *https://civic.am/news/145273-suqoyan-datavor-vordi-cec-levon-qocharyan*, «Civic.am», ապրիլի 30, 2024

Հրապարակման համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորի օգնական Ա. Սուքոյանը հանդիսանում է «Էս-Յան» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնետերը:

Հանձնաժողովն ուսումնասիրել է հրապարակման առարկան անհամատեղելիության պահանջների ներքո:

Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրմամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ Ա. Սուքոյանը, 2023 թվականի նոյեմբերի 22-ին ԱԺ պատգամավորի օգնականի պաշտոնը ստանձնելուց հետո «Էս-Յան» ՍՊ ընկերության իր բաժնեմասն օրենքով սահմանված՝ մեկամսյա ժամկետում չի հանձնել հավատարմագրային կառավարման, ինչպես նաև պաշտոնի ստանձնումից հետո շարունակել է զբաղեցնել կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի՝ տնօրենի պաշտոնը:

Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով

Հանձնաժողովը սույն թվականի սույն թվականի հունիսի 13-ին Ա. Սուքոյանի նկատմամբ հարուցել է վարույթ: Վարութային գործողությունների վերաբերյալ մանրամասները ներկայացված են սույն հաղորդման համապատասխան գլխի ներքո:

20. «ԲԴԽ *ղեկավարի կնոջ շահաբաժինը 2023-ին 2022 թ.-ի նկատմամբ ավելացել է 8 անգամ»*, https://armlur.am/1364168/, «Armlur.am», մայիսի 2, 2024

Հրապարակման համաձայն՝ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի կինը Գ. Մինասյանի բաժնեմասնակցությամբ «Էյ Էմ» իրավաբանական ընկերության տնօրենն ու 40 % բաժնետերն է: Կարեն Անդրեասյանի կինը միաժամանակ աշխատում է Արտաքին գործերի նախարարությունում:

Հանձնաժողովն ուսումնասիրության է առել հրապարակումն անհամատեղելիության պահանջների համատեքստում: Իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2023 թվականի օգոստոսի 10-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 10-ը Եվա Առաքելյանն Արտաքին գործերի նախարարությունում կատարել է քաղաքացիական աշխատանքներ: Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝ քաղաքացիական աշխատանքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է պայմանագրային հիմունքներով: Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է քաղաքացիական աշխատանք կատարող անձանց վրա միայն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում: Վերոգրյալից բխում է, որ հոդված 31-ով սահմանված անհամատեղելիության պահանջները չեն տարածվում քաղաքացիական աշխատանք կատարող անձանց նկատմամբ:

Հրապարակումն անդրադարձ է կատարել նաև վերջինիս եկամուտներին՝ նշելով, որ նախորդ տարվա համեմատ 31.4 միլիոն դրամի աճ է գրանցվել: Եվա Առաքելյանի՝ 2023 թվականի տարեկան հայտարարագրի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ ստացված եկամուտը «Էյ Էմ» իրավաբանական ընկերության շահաբաժինն է:

21. *«ՔՊ-ի խոսափող Հ1-ով հաղորդում վարելով՝ զբաղվում եք Ձեր պաշտոնի հետ անհամատեղելի գործունեությամբ»*, https://168.am/2024/05/02/2037532.html, «168.am», մայիսի 2, 2024

Հրապարակման առարկա է հանդիսացել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ նաև՝ ՀՌՀ) նախագահ Տ.Հակոբյանի կողմից «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ կողմից հեռարձակվող «Dialogue» հաղորդաշարը վարելու հանգամանքը, ինչին Ազգային ժողովի 2024 թվականի մայիսի 2-ի նիստում անդրադարձել է պատգամավոր Լիլիթ Գալստյանը՝ որակելով դա որպես ՀՌՀ անդամին Սահմանադրությամբ ներկայացվող քաղաքական զսպվածության պահանջի խախտում:

Հանձնաժողովը քննության է առել նշված հրապարակումը ՀՌՀ անդամին Սահմանադրությամբ և ոլորտային օրենսդրությամբ ներկայացվող պահանջների համատեքստում: Մեդիա հրապարակման ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ Տ. Հակոբյանը, ով 2022 թվականի սեպտեմբերի 16-ի ՀՌՀ որոշմամբ զբաղեցնում է ՀՌՀ նախագահի պաշտոնը, 2023 թվականի հոկտեմբերի 28-ից հանդիսանում է Հանրային հեռուստաընկերության կողմից պատրաստվող և հեռարձակվող «Dialogue» հաղորդաշարի համահաղորդավար: Միաժամանակ, հաղորդաշարի թողարկումների և դրանց բովանդակության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն հիմնականում անդրադառնում է քաղաքական բնույթի հարցերի:

ՀՌՀ անդամի անհամատեղելիության պահանջները նախատեսված են Սահմանադրության 197-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով: Համաձայն սույն հոդվածի 4-րդ մասի՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Վերջիններիս համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ: Հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն: Սահմանադրության նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պայմաններից որևէ մեկը խախտելու դեպքում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 153-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համադրումից հետևում է, ՀՌՀ անդամի լիազորությունների դադարեցման վերաբերյալ Հանձնաժողովը կարող է միջնորդություն ներկայացնել այն դեպքում, երբ վերջինիս կողմից խախտվել է Սահմանադրության 95-րդ հոդվածով պատգամավորների համար սահմանված

անհամատեղելիության պահանջներից որևէ մեկը՝ այն է՝ կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, առևտրային կազմակերպություններում պաշտոն զբաղեցնելը, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը, վճարովի այլ աշխատանք կատարելը (բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից):

Այդ մասին է վկայում նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքների նշված իրավահարաբերությունները կարգավորող նորմերի վերլուծությունը: Այսպիսով, թեև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 153-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվել է «Սահմանադրության պայմաններից որևէ մեկը խախտելու» հիմքով Հանձնաժողովի համապատասխան եզրակացությունն Ազգային ժողով ներկայացնելու հնարավորություն, Հանձնաժողովի գործունեությունը կարգավորող ոլորտային՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով՝ Հանձնաժողովը նշված հնարավորությունը կարող է իրացնել բացառապես «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների քննության արդյունքում ընդունած եզրակացությունների մասով:

ՀՌՀ անդամի քաղաքական զսպվածության դրսևորման պահանջը ամրագրված է նաև «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով, սակայն ո՛չ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով, և ո՛չ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով որևէ մարմնի ուղղակի լիազորություն տրված չէ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի կողմից՝ քաղաքական զսպվածության սահմանադրական պահանջը խախտելու հիմքով հարցը քննելու և/կամ ՀՌՀ անդամի լիազորությունները դադարեցնելու համար Ազգային ժողով միջնորդություն ներկայացնելու: Հատկանշական է, որ անկախ պետական այլ մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համանման խնդիր առկա է նաև նրանց անդամների լիազորությունների դադարեցման կապակցությամբ միջնորդություն ներկայացնելու կարգավորումներում:

Հանձնաժողովն իրավական սույն խնդրին անդրադարձել է անհամատեղելիության պահանջների ինստիտուտի խնդիրների վերլուծության համատեքստում՝ Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրից բխող աշխատանքների շրջանակներում: Միաժամանակ, Հանձնաժողովը դիմել է նաև Ազգային ժողով՝ հայցելով օրենսդրի դիրքորոշումը՝ ՀՌՀ անդամին Սահմանադրությամբ և ոլորտային օրենքով ներկայացվող քաղաքական զսպվածության դրսևորման պահանջի ապահովման և այդ

պահանջի խախտման հիմքով Ազգային ժողով համապատասխան միջնորդություն ներկայացնելու հարցի շուրջ առկա իրավական խնդրի առնչությամբ:

22. *«ՔՊ-ական պաշտոնյաները արդեն աստղաբաշխական գումարներ են ստանում օտարերկրյա ֆիրմաներից»*, https://armlur.am/1364251/, «Armlur.am», մայիսի 3, 2024

Հրապարակման համաձայն՝ Թալինի քաղաքապետ Տավրոս Սափեյանն իր հայտարարագրի «նվերներ» բաժնում նշել է, որ 2023 թվականին Twins Buick Gmc ընկերությունից որպես նվիրատվություն է ստացել 49.9 հազար ԱՄՆ դոլար:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ Տավրոս Սափեյանը 2023 թվականին ընկերոջ՝ Տիգրան Սաֆարյանի ղեկավարած և վերջինիս մասնակցությամբ Twins Buick Gmc ընկերությունից որպես նվիրատվություն է ստացել շուրջ 50 000 ԱՄՆ դոլար: Ուսումնասիրության շրջանակներում պարզվել է, որ նույն տարում՝ 2023 թվականի հունիսի 28-ին Թալին համայնքի ավագանին, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետը և համայնքի ղեկավարի առաջարկը, Տիգրան Սաֆարյանին շնորհել է Թալին համայնքի «Պատվավոր քաղաքացի» կոչում: Որոշմանը մասնակցել և քվեարկել է նաև համայնքի ղեկավար Տ. Սափեյանը:

Ուսումնասիրության հետագա ընթացքն ապահովելու նպատակով Հանձնաժողովը սույն թվականի հունիսի 14-ին պարզաբանում է հայցել Տ. Սափեյանից: Գործի քննությունն ընթացքի մեջ է:

23. *«Արտաշատի ավագանու անդամի ընկերությունը՝ նույն համայնքի սուբվենցիոն ծրագրերի հաղթող»*, https://hetq.am/hy/article/166474, «Հետք» լրատվական, մայիսի 13, 2024

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Արտաշատի համայնքապետարանը 2022 և 2023 թվականներին գնման պայմանագրեր է կնքել Արտաշատ համայնքի ավագանու անդամ Նարեկ Բաղդասարյանի մասնակցությամբ՝ «Գարանտ Կապիտալ Ստրոյ» ՍՊ ընկերության հետ: Նշված պայմանագրերը կնքվել են՝ ի դեմս համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանի: Հաշվի առնելով, որ «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներով ավագանու անդամի համար սահմանված չէ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելք՝ Ն. Բաղդասարյանի բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպության՝ համայնքապետարանի կողմից պատվիրված գնման գործընթացներին մասնակցությունը և դրանց արդյունքում պայմանագրերի կնքումը քննարկվել է

համայնքի ղեկավարի շահերի բախման համատեքստում:

«Հանրային ծառայության մասին» օրենքի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է նաև որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի քաղաքական հարաբերություններ: Քաղաքական հարաբերությունները ներառում են որևէ կուսակցության մասնակցության կամ տվյալ կուսակցության այլ անդամների հետ ունեցած գործարար կամ այլ գործնական կամ անձնական կապի ուժով ծագող հարաբերությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կառլեն Մկրտչյանը և Նարեկ Բաղդասարյանը հանդիսանում են ավագանու՝ միևնույն խմբակցության անդամներ՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ վերջիններիս միջև, օրենքի իմաստով, առկա է քաղաքական փոխկապակցվածություն: Վերոգրյալով պայմանավորված՝ համայնքի ղեկավար Կ. Մկրտչյանը, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, կրել է շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով գրավոր հայտարարություն ներկայացնելու պարտավորություն:

Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով՝ այն է՝ շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով վերջինիս նկատմամբ որոշել է հարուցել վարույթ:

Ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովը պարզել է նաև, որ «Գարանտ Կապիտալ Ստրոյ» ՍՊ ընկերությունը մասնակցել է նաև Արարատի մարզպետարանի կողմից պատվիրված գնման գործընթացներին և կնքել շինարարական աշխատանքների իրականացման պայմանագրեր: Գնման պայմանագրերն Արարատի մարզպետարանի կողմից կնքվել են ի դեմս աշխատակազմի գլխավոր քարտուղար Արթուր Մկրտչյանի, ով նույնպես հանդիսանում է Արտաշատ համայնքի ավագանու անդամ:

Հանձնաժողովը Ա. Մկրտչյանի՝ գնման գործընթացներին մասնակցությունը և ուսումնասիրության առարկա պայմանագրերի կնքումը հարկ է համարում քննարկել գլխավոր քարտուղարի՝ օրենքով սահմանված շահերի բախման կարգավորումների համատեքստում: Այն դեպքում, երբ վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը (անգործությունը) կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է 10-օրյա

ժամկետում իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին, որը ենթակա է քննարկման անհապաղ: Հանձնաժողովը, հիմք ընդունելով վերոգրյալը, սույն թվականի հունիսի 28-ին դիմել է Արարատի մարզպետարան՝ պարզելու, թե արդյո՞ք նշված հանգամանքների վերաբերյալ գլխավոր քարտուղարի կողմից մարզպետին ներկայացվել է համապատասխան հայտարարություն: Մարզպետարանի կողմից դեռևս պատասխան չի ստացվել:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է նաև, որ 2022 թվականի փետրվարի 8-ին ընդունվել է Արտաշատ համայնքի ղեկավարի տեղակալներ նշանակելու մասին Արտաշատ համայնքի ավագանու N 11-Ա որոշումը, որով ավագանու անդամ Արթուր Մկրտչյանի հայրը՝ Սուրեն Խաչատուրի Մկրտչյանը նշանակել է Արտաշատ համայնքի ղեկավարի պաշտոնում: Որոշմանը մասնակցել և քվեարկել է նաև Ա. Մկրտչյանը: Հարկ է նշել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 21.1 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքի ավագանու անդամը «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված (շահերի բախման) իրավիճակում պարտավոր է չմասնակցել ավագանու որոշումների քվեարկությանը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ավագանու անդամը պարտավոր է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքում անհապաղ գրավոր տեղյակ պահել ավագանուն կամ համայնքի ղեկավարին: Վերոգրյալից ելնելով և հաշվի առնելով այն, որ ավագանու անդամի շահերի բախման հարցը քննելու իրավասությունը տրված է համայնքի ղեկավարին և ավագանուն՝ Հանձնաժողովը սույն թվականի հունիսի 28-ին դիմել է համայնքի ղեկավարին՝ խնդրելով քննության առարկա դարձնել Արտաշատ համայնքի ավագանու անդամ Արթուր Մկրտչյանի կողմից շահերի բախման կարգավորումների առերևույթ խախտման հարցը:

24. *«Օրենքը «օրենք չէ», եթե բացառություններ չունի ՔՊ պատգամավորների համար. Թագուհի Ղազարյանի ոչ ստեղծագործական աշխատանքի հետքերով»*, *https://armlur.am/1367204/*, «Armlur.am», մայիսի 14, 2024

Հրապարակման համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Ղազարյանը, պատգամավորական մանդատին զուգահեռ, զբաղվում է նաև նյութերի թվայնացմամբ, խմբագրմամբ, որի համար 2023 թվականին «Գրանիշ» գրական ակումբի կողմից ստացել է այդ տարվա ընթացքում արխիվային նյութերի թվայնացման, խմբագրման ու նորովի մեկնաբանման համար մրցանակ: Կազմակերպությունը՝ գրական ակումբը, որտեղ գործունեություն է ծավալում Թ. Ղազարյանը, գործում է ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ:

Հանձնաժողովն ուսումնասիրել է հրապարակման առարկան Ազգային ժողովի պատգամավորներին ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքով ներկայացվող անհամատեղելիության պահանջների ներքո:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտել է, որ գրական ստեղծագործությունների մեկնաբանումը, «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 14-րդ մասի իմաստով, համարվում է ստեղծագործական աշխատանք: Միաժամանակ, ստեղծագործությունների թվայնացման և խմբագրման առնչությամբ հարկ է նշել, որ Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական շտեմարանների ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված աշխատանքների իրականացման համար Թ. Ղազարյանը վարձատրություն կամ այլ եկամուտ ստացել, հետևապես՝ օրենքի իմաստով այլ վճարովի աշխատանք կատարելու արգելքի խախտում չի արձանագրվել:

25. *«Փաստորեն, նախկինները շատ բան ունեին ՔՊ-ից սովորելու»*, *https://armlur.am/1368247/*, «Armlur.am», մայիսի 17, 2024

Հրապարակման համաձայն՝ Եսթեր Կարապետյանը, Կառավարությանը ենթակա մարմնում զբաղեցնելով վարչության պետի պաշտոն, վերջին տարիներին միաժամանակ աշխատել է ևս 4 այլ կառույցներում:

Թեև հրապարակմամբ ներկայացված տեղեկությունները՝ կապված Ե. կարապետյանի պաշտոնավարման հետ, ոչ ստույգ էին, Հանձնաժողովը, ուսումնասիրելով վերջինիս աշխատանքային գործունեությունը, պարզել է, որ Ե. Կարապետյանը 2024 թվականի մարտի 12-ից աշխատում է ԿԳՄՍ նախարարությունում՝ որպես գլխավոր մասնագետ: Միաժամանակ, Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրմամբ պարզվել է, որ Ե. Կարապետյանը, նախկինում աշխատելով ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում, համատեղել է քաղաքացիական ծառայության պաշտոնն այլ աշխատանքի հետ՝ աշխատելով «Լիմիթլես ասեթ մենեջմենթ» ՓԲ ընկերությունում՝ որպես պլանավորման և ֆինանսական վերլուծությունների գլխավոր մասնագետ, այդուհանդերձ, ներկա պահին անհամատեղելիության պահանջի խախտումը փաստացի վերացված է՝ նշված պաշտոնի դադարեցման հիմքով:

Ի լրումն վերոգրյալի՝ քաղաքացիական ծառայողների անհամատեղելիության պահանջներին առնչվող դեպքերը ենթակա են քննության «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով՝ համապատասխան գերատեսչության կողմից և դուրս են Հանձնաժողովի քննության շրջանակներից:

26. *«ԶՊՄԿ-ի կողմից 70 միլիոն դրամի նվիրատվությունը վարչապետի տիկնոջ հիմնադրամին կոռուպցիոն ռիսկ է պարունակում. Նաիրի Սարգսյան»*, https://www.tert.am/am/news/2024/05/21/zpmk/4127106, «Tert.am», մայիսի 21, 2024

Հրապարակման առարկա է հանդիսացել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամի կողմից «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամին 70 մլն ՀՀ դրամ նվիրատվության կատարումը, ինչը, հաշվի առնելով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կանոնադրական կապիտալում Հայաստանի Հանրապետության պետական մասնակցությունը, դիտվել է կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից խոցելի:

Հանձնաժողովը հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ նշված ընկերությունը պարբերաբար սոցիալական ծրագրերի իրականացման շրջանակներում աջակցել է կրթական տարբեր հաստատությունների, բարեգործական և հասարակական կազմակերպությունների, ինչը վկայում է նաև Ընկերության պաշտոնական կայքէջում տեղադրված ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրությունը: Հանձնաժողովն ուսումնասիրության արդյունքում պարզել է նաև, որ հրապարակման մեջ քննարկվող նվիրատվությունը «ԶՊՄԿ» բարեգործական հիմնադրամի կողմից տրամադրվել է «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամին՝ համատեղ կրթական ծրագրի իրականացման նպատակով՝ «Իմ Քայլը» հիմնադրամի և «ԶՊՄԿ» բարեգործական հիմնադրամների միջև 2023 թվականի ապրիլի 21-ին ստորագրված համագործակցության հուշագրի հիման վրա: Միաժամանակ, ուսումնասիրելով Ընկերության և «ԶՊՄԿ» բարեգործական հիմնադրամի կանոնադրությունները՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ դրանցում հստակ սահմանված չեն այնպիսի կառուցակարգեր, որոնք թույլ կտան կատարվող նվիրատվությունների գործընթացում զսպել քաղաքական ազդեցության (միջամտության) կամ հնարավոր այլ կոռուպցիոն ռիսկերի առաջացման հնարավորությունը: Հանձնաժողովը նման ռիսկերի առաջացման հավանականությունը գնահատել է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ԶՊՄԿ» ընկերության և «ԶՊՄԿ» բարեգործական հիմնադրամի կանոնադրություններով հստակ սահմանված չեն վերջիններիս կողմից ֆինանսավորվող ծրագրերի ընտրության չափորոշիչները (պայմանները) և ընթացակարգերը, նշված ծրագրերի ֆինանսավորման գործընթացի թափանցիկությունը և հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմները, ֆինանսավորման տրամադրմանն ուղղված որոշումների կայացման ընթացքում

կոլեգիալության սկզբունքի ապահովման հարցերը: Ընկերության կանոնադրության ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ սահմանված չէ որևէ պահանջ՝ ընկերության տնօրենների խորհրդում անկախ անդամների ընդգրկման վերաբերյալ, ինչպիսի պահանջ ամրագրված է G20/Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության կորպորատիվ կառավարման սկզբունքներով: Վերոգրյալի հիմքով՝ Հանձնաժողովը դիմել է «ԶՊՄԿ» ընկերությանը՝ կանոնադրությունների վերանայմամբ դրանցում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի զսպման, հակազդման որոշակի կառուցակարգերի նախատեսման, կորպորատիվ կառավարման սկզբունքների տեղայնացման հարցը լուծելու առաջարկով:

27. *Ոստիկանապետ, ՆԳՆ նախարարի տեղակալ Արամ Հովհաննիսյանի ու նրա որդիների հայտարարագրերից տպավորիչ դրվագներ»*, https://mediafactory.am/our-products/tegh, «168.am», մայիսի 28, 2024

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ ՆԳ նախարարի տեղակալ Արամ Հովհաննիսյանը «լակոտ» է անվանել անհնազանդության ակցիաներ իրականացնողներին: Մեկ այլ հրապարակման համաձայն՝ հունիսի 9-ին Ազգային ժողովի դիմաց սկսված լարված իրավիճակում լեզվակռիվ է սկսվել Բագրատ Սրբազանի ու ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանի միջև, որի ընթացքում ոստիկանապետը փորձել է հարվածել Բագրատ Սրբազանին, սակայն ներկաները թույլ չեն տվել՝ բռնելով վերջինիս ձեռքը:

Հանձնաժողովը քննության է առել հրապարակման առարկան վարքագծի կանոնների համատեքստում: «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները:

2024 թվականի ապրիլի 1-ից ուժի մեջ է մտել Պետական (այդ թվում՝ քաղաքական) պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները սահմանված են Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով հաստատված՝ Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը, որի դրույթները տարածվում են նաև նախարարի տեղակալի՝ պետական քաղաքական պաշտոն

զբաղեցնող անձանց նկատմամբ:

Կանոնագրքի՝ բարեկրթության և հարգալիրության սկզբունքից բխող կանոնները ներկայացնող բաժնի 1-ին գլխի 36-րդ կանոնը սահմանում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հանդես գալիս, ցանկացած իրավիճակում, ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն: Նույն գլխի 37-րդ կանոնը սահմանում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել վերադասի, (...) հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց պատիվն ու արժանապատվությունը:

Վարքագծի կանոնների առերևույթ խախտման հիմքով Հանձնաժողովը որոշել է Ա. Հովհաննիսյանի նկատմամբ հարուցել վարույթ:

28. *«Գեղարքունիքի մարզպետը սպառնացել է՝ հանրահավաքին մասնակցեն՝ աշխատանքից կզրկվեն»*, https://www.tert.am/am/news/2024/06/06/hraparak/4135551, «Tert.am», հունիսի 6, 2024

Հրապարակման համաձայն՝ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների հետ հանդիպման ժամանակ վերջիններիս արգելել է մասնակցել «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման հանրահավաքին՝ սպառնալով մասնակցության դեպքում զրկել նրանց աշխատանքից:

Հրապարակման առարկան քննության է առնվել վարքագծի կանոնների համատեքստում: Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 01 որոշմամբ սահմանվել է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց (այսուհետ՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձ) վարքագծի կանոնագիրքը, որի դրույթները տարածվում են մարզպետի՝ պետական վարչական պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ: Նշված հրապարակումը դեռևս գտնվում է ուսումնասիրության փուլում:

29. *«Կոռուպցիան Դիլիջանում, «արու» համայնքապետը հող է ծախել հարազատ եղբորը. Ոսկան Սարգսյան»*, https://lurer.com/?p=579524&l=am, «Lurer.com», հունիսի 8, 2024

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի՝ 2024 թվականի մայիսի 2-ի թիվ 538-Ա որոշմամբ՝ 2024 թվականի հունիսի 3-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի 1650.0 քմ մակերեսով հողամասը շուկայական արժեքից ցածր՝ 11.550.000 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում նույն՝ առավելագույն գնով, հաղթող է ճանաչվել համայնքի ղեկավարի եղբայրը՝ Սասուն Սարգսյանը:

Սույն հրապարակումը Հանձնաժողովն ուսումնասիրության է առել համայնքի ղեկավարի շահերի բախման կարգավորումների համատեքստում: Ուսումնասիրությունն ընթացքի մեջ է:

30. *«Մեկ տարի մեքենան վարելու իրավունքից զրկված Առուշ Առուշանյանը «000 OO 00» համարանիշի ավտոմեքենայով «վոյաժների մեջ է»»* https://armlur.am/1375453/, «Armlur.am», հունիսի 10, 2024:

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ սույն թվականի մարտի 13-ին Պարեկային ծառայության՝ Երևան քաղաքի գնդում օպերատիվ տեղեկություններ են ստացվել առ այն, որ «Mercedes G 63» մակնիշի «000 OO 00» համարանիշի ավտոմեքենայի վարորդն այն վարել է ոչ սթափ վիճակում: Մեքենայի ղեկին եղել է Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը, ով զրկվել է ավտոմեքենա վարելու իրավունքից: Ըստ հրապարակման՝ Ա. Առուշանյանը, մեքենա վարելու իրավունքից զրկված լինելով հանդերձ, շարունակում է վարել նշված համարանիշով ավտոմեքենան: Հանձնաժողովը հրապարակման հիման վրա սույն թվականի հունիսին ուսումնասիրություն է նախաձեռնել՝ համայնքի ղեկավարի նկատմամբ կիրառելի վարքագծի կանոնների համատեքստում: Ուսումնասիրությունը դեռևս ընթացքի մեջ է:

31. *«11 մլն դրամ կրիպտոեկամուտ և պետական աջակցություն ստացող ընտանեկան բիզնես. Տիգրան Ավինյանի հայտարարագիրը»*, https://factor.am/782387.html, «Factor.am», հունիսի 11, 2024

Համաձայն հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Տիգրան Ավինյանը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, ինչպես նաև Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամների հոգաբարձուների խորհրդի նախագահն է: Տիգրան Ավինյանի կինը՝ Մարիամ Պահլավունին «ՍԱՅԲԵՐ ՎԻԺԸՆ» ՍՊ ընկերության տնօրենն է: Ընկերությանը 10 մլրդ դրամ պետական աջակցություն է տրամադրվել:

Սույն հրապարակումը Հանձնաժողովն ուսումնասիրել է

անհամատեղելիության պահանջների և շահերի բախման կարգավորումների համատեքստում: «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

«Հիմնադրամների մասին» օրենքի համաձայն՝ հիմնադրամ է համարվում քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպությունը (...): Նույն օրենքի համաձայն՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը, համանախագահները և մյուս անդամները չեն համարվում հիմնադրամում պաշտոն զբաղեցնող անձ և իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են հոգաբարձուների խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ:

Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ նշված հիմնադրամներից Տ. Ավինյանը որևէ վարձատրություն կամ եկամուտ չի ստացել, հետևապես՝ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտում չի արձանագրվել:

Միաժամանակ, պարզվել է, որ «ՍԱՅԲԵՐ ՎԻԺԸՆ» ՍՊԸ-ն «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում աջակցության մասին» օրենքով սահմանված արտոնությունից օգտվելու համար հավաստագիր է ստացել 2017 թվականի դեկտեմբերի 27-ին: Հավաստագրի տրամադրման ժամանակ Տ. Ավինյանը չի հանդիսացել Կառավարության անդամ, ուստի չէր կարող որևէ մասնակցություն ունենալ հավաստագրի տրամադրման գործընթացում:

32. *«Տեղի համայնքապետը 378 մլն դրամի պայմանագրեր է կնքել եղբոր ԱՁ-ի հետ»*,https://hetq.am/hy/article/167370, «Հետք», հունիսի 13, 2024

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Դ. Ղուլունցն իր հետ փոխկապակցված անձի՝ եղբոր բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպության հետ կնքել է գնման թվով 10 պայմանագրեր:

Հանձնաժողովը քննության է առել հրապարակման առարկան՝ շահերի

բախման կարգավորումների համատեքստում: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Դ. Ղուլունցի՝ համայնքապետի պաշտոնում ընտրվելուց հետո, «Սասուն Ղուլունց Արամայիսի» ԱՁ-ի հետ համայնքապետարանը կնքել է ընդհանուր թվով 10 գնման պայմանագիր: Համայնքապետարանը նշված պայմանագրերը կնքել է՝ ի դեմս համայնքի ղեկավար Դ. Ղուլունցի: Պայմանագրերից 5-ը կնքվել են 2022 թվականին, 3-ը՝ 2023 թվականին, իսկ պայմանագրերից 2-ը՝ 2024 թվականին:

Հանձնաժողովը, առկա փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում արձանագրել է, որ Տեղ համայնքի ղեկավար Դ. Ղուլունցը, 2023 և 2024 թվականներին ստորագրելով գնման թվով 5 պայմանագրեր իր հետ օրենքի իմաստով փոխկապակցված անձի՝ եղբոր՝ «Սասուն Ղուլունց Արամայիսի» ԱՁ-ի հետ, իր լիազորությունների շրջանակներում կատարել է գործողություն (անգործություն), որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման: Միաժամանակ, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, վերջինս պարտավորություն է կրել շահերի բախման իրավիճակի առկայության վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնել Հանձնաժողով:

Հանձնաժողովը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով, այն է՝ շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով, սույն թվականի հուլիսի 4-ին վերջինիս նկատմամբ հարուցել է վարույթ: Վարութային գործընթացների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են սույն հաղորդման համապատասխան գլխի ներքո:

33. *«Հայր և որդի Հակոբյանները Հրազդանի հողերն են տնօրինում»*,https://hetq.am/hy/article/167370, «Հրապարակ», հունիսի 13, 2024

Համաձայն հրապարակման՝ Հրազդան համայնքի վարչական շրջաններում գտնվող հողամասերի, շենքերի և շինությունների չափագրման և սահմանված կարգով հատակագծերի կազմման ծառայությունը տարիներ շարունակ իրականացրել է անհատ ձեռնարկատեր Աշոտ Հակոբյանը, ում որդին՝ Գուրգեն Հակոբյանը նույն համայնքի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետն է: Ըստ հրապարակման՝ Հրազդանի համայնքապետարանը 2020 թվականին 2 մլն 300 հազար դրամի պայմանագիր է կնքել տվյալ ԱՁ-ի հետ, 2021 թվականին՝ 1 մլն 700 հազար, 2022 թվականին՝ 5 մլն 250 հազար, 2023 թվականի մարտի 14-ին՝ 4

մլն 800 հազար դրամի: Միաժամանակ, Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Սահմանադրության հրապարակ 6 հասցեում գտնվող 262.49 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն աճուրդային կարգով օտարվել է Գուրգեն Հակոբյանի եղբորը՝ Արթուր Աշոտի Հակոբյանին:

Գնման պայմանագրերի և գնման գործընթացներին առնչվող փաստաթղթերի, Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ համայնքապետարանի և Աշոտ Հակոբյան ԱՁ-ի միջև կնքված պայմանագրերի և համապատասխան գնումների ընթացակարգերի շրջանակներում Գուրգեն Հակոբյանը չի խախտել շահերի բախման կարգավորումները, վերջինս սահմանված կարգով ներկայացրել է ինքնաբացարկ և չի մասնակցել հայտերի գնահատմանը՝ ներկայացնելով շահերի բախման վերաբերյալ հայտարարություն: Հրապարակման մեջ հիշատակվող՝ գնման մյուս ընթացակարգերին Գ. Հակոբյանը որևէ մասնակցություն չի ունեցել:

Հրապարակման մյուս դրվագի՝ համայնքային հողամասի օտարման գործընթացի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Գ.Հակոբյանը աճուրդի կազմակերպման գործընթացում ևս ներգրավվածություն կամ մասնակցություն չի ունեցել, հետևապես՝ վերջինիս կողմից շահերի բախման կարգավորումների խախտման արձանագրման հիմքեր առկա չեն եղել:

34. *«18 մլն աշխատանքի եկամուտ. «նավակ ճոճող» Վիլեն Գաբրիելյանի ունեցվածքը»*, https://armlur.am/1378483/, «Armlur.am», հունիսի 21, 2024

Համաձայն հրապարակման՝ Ազգային Ժողովի պատգամավոր Վիլեն Գաբրիելյանը հանդիսանում է «Գարդման-Շիրվան-Նախիջևան» համահայկական միություն հասարակական կազմակերպության նախագահը: Հանձնաժողովն ուսումնասիրել է հրապարակման առարկան ԱԺ պատգամավորին ներկայացվող անհամատեղելիության պահանջների շրջանակներում: Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Վիլեն Գաբրիելյանը նշված հասարակական կազմակերպությունից չի ստացել վարձատրություն կամ եկամուտ: Միաժամանակ, հասարակական կազմակերպություններն ունեն ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ և պատգամավորների համար առկա չէ ոչ առևտրային կազմակերպություններին անդամակցության կամ դրանցում պաշտոն զբաղեցնելու օրենսդրական արգելք, եթե նշվածը չի ենթադրում վարձատրության ստացում:

Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում

Հանձնաժողովը, համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, հետևում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից Օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը:

Սույն գործառույթի ապահովման, ինչպես նաև պետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման շրջանակներում Հանձնաժողովն իրականացնում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների պահպանման ստուգում:

2022 թվականին որպես ուսումնասիրության սուբյեկտ ընտրվել են օրենսդիր իշխանության ներկայացուցիչները՝ Ազգային ժողովի թվով 108 պատգամավորները՝ հիմք ընդունելով Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի (այսուհետ՝ ԳՐԵԿՈ) կողմից ընդունված՝ Հայաստանի Հանրապետության չորրորդ փուլի գնահատման զեկույցով սահմանված պաշտոնների շրջանակը և Հանձնաժողովի տարեկան աշխատանքային ծրագիրը:

2023 թվականին ԳՐԵԿՈ-ի՝ Հայաստանի Հանրապետության գնահատման 5-րդ փուլի միջանկյալ զեկույցով առաջարկվել է միջոցներ ձեռնարկել՝ կանխելու ՀՀ կառավարության և կառավարությանը ենթակա մարմինների՝ առևտրային կազմակերպություններում պաշտոններ զբաղեցնելու, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ դրա շրջանակներում այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցումը: Ի ապահովումն Հայաստանի ստանձնած պարտավորությունների և սույն հանձնարարականի կատարման՝ Հանձնաժողովը 2023 թվականին իրականացրել է ՀՀ կառավարության և կառավարությանը ենթակա մարմինների անհամատեղելիության պահանջների պահպանման ստուգում: Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության է ենթարկվել գործադիր իշխանության՝ կառավարության, կառավարության ենթակա մարմինների, վարչապետի ենթակա մարմինների ղեկավար կազմը՝ ընդհանուր թվով 108 անձ:

Կարևորելով գործընթացի շարունակականությունը՝ Հանձնաժողովը 2024 թվականին նախաձեռնել է տարածքային և տեղական մակարդակում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկում:

Մշտադիտարկումն իրականացվում է Հանձնաժողովի հաստատված պլանի

համաձայն, որը Հանձնաժողովի կողմից հրապարակվել է սույն թվականի հունիսի 5-ին՝ http://cpcarmenia.am/hy/news/item/2024/06/05/1/: Ուսումնասիրության սուբյեկտ են սահմանվել ՀՀ բոլոր խոշորացված համայնքների ղեկավարները, ինչպես նաև ՀՀ բոլոր մարզպետները և նրանց տեղակալները՝ ընդհանուր թվով 102 պաշտոնատար անձ:

Մշտադիտարկման նպատակն է ուսումնասիրության և տվյալների համադրության միջոցով դուրս բերել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում առկա անհամատեղելիության պահանջների խախտումները, վերլուծել խախտումներ թույլ տալու պատճառները և, որպես վերջնանպատակ, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ նվազեցնելու խախտումների քանակը, ինչպես նաև իրազեկման և վերապատրաստումների միջոցով հնարավորինս կառավարելի դարձնելու անհամատեղելիության պահանջների պահպանմանն առնչվող խնդիրները:

Մշտադիտարկման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար կհրապարակվի Հանձնաժողովի կայքէջում:

1.3 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման միասնական համակարգի ներդնումը

2024 թվականի ապրիլի 11-ի՝ ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-148-Ն, «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-149-Ն, «Պետական արարողակարգի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-150-Ն օրենքներով օրենսդիրը վերանայեց հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքին առնչվող իրավակարգավորումները:

««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում կատարված փոփոխությունները հիմնականում վերաբերել են թույլատրելի նվերների շրջանակի վերանայմանը. ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերն այլևս

չեն համարվում նվեր, իսկ օրենքով սահմանված դեպքերում որպես պարգևատրում, պետական պարգև կամ խրախուսանքի միջոց տրամադրվող գույքը, այդ թվում՝ վարչապետի կողմից որպես պարգևատրում տրվող զենքը ներառվել է թույլատրելի նվերների ցանկի մեջ: Չհաշվառվող նվերների շարքից հանվել են արարողակարգային նվերները, որոնք արդեն ենթակա են հաշվառման: ««Պետական արարողակարգի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքով նախատեսվել է, որ Պետական արարողակարգի ծառայությունը իրականացնելու է Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի, փոխվարչապետների, նախարարների և նախարարների տեղակալների, պատգամավորական պատվիրակությունների, Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների կողմից ստացված՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով հաշվառման ենթակա նվերների հաշվառումը:

««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով սահմանվել են պետությանը հանձնված գույքի տնօրինման եղանակները, այդ թվում՝ շուտ փչացող գույքը, կենդանիները, պահպանման էական ծախսեր պահանջող գույքն անհապաղ իրացնելու, իսկ շուտ փչացող գույքի պարագայում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով՝ ոչնչացնելը:

Հանձնաժողովն իր՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 01-Ն որոշմամբ սահմանված՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը վերոգրյալ օրենսդրական կարգավորումներին համապատասխանեցնելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում մշակել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 01-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հանձնաժողովի որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ):

Նախագիծը ուղարկվել է կարծիքի շահառու մարմիններին և հանրային քննարկման ներկայացվել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական՝ E-draft հարթակում: Նախագծի վերաբերյալ ստացվել են մի շարք առաջարկություններ, որոնցով, ի թիվս այլնի, առաջարկվել է նախատեսել Պետական արարողակարգի ծառայությանը ստացված նվերի մասին

տեղեկացման կարգ, ինչպես նաև հստակեցնել Պետական գույքի կառավարման կոմիտեին նվերի փոխանցման ընթացակարգը: Ստացված առաջարկությունների հիման վրա Նախագիծը լրամշակվել է և ներկայացվել պետական-իրավական փորձաքննության:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը նաև մշակել և հրապարկել է Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերների թույլատրելիության վերաբերյալ խորհրդատվական կարծիքի տրամադրման մեթոդական ուղեցույց՝ խորհրդատվության ստացման գործընթացը պարզեցնելու և նվերների ընդունման ու հաշվառման կարգավորումների պատշաճ կիրարկումն ապահովելու նպատակով: Ուղեցույցը կիրառելի է ոչ միայն Հանձնաժողովի, այլև Բարեվարքության հարցերով կազմակերպիչների և օրենքով սահմանված էթիկայի հանձնաժողովների կողմից նվերների թույլատրելիության հետ կապված իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք տրամադրելիս: Ուղեցույցը մեթոդական փաստաթուղթ է՝ բաղկացած երեք հիմնական բաժիններից, որոնցով սահմանվել են խորհրդատվական կարծիքի դիմելու, խորհրդատվական կարծիքի տրամադրման ընթացակարգերը և նվերի արժեքի գնահատումը՝ հարցերի և դրանց ներքո սահմանվող հաջորդական քայլերի ներկայացմամբ: Ուղեցույցը հասանելի է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղումով՝ http://cpcarmenia.am/hy/news/item/2024/06/25/1/:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովը նախկինում ևս նվերների ընդունման սահմանափակումների առնչությամբ խորհրդատվական աջակցություն է տրամադրել հանրային իշխանության մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչներին, այդուհանդերձ, դա կրել է հատվածական բնույթ, իսկ արդեն մեթոդական ուղեցույցի առկայությամբ ակնկալվում է գործընթացն ապահովել ինստիտուցիոնալ կերպով:

1.4 Իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ և վերապատրաստումներ

Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների ընդունումից հետո, ինչպես նշվեց նախորդ բաժիններում, դրանց արդյունավետ կիրարկումն ապահովելու նպատակով մշակվել էր Տիպային կանոնների մեկնաբանությունների ուղեցույցը՝ հանրային ծառայության տարբեր մակարդակներում վարքագծի կանոնների հիմքում ընկած սկզբունքների, նաև՝ վարքագծի կանոնների միասնական մեկնաբանումը երաշխավորելու նպատակով: Տիպային կանոնների, դրանց մեկնաբանությունների, ուղեցույցի գործնական կիրառման, ինչպես նաև հանրային ծառայության բարեվարքության համակարգի տարրերի և դրանց առնչվող օրենսդրական կարգավորումների վերաբերյալ Հանձնաժողովը 2024 թվականի առաջին կիսամյակում իրականացրել է հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստումներ:

Այսպես՝ 2024 թվականի փետրվարի 20-ին, 21-ին և 28-ին Հանձնաժողովը Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի Գործընկերություն հանուն լավ կառավարման III ծրագրի շրջանակներում «Հայաստանում տնտեսական հանցագործությունների արդյունավետ կանխարգելման և դրանց դեմ պայքարի ազգային կարողությունների հզորացում» ծրագրի գործընկերների հետ համագործակցությամբ իրականացրել է պետական երեք գերատեսչությունների ներկայացուցիչների վերապատրաստում՝ «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանությունների ուղեցույցի կիրառման» թեմայով:

Վերապատրաստումները վարել են Եվրոպայի խորհրդի փորձագետը, Հանձնաժողովի ներկայացուցիչները, ինչպես նաև տարբեր գերատեսչությունների բարեվարքության հարցերով կազմակերպիչներ, ովքեր Հանձնաժողովի կողմից նախկինում իրականացված վերապատրաստումների արդյունքում ընտրվել էին որպես վերապատրաստողներ: Եռօրյա վերապատրաստումներին մասնակցեցին ՀՀ վարչապետի աշխատակազմի, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության շուրջ 60 աշխատակիցներ:

Սույն թվականի հունիսի 19-21-ը Ազգային ժողովի աշխատակազմի նախաձեռնությամբ ԱՄՆ ՄԶԳ ծրագրի աջակցությամբ կազմակերպել է «Բարեվարքության համակարգը հանրային ծառայությունում» թեմայով վերապատրաստման դասընթաց՝ միտված ԱԺ աշխատակազմի պետական ծառայողների կարողությունների զարգացմանը: Վերապատրաստման շրջանակներում որպես բանախոս հանդես է եկել նաև Հանձնաժողովի ներկայացուցիչը՝ Խորհրդարանի աշխատակազմին ներկայացնելով բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգը և Հանձնաժողովի գործառույթները: Քննարկվել են անհամատեղելիության պահանջներին, այլ

սահմանափակումներին, շահերի բախմանը, վարքագծի կանոններին, նվերների ընդունման սահմանափակումներին վերաբերելի օրենսդրական կարգավորումները, դրանց բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները: Վերապատրաստման առանձին մոդուլներ նվիրված են եղել բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտին և էթիկայի հանձնաժողովների գործառույթներին: Վերապատրաստմանը մասնակցել են ԱԺ աշխատակազմի շուրջ 40 ծառայողներ:

Հաշվետու ժամանակահատվածում՝ սույն թվականի հունիսի 25-ին և 26-ին «Բարեվարքություն» թեմայով վերապատրաստում է իրականացվել Ոստիկանության կրթահամալիրի և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի դասախոսական կազմի համար: Դասընթացն իրականացվել է «Վերապատրաստողների վերապատրաստում» (ToT) ձևաչափով:

Վերապատրաստման մասնակիցներին ներկայացվել են բարեվարքության համակարգը, դրա տարրերը, ոլորտին վերաբերելի վերջին օրենսդրական փոփոխությունները: Դասընթացի առանձին բաժին նվիրվել է Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների և դրանց մեկնաբանությունների քննարկմանը:Վերապատրաստմանը մասնակցել են Ոստիկանության կրթահամալիրի և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի 17 դասախոսներ:

1.5 Բարեվարքության համակարգի վիճակի գնահատում

Հանձնաժողովի գործունեության կարևորագույն սկզբունքներից է հանրային հաշվետվողականության և թափանցիկության ապահովումը, ինչը սահմանված է նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով:

Համաձայն սույն օրենքի 6-րդ հոդվածի դրույթների՝ Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաղորդումները, Հանձնաժողովի ընդունած որոշումները և եզրակացությունները, ինչպես նաև իր ներկայացրած առաջարկությունները և դրանց քննարկման արդյունքների վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ավարտից հետո՝ երկու ամսվա ընթացքում, Հանձնաժողովը նախորդ տարվա բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդումը տեղադրում է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդումը կարևոր է համակարգի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու, համակարգի խնդիրները և կայացման խոչընդոտները վերհանելու, Հանձնաժողովի և հանրային իշխանության այլ մարմինների գործունեության արդյունքում ձևավորված պրակտիկան վերլուծելու համար:

Հանձնաժողովը, նշված գործառույթների ապահովման շրջանակներում, մշակել է Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ 2023 թվականի տարեկան հաղորդումը, որը հրապարակվել է սույն թվականի հունիսի 3-ին՝ http://cpcarmenia.am/hy/news/item/2024/06/03/2/:

Հաղորդմամբ ներկայացվում են բարեվարքության համակարգի ներդրման և շարունակական կատարելագործման ճանապարհին առաջացած իրավական, գործառնական խնդիրները, դրանց հակազդման ուղղությամբ իրականացված աշխատանքները, ձևավորված պրակտիկան և դրա առանձնահատկությունները հանրային իշխանության առանձին մարմիններում:

Հաղորդման առանձին գլուխներ ներկայացնում են բարեվարքության տարրերի՝ անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման կառուցակարգերի, վարքագծի կանոնների ոլորտում գործող իրավակարգավորումների ամփոփ վերլուծություն՝ համադրելով դրանք Հանձնաժողովի և առանձին գերատեսչությունների փորձի հետ: Հաղորդումը որոշ դեպքերում անդրադառնում է 2023 թվականից առաջ, ապա նաև 2024 թվականին իրականացված աշխատանքներին, որոնք անհրաժեշտ են վերհանված խնդիրների համապարփակ գնահատման և դրանց վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար:

Ի լրումն վերոգրյալի՝ Հաղորդման առանձին բաժիններ ներկայացնում են հանրային իշխանության առանձին մարմիններում կոռուպցիայի կանխարգելման վիճակագրությունը, ինչպես նաև բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի և վերջինների գործառույթների ապահովման խոչընդոտները՝ համադրված որոշ վիճակագրական թվային տվյալներով:

Հաղորդումը կարող է օգտագործվել կոռուպցիայի կանխարգելման ոլորտում քաղաքականություն մշակող մարմինների, ինչպես նաև առանձին գերատեսչությունների կողմից՝ վերհանված/գույքագրված բացերի հիման վրա համապատասխան աշխատանքների կամ առողջացման ծրագրերի իրականացման համար: Հաղորդումը ներկայացնում է նաև հանրային և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից այլ աշխատանք կատարելու վերաբերյալ Հանձնաժողովի՝ առանձին դեպքերով տրամադրած դիրքորոշումները, ինչը գործնականում կարող է որպես ուղեցույց ծառայել՝ համապատասխան մարմիններում ծառայողներին խորհրդատվություն տրամադրելիս կամ ուղղորդելիս:

Հաղորդման շրջանակներում որպես հիմնական արձանագրում՝ Հանձնաժողովը գնահատել է, որ անհամատեղելիության պահանջների, մասնավորապես՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի շրջանցման հնարավորությունները շարունակում են առկա լինել՝ չնայած վերջին տարիներին իրականացված օրենսդրական փոփոխություններին և հավատարմագրային կառավարման գործընթացին ներկայացվող պահանջների վերանայմանը: Այս տեսանկյունից կարևոր է արձանագրել, որ հավելյալ վարչարարության ստեղծմանը զուգահեռ կարգավորման արդյունավետության ցածր մակարդակի պարագայում անհրաժեշտ է ամբողջովին վերանայել անհամատեղելիության պահանջները, ինչպես նաև դրանց ապահովման գործիքակազմը և քննարկել դրանց փոխարկումը (լրացումը) շահերի բախման դեպքերի վերահսկողության առավել համապարփակ և գործուն գործիքակազմով:

Այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումները նախատեսող կարգավորումներն առավել ճկունության կարիք ունեն և միշտ չէ, որ ողջամտորեն բխում են շահերի բախման ռիսկերի կառավարման նպատակից: Դրանք որոշ դեպքերում համահունչ չեն նաև միջազգային ընդունված պրակտիկային և անհարկի խոչընդոտում են ոչ ռիսկային կամ նվազ ռիսկային աշխատանքների իրականացման հնարավորությունը: Միաժամանակ, այս սահմանափակումների վերանայումը՝ դրանց մեղմացումը, պետք է հակակշռվի շահերի կառավարման պատշաճ գործիքակազմի ներդրմամբ:

Շահերի բախման կառուցակարգերի առնչությամբ՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ օրենսդրական փոփոխություններից հետո որոշակիորեն փոխել է կարգավորումների կիրառման պրակտիկան՝ հնարավորություն տալով Հանձնաժողովին քննության առնել խախտման դեպքերը և ապահովել համապատասխան իրավական գործընթացներ, իսկ վարչական

պատասխանատվության նախատեսումը նպաստել է շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Հանձնաժողովին հայտնելու, իրավիճակի լուծմանն ուղղված առաջարկներ ստանալու պրակտիկայի ձևավորմանը, ինչը կանխարգելման տեսանկյունից նշանակալի ազդեցություն կարող է ունենալ: Այնուամենայնիվ, հատկանշական է, որ շահերի բախման վերաբերյալ Հանձնաժողովի բոլոր եզրակացությունները մնացել են անկատար, չեն արժանացել պատշաճ արձագանքի, և որևէ պատասխանատվություն վարույթի արդյունքում չի կիրառվել:

Չնայած դրական զարգացումներին՝ այդուհանդերձ, առանձին ոլորտներում, ինչպես օրինակ՝ պետական գնումների, համայնքային գույքի տնօրինման, օգտագործման գործընթացներում շահերի բախման ռիսկերը շարունակում են մնալ բարձր, ինչը պարբերաբար արձանագրվում է հետաքննող լրատվական միջոցների, ոլորտային ՔՀԿ-ների կողմից, ինչպես նաև համապատասխան միջազգային գնահատման զեկույցների շրջանակներում: Հարկ է նաև նշել, որ շահերի բախման կարգավորումները միասնական կերպով տեղայնացված չեն հանրային տարբեր պաշտոններ զբաղեցնող անձանց համար, իսկ պաշտոնների որոշ խմբերի դեպում՝ ոլորտային օրենսդրությունն առհասարակ չի նախատեսում շահերի բախումը հասցեագրող կարգավորումներ:

Անդրադառնալով վարքագծի կանոններին և դրանց կիրառման միասնականության ապահովմանը՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ ոլորտային կանոնագրքերի ներդրման գործընթացը դեռ ավարտված չէ: Թեև Տիպային կանոնների հաստատումից հետո որոշ գերատեսչությունների կողմից ներկայացվել են ոլորտային առանձնահատկությունների հիման վրա մշակված վարքագծի կանոնագրքեր, մինչդեռ, ծառայության այլ տեսակների դեպքում վարքագծի կանոններ կամ սահմանված չեն, կամ դրանք նախատեսված են մարմինների ներքին կարգապահական կանոններով և էականորեն շեղվում են Տիպային կանոններից:

Վարքագծի կանոնների կիրառման պրակտիկայի առնչությամբ նշվել է, որ վարքագծի կանոնների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից դիմումների և մեդիա հրապարակումների հիման վրա ուսումնասիրված դեպքերը, թե՛ մինչև Կանոնագրքի հաստատումը, թե՛ դրանից առաջ, հիմնականում վերաբերել են ի պաշտոնե հանդես գալիս՝ հանրային այլ պաշտոնյաների, լրատվամիջոցների ներկայացուցիչների, այլ անձանց հետ հարաբերություններում զսպվածության դրսևորման, հաղորդակցությանը ներկայացվող պահանջների խախտումներին, հրապարակային կերպով՝ հանրային ամբիոններից հնչեցվող ատելության

խոսքին, անհանդուրժողականությանը, երբեմն՝ հայհոյախառն արտահայտություններին, վիրավորանքներին, ընդհուպ՝ ֆիզիկական բնույթի գործողություններին: Նման դեպքերն արժանացել են լրատվամիջոցների և հանրության սուր քննադատությանը, սակայն, հանրային որոշ պաշտոնների համար վարքագծի կանոնների բացակայությամբ պայմանավորված, ոչ միշտ են արժանացել պատշաճ քննության, իսկ քաղաքական պաշտոնների դեպքում՝ քաղաքական հետևանքը եղել է անհամարժեք:

Միևնույն ժամանակ, Հաղորդման շրջանակներում վերհանված խնդիրները, իբրև ռազմավարական նպատակներ, մասամբ տեղ են գտել 2023-2026 թվականների ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մեջ և դրա գործողությունների ծրագրում: Արձանագրված մյուս խնդիրները Հանձնաժողովի կողմից պարբերաբար բարձրացվում են շահառու մարմինների, ինչպես նաև համապատասխան թիրախային խմբերի հետ քննարկումներում:

II. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

2.1 Հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ Հանձնաժողով ներկայացված ծանուցումներ

Հանձնաժողովը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից հաշվետու ժամանակահատվածում 621 ծանուցումների (ռեեստրներ) հիման վրա ստացել և հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգ (այսուհետ՝ Համակարգ) է մուտքագրել 1963 հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ տվյալներ, որոնք վերաբերել են 2843 փոփոխությունների:

Վերը նշված փոփոխություններից 1423-ը եղել են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, 1420-ը՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու մասին:

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ Համակարգում գրանցված գործող պաշտոնատար անձանց թիվը կազմել է 6158:

Ստորև ներկայացված են 2022-2024թթ. 1-ին կիսամյակների ընթացքում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված՝ հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ ծանուցումների վիճակագրությունը.



Հանձնաժողովի կողմից ստացվող՝ հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ ծանուցումների տվյալներում մշտապես առկա էին լինում մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից դրանք չէին ներկայացվում «Հանրային ծառայության մասին» օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացվող ծանուցմանը կցված չէր լինում համապատասխան ակտի պատճենը, Հանձնաժողովի սահմանած ձևաթուղթը լրացված էր լինում անհամապատասխանություններով: Դրանց լուծման նպատակով Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում ևս ձեռնարկել է իրազեկման միջոցառումներ, ինչի արդյունքում էապես նվազեցվել են վերը նշված խնդիրները: Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 170 պաշտոնատար անձանց վերաբերյալ՝ նախորդ տարիների ընթացքում չներկայացված 195 տվյալ, որից՝ 102-ը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, իսկ 93-ը՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու մասին:

Վերը նշվածի համատեքստում հարկ է արձանագրել, որ հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու և ազատելու մասին ծանուցումը եռօրյա ժամկետում Հանձնաժողովի սահմանած ձևով և կարգով ներկայացնելու օրենսդրական պահանջն ինքնանպատակ չէ և դրանով է պայմանավորված համապատասխան տվյալների Համակարգ մուտքագրումը և հայտարարատուների

համար համապատասխան հայտարարագրերի ներկայացման գործընթացի պատշաճ կազմակերպումը:

2.2 Աջակցություն հայտարարատուներին, իրազեկման միջոցառումներ, խորհրդատվություն

2024 թվականի 1-ին կիսամյակում հայտարարատուների կողմից հայտարարագրման գործընթացին առնչվող շուրջ 320 գրավոր հարցումներին տրամադրվել են գրավոր պատասխաններ, այդ թվում՝ այդ նպատակով գործարկված՝ contact@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով:

Հանձնաժողովը հայտարարատուներին խորհրդատվություն և աջակցություն է տրամադրել նաև հեռախոսազանգերի և Համակարգի «Օգնություն» բաժնի միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է շուրջ 4000 հեռախոսազանգի, իսկ Համակարգի «Օգնություն» բաժնի միջոցով՝ շուրջ 220 գրավոր հարցման սպասարկում:

Բոլոր այն Հայտարարատուները, ովքեր չեն ստացել Համակարգ մուտք գործելու համար տվյալներ կամ ում չի հաջողվել ստացված տվյալներով մուտք գործել Համակարգ, պահանջվող տվյալները լրացրել են Հանձնաժողովի կայքում հրապարակված հղումով ներկայացված ձևաթղթում և, լրացված տվյալների համաձայն, Հայտարարատուներին ուղարկվել են օգտանուն և նոր գաղտնաբառ: Տարեսկզբից Հայտարարատուների կողմից ներկայացված հայտերի թիվը կազմել է՝ շուրջ 2000:

2023 թվականի տարեկան հայտարարագրերի ներկայացման վերջնաժամկետով պայմանավորված՝ հեռախոսազանգերի միջոցով 15.05.2024-31.05.2024թթ. ընթացքում հայտարարատուներին աջակցություն է տրամադրվել նաև ոչ աշխատանքային օրերին, իսկ 2024 թվականի մայիսի 31-ին հեռախոսազանգերը սպասարկվել են մինչև ժամը 20:00-ն:

Պետական մարմինների հետ համագործակցության շրջանակներում, Հանձնաժողովի կողմից հայտարարատու պաշտոնատար անձանց հետ կազմակերպվել են «Հայտարարագրման համակարգը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ» թեմայով աշխատանքային քննարկումներ:

Աշխատանքային քննարկումների ժամանակ մասնակիցներին ներկայացվել է հայտարարագրման համակարգի նպատակը, հայտարարատուների շրջանակը, հայտարարագրերի տեսակներն ու դրանց ներկայացման ժամկետները,

հայտարարագրման ենթակա տվյալները, հայտարարագրերի ստուգման և վերլուծության գործընթացները, հայտարարագրերի համար կիրառվող պատասխանատվության միջոցները, ինչպես նաև հայտարարագրման էլեկտրոնային համակարգը, դրա կառուցվածքը, ֆունկցիոնալությունը, հայտարարագրերի հրապարակային ռեեստրի հնարավորությունները:

2.3 Հայտարարագրերի ներկայացման գործընթաց

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողով է ներկայացվել 17108 հայտարարագիր, որից 8058-ը՝ հայտարարատու պաշտոնատար անձանց, իսկ 9050-ը՝ հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների կողմից: «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատուների կողմից հայտարարագրերի ներկայացման վիճակագրությունը նախորդող համապատասխան ժամանակահատվածների համեմատությամբ ներկայացված է ստորև.



Հաշվետու ժամանակահատվածում հայտարարագիրն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու անհնարինության պատճառով ոչ էլեկտրոնային (թղթային) տարբերակով Հանձնաժողով է ներկայացվել 19 հայտարարագիր, այդ թվում՝ 3 հայտարարագիր մուտքագրվել է Համակարգ և սահմանված կարգով հրապարակվել, իսկ մյուս հայտարարագրերը չեն մուտքագրվել՝ Համակարգի ֆունկցիոնալության ժամանակավոր բացակայության պատճառով:

Հանձնաժողովը, հայտարարագրերի ներկայացման գործընթացի շրջանակներում շարունակաբար մշտադիտարկում է իրականացրել Համակարգում և ապահովել է 2024 թվականի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու և դադարեցնելու, ինչպես նաև 2023 թվականի տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող, սակայն օրենքով սահմանված ժամկետում համապատասխան հայտարարագրերը չներկայացրած հայտարարատու պաշտոնատար անձանց և նրանց ընտանքի անդամների հայտարարագիր ներկայացնելու պարտականության վերաբերյալ գրավոր ծանուցումների գործընթացը:

Մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ հաշվետու ժամանակահատվածում համապատասխան հայտարարագրերը չներկայացրած, ինչպես նաև մինչև 2024 թվականը համապատասխան հայտարարագրերը չներկայացրած հայտարարատուների թիվը կազմել է 2754:

Միաժամանակ ուսումնասիրվել է պաշտոնատար անձանց կողմից 2023 թվականի տարեկան հայտարարագրերն օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու հանգամանքը, ինչի արդյունքում պարզվել է, որ 2023 թվականի տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտականություն են ունեցել 6153 պաշտոնատար անձինք, որոնցից 6038-ը ներկայացրել են 2023 թվականի տարեկան հայտարարագրերը, իսկ մնացած 115 պաշտոնատար անձանց ուղարկվել են գրավոր ծանուցումներ՝ տրամադրելով 30-օրյա ժամկետ՝ պահանջվող հայտարարագիրը ներկայացնելու համար, իսկ այդ ժամկետում չներկայացնելու դեպքում՝ ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը, հրավիրվել են Հանձնաժողով՝ վարչական իրավախախատման վերաբերյալ արձանագրություն կազմելուն մասնակցելու:

Վերոնշյալ բոլոր դեպքերում հայտարարատուներին ուղարկվել են գրավոր ծանուցումներ, որոնցով հայտարարատուներին տրամադրվել է ծանուցումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետ՝ պահանջվող հայտարարագրերը ներկայացնելու համար, իսկ չներկայացնելու դեպքում ծանուցումն ստանալուց հետո՝ 31-րդ օրը, հրավիրվել են Հանձնաժողով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն մասնակցելու:

Հանձնաժողովի կողմից ուղարկված գրավոր ծանուցումների վիճակագրությունը ներկայացված է ստորև (աղյուսակում ներառված չեն 2024 թվականի 1-ին կիսամյակում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով գործող հայտարարատու պաշտոնատար անձանց ուղարկված 928 գրավոր ծանուցումները).



Հանձնաժողովի 2754 գրավոր ծանուցումներից պատշաճ ստացվել են 1663-ը, որը կազմում է ուղարկված գրավոր ծանուցումների 60.38%-ը: Պատշաճ ծանուցված, սակայն ծանուցումն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, պահանջվող հայտարարագրերը չներկայացրած անձանց վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ 268 արձանագրություններ և փոխանցվել Վարույթների և իրավական ապահովման վարչությանը՝ գործի հետագա ընթացքը լուծելու նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 268 դեպքում կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ, ստացվում է, որ Հանձնաժողովի գրավոր ծանուցումների հիման վրա պատշաճ ծանուցված, սակայն ծանուցումն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, պահանջվող հայտարարագրերը չներկայացրած դեպքերի համամասնությունն՝ ուղարկված գրավոր ծանուցումների համեմատությամբ, հաշվետու ժամանակահատվածում կազմել է 16.11% (սույն հաշվարկում չեն ներառվել պատշաճ ստացված

ծանուցումները, որոնցով սահմանված 30-օրյա ժամկետը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեռևս չի ավարտվել):

Մնացած այն դեպքերում, երբ ծանուցումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, պահանջվող հայտարարագրերը ներկայացվել են, կամ Հանձնաժողովը չի ստացել ուղարկված գրավոր ծանուցումները հայտարարատուների կողմից ստացված լինելը հավաստող հետադարձ ծանուցումը, կամ ուղարկված ծանուցումները հետ են վերադարձվել, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ չեն կազմվել, քանի որ առկա չեն եղել Վարչական իրավախախտման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածով սահմանված՝ հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու իրավախախտման հատկանիշները:

Պատշաճ ստացված ծանուցումների հիման վրա, դրանցով սահմանված 30-օրյա ժամկետում Հանձնաժողով է ներկայացվել 758 հայտարարագիր, որը կազմում է պատշաճ ստացված ծանուցումների 45.58%-ը, միաժամանակ հարկ է նշել, որ ուղարկված 637 ծանուցումների դեպքում հայտարարագրերը ներկայացնելու համար տրամադրված 30-օրյա ժամկետը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեռևս չի ավարտվել:

Հանձնաժողովի կողմից հաշվետու ժամնակահատվածում ուղարկված գրավոր ծանուցումներից 1091-ի կամ ուղարկված գրավոր ծանուցումների 39.61% դեպքերում հայտարարատուները պատշաճ չեն ծանուցվել, սակայն հարկ է արձանագրել, որ վերոնշյալ՝ պատշաճ չստացված 166 ծանուցումների դեպքում Հանձնաժողով է ներկայացվել 166 հայտարարագիր, ինչը կազմում է պատշաճ չստացված ծանուցումների 15.21%-ը:

Ողարկված գրավոր ծանուցումներից 302-ը, կամ ուղարկված գրավոր ծանուցումների 10.96%-ը հետ են վերադարձվել Հանձնաժողով անձի՝ փոստային առաքանին ստանալուց հրաժարվելու կամ «չպահանջված» կամ «տեղափոխված» նշումներով:

Ուղարկված գրավոր ծանուցումներից 601-ի դեպքում, ինչը կազմում է ուղարկված գրավոր ծանուցումների 21.82%-ը, պատվիրված նամակով ուղարկվելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը):

Հարկ է արձանագրել, որ Օրենսդիրը հայտարարագրերը չներկայացնելու համար վարչական պատասխանատվության վրա հասնելը պայմանավորել է ոչ թե «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանած ժամկետների ավարտով,

այլ՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու հանգամանքով: Նման պայմաններում, «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագրերը ներկայացնելու ժամկետների ավարտից հետո համապատասխան գրավոր ծանուցումների ուղարկումը Հանձնաժողովից պահանջում է մեծաթիվ ռեսուրսներ, այդ թվում նաև՝ ֆինանսական, ինչպիսի խնդիրները լուծելու նպատակով Հանձնաժողովը հաշվետու տարում պաշտոնավարող պաշտոնատար անձանց տարեկան հայտարարագրերի ներկայացման համար գրավոր ծանուցումների գործընթացն ապահովել է համապատասխան մարմիններից փոխօգնություն հայցելու միջոցով: Նման եղանակով հնարավոր է եղել մասամբ լուծել հայտարարատուների գրավոր ծանուցման վերը նշված խնդիրները, սակայն հարկ ենք համարում նշել, որ հայտարարագրերը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքերում ուղարկվող գրավոր ծանուցումները չստանալու դեպքերն առավելապես մեծ են ոչ թե պաշտոնավարող պաշտոնատար անձանց, այլ՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցրած նախկին պաշտոնատար անձանց, ինչպես նաև նախկին և ներկա հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների դեպքում, որոնց գրավոր ծանուցման գործընթացը հնարավոր չէ ապահովել համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Այնուամենայնիվ, Հանձնաժողովը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում և նրանց աջակցությամբ ապահովել է նշված մարմինների՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող 928 հայտարարատու պաշտոնատար անձանց գրավոր ծանուցումը:

2.4 Հայտարարագրերի ուղղման գործընթաց

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը ստացել է հայտարարագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ 274 դիմում՝ որից 208 դիմումը ստացվել է հայտարարատու պաշտոնատար անձանց կողմից, 64-ը՝ հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների կողմից, 2 դիմումը ստացվել է կուսակցությունների ղեկավար մարմնի անդամի կողմից: Հայտարարագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ ստացված դիմումներից 2-ը մերժվել են: 1-ին դիմումը մերժվել է, քանի որ դիմումատուի ներկայացված հայտարարագրերը ճանաչվել են արտավարութային

փաստաթղթեր, իսկ 2-րդ դիմումը մերժվել է, քանի որ հայտարարատուի հայտարարագրում առկա անհամապատասխանություններն այլ կերպ բացահայտված էին եղել մամուլի ուսումնասիրությամբ հայտնաբերված Լուրեր.com կայքի հրապարակմամբ, որի արդյունքում դիմումում ներկայացված տվյալը հանդիսացել է Հանձնաժողովում նախաձեռնված ուսումնասիրության առարկա:

Մյուս դիմումների հիման վրա համապատասխան փոփոխությունների կատարման գործընթացն ամբողջությամբ հնարավոր չի եղել ապահովել, քանի որ այդ դիմումների մի մասը վերաբերել է հայտարարագրման նախկին էլեկտրոնային համակարգում առկա հայտարարագրերին: Նախկին համակարգի հայտարարագրերի ուղղման գործընթացը հնարավոր կլինի իրականացնել 2024 թվականի երկրորդ կիսամյակում, իսկ նոր համակարգում հայտարարագրված տվյալներում փոփոխությունների կատարման գործընթացն արդեն իսկ մեկնարկել է:

2.5 Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Համակարգի կատարելագործման աշխատանքները:

Մասնավորապես, ավարտին է հասցվել հայտարարագրված տվյալներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ դիմումների հիման վրա Համակարգի միջոցով հրապարակված հայտարարագրերում համապատասխան ուղղումների կատարման ապահովման գործընթացը և արդեն 2024 թվականի հուլիսի 1-ից հայտարարատուները ծանուցվում են ուղղումներ կատարելու մասին: Ավելին, առաջին անգամ հնարավորություն է ստեղծվել տարեկան հայտարարագրերի ներկայացման ամբողջ ընթացքում պարբերական ավտոմատացված ծանուցումներ ուղարկել հայտարարագրերը չներկայացրած հայտարարատուներին, ինչպես նաև արտահանել մանրամասն հաշվետվություններ ժամկետների խախտմամբ ներկայացված, կամ սահմանված ժամկետներում չներկայացված հայտարարագրերի վերաբերյալ:

Հանձնաժողովը նաև ապահովել է բաց տվյալների սկզբունքով (Open API) հայտարարագրերում ներառված հրապարակային տվյալների ամբողջական ներբեռնման հնարավորությունը, որը Բաց կառավարման գործընկերության

շրջանակներում Հայաստանի Հանրապետության հատուկ հանձնառությունների շարքում էր:

III. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Հայտարարագրերի ստուգում

Հանձնաժողովի կողմից իրականացված մամուլի մոնիթորինգի արդյունքում հաշվետու ժամանակահատվածում կատարված 19 հրապարակումների հիման վրա իրականացվել են ուսումնասիրություններ 33 պաշտոնատար անձանց և պաշտոնատար անձանց ընտանիքի 12 անդամների կողմից ներկայացված 97 հայտարարագրերի՝ մամուլում տեղ գտած հրապարակումների մեջ արձանագրված առերևույթ խնդիրների վերաբերյալ:

2024 թվականի 1-ին կիսամյակում ԶԼՄ հրապարակումների հիման վրա իրականացված ուսումնասիրություններ	
1	*«Անհամապատասխանություններ՝ Աղվան Վարդանյանի հայտարարագրած գույքի, ծախսերի ու եկամուտների միջև», «Infocom.am» լրատվական կայք, փետրվար 29, 2024թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացված տվյալների ստուգման արդյունքում Հանձնաժողովը որոշել է իրականացել Աղվան Վարդանյանի և նրա ընտանիքի անդամների հայտարարագրերի համալիր վերլուծություն:
2	*«Արդյոք Նուարդ Վարդանյանի հայտարարագրում կեղծիք կա. «Ժողովուրդ»», «Tert.am» լրատվական կայք, փետրվարի 23, 2024 թ.:*

	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացվել է Նուարդ Վարդանյանի՝ 2021 և 2022 թվականների տարեկան հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ստուգում, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է ՀՀ ՆԳՆ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից և Պետական եկամուտների կոմիտեից հայցել տեղեկություններ համապատասխանաբար Նուարդ Վարդանյանին պատկանող տրանսպորտային միջոց(ներ)ի և վերջինիս եկամուտների վերաբերյալ, որոնց համադրության արդյունքում անձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Նուարդ Վարդանյանից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել պարզաբանում: Պարզաբանումը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեռևս չի ստացվել:
3	*[««Ժողովուրդ». «Նախկին թալանչիների» օրոք պաշտոնավարածն այսօր ՊՆ-ում է», «News.am» լրատվական կայք, փետրվարի 28, 2024 թ.:]*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացվել է Կարեն Բրուտյանի հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ստուգում, ինչի արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Կարեն Բրուտյանից և վերջինիս կնոջից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել պարզաբանում, որը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեռևս չի ստացվել:
4	*[«Դատավորները կրիպտոարժույթի նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերում», «Hetq.am» լրատվական կայք, մարտի 30, 2024 թ.:]*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Սամվել Սեյրանի Յուզբաշյանի, Անի Գրիգորի Հարությունյանի, Գիվի Համլետի Հովհաննիսյանի, Դավիթ Միհերի Արղամանյանի, Հակոբ Նշանի Վաղարշակյանի հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ստուգում: Ստուգման արդյունքում Հանձնաժողովը որոշել է Սամվել Յուզբաշյանին և Անի Հարությունյանին ծանուցել ուղղման անհրաժեշտության վերաբերյալ՝ հայտարարագրված

	կրիպտոարժույթները լրացման կարգին համապատասխան ներկայացնելու նպատակով: Հակոբ Վաղարշակյանից հայցել պարզաբանում 2020-2022 թվականներին հայտարարագրված կրիպտոարժույթի քանակի, ձեռքբերման արժեքի և առաջնային ծագման աղբյուրի վերաբերյալ՝ պահանջելով ներկայացնել պատասխանը հիմնավորող փաստաթղթերը: Գիվի Հովհաննիսյանից պահանջել Հանձնաժողով ներկայացնել պարզաբանում և հիմնավորող փաստաթղթեր հայտարարագրված կրիպտոարժույթի առաջնային ծագման աղբյուրի վերաբերյալ: Դավիթ Արղամանյանի վերաբերյալ որևէ գործընթաց չնախաձեռնել՝ հաշվի առնելով ուսումնասիրված գույքի ծագման օրինականության մասով կասկածների բացակայությունը:
5	*«Մհեր Գրիգորյանը շուրջ կես մլն դոլարով «Արդշինբանկ»-ի պարտատոմսեր է գնել. ինչ է հայտարարագրել փոխվարչապետը», «Hetq.am» լրատվական կայք, մայիսի 28, 2024 թ.:*
	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի՝ 2022 թվականի հոկտեմբերի 19-ի՝ «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների ցանկը հաստատելու մասին» թիվ N 02-Լ և Հանձնաժողովի՝ 2023 թվականի մայիսի 29-ի՝ «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների շրջանակը հաստատելու մասին» N 01-Լ որոշումների հիման վրա իրականացվում է Մհեր Գրիգորյանի և վերջինիս ընտանիքի անդամների՝ 2021 և 2022 թվականների տարեկան հայտարարագրերի վերլուծություն, ուստի 2023 թվականի տարեկան հայտարարագրի վերաբերյալ հրապարակմամբ շրջանառվող տեղեկատվության ուսումնասիրության արդյունքները կքննարկվեն հայտարարագրերի վերլուծության ընթացքում:
6	*«Հրազդանի կալվածատերերը՝ Միքայելյանների ընտանիքը», «Hraparak.am» լրատվական կայք, մայիսի 17, 2024 թ.:*

	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա ուսումնասիրվել են Սասուն Միքայելյանի և Սևակ Միքայելյանի հայտարարագրերում հայտարարագրված տվյալները, ինչի արդյունքում որոշվել է իրականացնել Սասուն Միքայելյանի և Սևակ Միքայելյանի, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամների հայտարարագրերի համալիր վերլուծություն:
7	*««Ժողովուրդ». Ինչ ունեցվածք է հայտարարագրել Քաղաքաշինության կոմիտեի նորանշանակ նախագահը», «News.am» լրատվական կայք, հունիսի 1, 2024 թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովը սկսել է Եղիազար Վարդանյանի և վերջինիս կնոջ հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ուսումնասիրություն: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Հանձնաժողովը որոշել է պահանջել պարզաբանում:
8	*«44-օրյա պատերազմի քննիչ հանձնաժողովի աշխատանքները դապալած Անդրանիկ Քոչարյանը իշխանության 6 տարում գրեթե կրկնապատկել է կարողությունը. «Ժողովուրդ»», «Armlur.am» լրատվական կայք, հունիսի 4, 2024 թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Անդրանիկ Քոչարյանի հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ուսումնասիրություն: Անդրանիկ Քոչարյանի կողմից ներկայացված հայտարարագրերի առնչությամբ մամուլում տեղ գտած հրապարակումներում արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ստուգումների արդյունքում հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքների բացակայությունը հաշվի առնելով՝

	Հանձնաժողովը որոշել է վերջինիս նկատմամբ որևէ գործընթաց չնախաձեռնել:
9	*«Քյարամյանի աշխատավարձն անցած տարի ավելացել է շուրջ 9 մլն դրամով. ինչ է հայտարարագրել ՔԿ նախագահը. ՏԵՍԱՆՅՈՒԹ», «Factor.am» լրատվական կայք, հունիսի 6, 2024 թ.:*
	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի՝ 2022 թվականի հոկտեմբերի 19-ի՝ «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների ցանկը հաստատելու մասին» թիվ N 02-Լ և Հանձնաժողովի՝ 2023 թվականի մայիսի 29-ի՝ «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների շրջանակը հաստատելու մասին» N 01-Լ որոշումների հիման վրա իրականացվում է Արգիշտի Քյարամյանի և վերջինիս ընտանիքի անդամների՝ 2021 և 2022 թվականների տարեկան հայտարարագրերի վերլուծություն, ուստի որոշվել է Արգիշտի Քյարամյանի՝ 2023 թվականի տարեկան հայտարարագրի վերաբերյալ հրապարակմամբ շրջանառվող տեղեկատվության ստուգման արդյունքներին անդրադառնալ իրականացվող համալիր վերլուծության ընթացքում:
10	*«11 մլն դրամ կրիպտոեկամուտ և պետական աջակցություն ստացող ընտանեկան բիզնես. Տիգրան Ավինյանի հայտարարագիրը. ՏԵՍԱՆՅՈՒԹ», «Factor.am» լրատվական կայք, հունիսի 11, 2024 թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովը որոշել է շարունակել Տիգրանի Ավինյանի և վերջինիս ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի համալիր վերլուծությունը, դրանում ներառելով նաև 2023 թվականը:

11	*«Անահիտ Ավանեսյանի ամուսինը աշխատում է «Արտստեպ» ՍՊԸ-ում, բայց աշխատավարձ է ստանում «Թարգեթինգ» ՍՊԸ-ից», «Armlur.am» լրատվական կայք, ապրիլի 24, 2024 թ.:*
	Հրապարակման մեջ նշված տվյալը վերաբերում էր հայտարարագրի «Ընդհանուր տվյալներ» բաժնին, որը գույքային դրության գնահատման տեսանկյունից նշանակություն չունի, այնուամենայնիվ տվյալների ստուգման արդյունքում պարզվել է, որ Անահիտ Ավանեսյանի՝ 2022 թվականի հայտարարագրի *«Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները»* բաժնում՝ ամուսնու վերաբերյալ տվյալներում, որպես գործատու հայտարարագրված է «Արտստեպ» ՍՊԸ-ն, մինչդեռ Պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական շտեմարանից ստացված տվյալների համաձայն՝ Ստեփան Ավանեսյանը 2017-2020թթ. աշխատել է «ԱՐԹՍՏԵՓ» ՍՊԸ-ում որպես գեղարար: Այսինքն, ընկերության անվանումը ճշգրիտ չի նշվել: Ինչ վերաբերում է 2022 թվականի տարեկան հայտարարագրում Ստեփան Ավանեսյանի կողմից հայտարարագրված «Թարգեթինգ» ՍՊԸ-ից ստացված աշխատավարձին, ապա հայտարարագրված տվյալները համապատասխանում են Պետական եկամուտների կոմիտեի էլեկտրոնային շտեմարանից ստացված տվյալներին: Արդյունքում, Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մամուլի հրապարակմամբ ներկայացված տվյալների ստուգման արդյունքում հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ առկա չեն, որոշել է ավարտել ստուգումը:
12	*«Առուշ Առուշանյանի աշխատավարձը բարձրացել է. ի՞նչով է պայմանավորված», «Armlur.am» լրատվական կայք, հունիսի 4, 2024 թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովը սկսել է Առուշ Առուշանյանի հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ուսումնասիրություն: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ ուսումնասիրության արդյունքները դեռևս չեն քննարկվել Հանձնաժողովի նիստում:

13	*«Ինչ է հայտարարագրել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը», «Factor.am» լրատվական կայք, հունիսի 4, 2024 թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովը սկսել է Վահագն Խաչատուրյանի և վերջինիս ընտանիքի անդամի հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ուսումնասիրություն: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ ուսումնասիրության արդյունքները դեռևս չեն քննարկվել Հանձնաժողովի նիստում:
14	*«Աշխատանքի վարձատրության աճ՝ Հայկ Կոնջորյանի ընտանիքում. ինչ ունեցվածք ունեն ՔՊ խմբակցության ղեկավարն ու կինը», «Armlur.am» լրատվական կայք, հունիսի 6, 2024թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովը սկսել է Հայկ Կոնջորյանի և վերջինիս ընտանիքի անդամի հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ուսումնասիրություն: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ ուսումնասիրության արդյունքները դեռևս չեն քննարկվել Հանձնաժողովի նիստում:
15	*«4 գույքի նվիրատվություն մեկ տարում, դրամական միջոցներ, վարկեր. ի՞նչ է հայտարարագրել ԿԸՀ նախագահը. «Ժողովուրդ»», «Armlur.am» լրատվական կայք, հունիսի 11, 2024թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացվել է Վահագն Հովակիմյանի կողմից ներկայացված հայտարարագրերի առչությամբ մամուլում տեղ գտած հրապարակմամբ արձանագրված առերևույթ խնդիրների վերաբերյալ ստուգում: Ստուգման արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ հրապարակման ենթակա տվյալ չհանդիսացող «Լրացուցիչ տեղեկություններ» բաժնում Վահագն Հովակիմյանը ներկայացրել է հայտարարագրման ենթակա գործարքի

	մանրամասները, որի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգել է, որ հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ առկա չեն և որոշել է ավարտել ստուգումը:
16	*«Միլիոնավոր դրամների շեղում ՔՊ-ական պատգամավոր ամուսինների փասպաթղթերում. բացահայտում. «Ժողովուրդ»», «Armlur.am» լրատվական կայք, փետրվար 03, 2024թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացվել է Լենա Նազարյանի և Նարեկ Բաբայանի կողմից ներկայացված հայտարարագրերի առչությամբ մամուլում տեղ գտած հրապարակմամբ արձանագրված առերևույթ խնդիրների վերաբերյալ ստուգում: Հանձնաժողովն արձանագրել է, որ վերոնշյալ հրապարակման մեջ նշված գույքի արժեքի անհամապատասխանության վերաբերյալ 2023 թվականի հուլիսի 12-ին Հանձնաժողով է մուտքագրվել Լենա Նազարյանի՝ 2022 թվականի տարեկան հայտարարագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմումը, սակայն հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգում հաշվետու ժամանակահատվածում (հայտարարագրման էլեկտրոնային համակարգում հայտարարագրված տվյալների փոփոխություններ կատարելու գործընթացն ապահովվել է 2024 թվականի հուլիսի 1-ից) տեխնիկական ապահովվածության բացակայության պատճառով հնարավոր չի եղել ապահովել հայտարարագրում համապատասխան փոփոխությունը: Հանձնաժողովն արձանագրել է նաև այլ անհամապատասխանություններ, որոնց բնույթն ու ենթադրյալ իրավախախտման համար վարչական տույժ նշանակելու՝ Օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետների անցած լինելը հաշվի առնելով՝ 26.02.2024 թվականի նիստում որոշել է Նարեկ Բաբայանին և Լենա Նազարյանին առաջարկել Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված այդ տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում: Հանձնաժողովը եզրահանգել է, որ գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների արժանահավատության և օրինականության վերաբերյալ կասկածներ առկա չեն:
17	*«Ինչ ունեցվածք ունի Սամվել Վարդանյանի գործը քննող դատավոր Ժորա Չիչոյանը», Armlur.am, լրատվական կայք, ապրիլ 17, 2024թ.:*

	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովը սկսել է Ժորա Չիչոյանի հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ուսումնասիրություն:
18	*«ՔՊ-ական Կարեն Սարուխանյանը չի հայտարարագրել նախորդ տարվա անշարժ գույքերը. ինչ ունեցվածք ունի պատգամավորը»*, «Armlur.am» լրատվական կայք, հունիս 13:
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովը սկսել է Կարեն Սարուխանյանի և վերջինիս ընտանիքի անդամի հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ուսումնասիրություն: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ ուսումնասիրության արդյունքները դեռևս չեն քննարկվել Հանձնաժողովի նիստում:
19	*«Ով է ՀՀ ամենահարուստ մարզպետը. պաշտոնյաների հայտարարագրերը՝ խոշորացույցի տակ», «Factor.am» լրատվական կայք, հունիսի 21, 2024 թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովը սկսել է Մուշեղ Մուրադյանի, Ռոբերտ Ղուկասյանի, Կարեն Սարգսյանի, Հայկ Ղալումյանի, Սեդրակ Թևոնյանի, Արամ Ղազարյանի, Սերգեյ Մովսիսյանի, Ահարոն Սահակյանի, Կոլյա Միքաելյանի և Դավիթ Խուդաթյանի հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ուսումնասիրություն:

Միաժամանակ, 2023 թվականի հաշվետու ժամանակահատվածում իրականացված հրապարակումների հիման վրա որոշ հայտարարատուների հայտարարագրերի ստուգումների վերաբերյալ արդյունքներն ամփոփվել են 2024 թվականի 1-ին կիսամյակում, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

ԶԼՄ հրապարակումների հիման վրա 2023 թվականին իրականացված ուսումնասիրություններ, որոնք ամփոփվել են 2024 թվականի 1-ին կիսամյակում	
1	*«ՔՊ-ական պատգամավորը 2019 թվականին փուն է գնել. ինչ ունեցվածք է հայտարարագրել Ռուստամ Բաքոյանը. «Ժողովուրդ»», «Tert.am» լրատվական կայք, նոյեմբեր 17, 2023թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացված տվյալների ստուգման շրջանակներում 2024 թվականին Ռուստամ Բաքոյանից հայցվել է պարզաբանում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ: Մասնավորապես, Հանձնաժողովն անդրադարձել է Ռուստամ Բաքոյանի դրամական միջոցների՝ տարեսկզբին և նախորդ տարեվերջին առկա մնացորդների անհամապատասխանություններին, հրապարակմամբ նշված՝ Ռուսաստանում գտնվող բնակարանին Ռուստամ Բաքոյանի առնչությանը և 2019 թվականին ձեռք բերված բնակելի տանը, ինչի վերաբերյալ Ռուստամ Բաքոյանը 2024 թվականի մարտի 14-ին Հանձնաժողով է ներկայացրել է իր պարզաբանումները, որոնց գնահատման արդյունքում Հանձնաժողովը, հաշվի առնելով անհամապատասխանությունների բնույթը, գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների արժանահավատության և օրինականության վերաբերյալ կասկածների փարատված լինելու հանգամանքը և ենթադրյալ իրավախախտման համար վարչական տույժ նշանակելու՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 37-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետների անցած լինելը, որոշել է ավարտել ստուգումը՝ հայտարատուին առաջարկելով Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում:
2	*«Հակակոռուպցիոն դատարանի նախագահը խոշոր գումար, առանձնատուն և բնակարան է նվեր ստացել Խաչիկ Ղազարյան,*

	Հակակոռուպցիոն դատարանի նախագահ», «Hetq.am» լրատվական կայք, դեկտեմբեր 13, 2023թ.:
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացված տվյալների ստուգման շրջանակներում 2024 թվականին Խաչիկ Ղազարյանից պահանջվել է ներկայացնել պարզաբանում ինչպես մամուլում արձանագրված անհամապատասխանությունների, այնպես էլ Խաչիկ Ղազարյանի կողմից հայտարարագրված դրամական միջոցների և որպես նվիրատվություն ստացված եկամուտների ծագման աղբյուրի, հայտարարագրված այլ տվյալների արժանահավատության վերաբերյալ, որոնց ի պատասխան՝ Խաչիկ Ղազարյանից ստացվել են պարզաբանումներ և դրանք հավաստող փաստաթղթեր, որոնց գնահատման արդյունքում Հանձնաժողովը 2024 թվականի ապրիլի 1-ին կայացած նիստում, հաշվի առնելով անհամապատասխանությունների բնույթը, գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների անարժանահավատությունը հիմնավորող բավարար հիմքերի բացակայության հանգամանքը և ենթադրյալ իրավախախտման համար վարչական տույժ նշանակելու՝ Օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետների անցած լինելը, որոշել է ավարտել ստուգումը:
3	*«Հաշվետու եմ միայն ԿԿՀ-ին. Հակակոռուպցիոն կոմիտեի վարչության պետը՝ իր հայտարարագրում առկա խնդրահարույց կետերի մասին», «infocom.am» լրատվական կայք, հոկտեմբեր 29, 2023թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա դեռևս 2023 թվականին Հանձնաժողովն սկսել էր Գարեգին Բեգոյանի 2017-2021 թվականների հայտարարագրերում հայտարարագրած տվյալների ստուգում: Մինչ այդ, Գարեգին Բեգոյանի բարեվարքության վերաբերյալ իրականացվել էր ուսումնասիրություն, որի շրջանակներում վերջինս պարզաբանում էր ներկայացրել նաև հրապարակման մեջ շրջանառվող առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ, պարզաբանելով, որ 2018 թվականի տարեվերջի և 2019 թվականի տարեսկզբի, 2019 թվականի տարեվերջի և 2020 թվականի տարեսկզբի, 2020 թվականի տարեվերջի և 2021 թվականի տարեսկզբի դրությամբ

	«Հանձնած և վերադարձված փոխառություններ» և «Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժիններում հայտարարագրված առերևույթ անհամապատասխանությունները լրացման կարգի մանրամասներին լիարժեք չտիրապետելու և տեխնիկական վրիպակի հետևանք են: Պարզաբանումների գնահատման արդյունքում Հանձնաժողովը եզրահանգել է, որ Գարեգին Բեգոյանի կողմից հայտարարագրված տվյալների արժանահավատության և օրինականության վերաբերյալ կասկածներ առկա չեն, ինչպես նաև լրացել են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժ նշանակելու՝ Օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետները, ուստի որոշել է ավարտել ստուգումը՝ հայտարարատուին առաջարկելով Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում:
4	*«Մինչ 2018 թվականը երբեք չաշխատած ՔՊ-ական պատգամավորը հարստացել է. ինչ ունեցվածք են հայտարարագրել Միքայել Թումասյանն ու նրա կինը. «Ժողովուրդ»», նոյեմբեր 1, 2023թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացված տվյալների ստուգման շրջանակներում 2024 թվականին Հանձնաժողովը որոշել է արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ գրավոր պարզաբանում հայցել Միքայել Թումասյանից և նրա ընտանիքի անդամից: Վերջիններիս կողմից ներկայացված պարզաբանումների և դրանք հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ վերջիններիս դրամական միջոցների առաջնային ծագման աղբյուրը հանդիսացել է 2012 թվականին անշարժ գույքի վաճառքից ստացված եկամուտը: Հաշվի առնելով արձանագրված այլ անհամապատասխանությունների բնույթը՝ Հանձնաժողովը եզրահանգել է, որ գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների արժանահավատության և օրինականության վերաբերյալ կասկածներ, ինչպես նաև հայտարարագրերի համալիր վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ առկա չեն:

5	*««Չունեցած» ավտոմեքենաների վաճառք, խոշոր չափի կանխիկ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի հայտարարագրում», «infocom.am» լրատվական կայք, օգոստոս 25, 2023թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա դեռևս 2023 թվականին Հանձնաժողովն սկսել էր 2017-2022 թվականների հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ստուգում: Մինչ այդ, Վահե Խաչատրյանի բարեվարքության վերաբերյալ իրականացվել էր ուսումնասիրություն, որի շրջանակներում վերջինս պարզաբանում էր ներկայացրել նաև հրապարակման մեջ շրջանառվող առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ, պարզաբանելով, որ «Դրամական միջոցներ» և «Տրանսպորտի միջոց» բաժիններում հայտարարագրված առերևույթ անհամապատասխանությունները տեխնիկական վրիպակի արդյունք են: Պարզաբանումների գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ Վահե Խաչատրյանի և վերջինիս ընտանիքի անդամի կողմից հայտարարագրված տվյալների արժանահավատության և օրինականության վերաբերյալ կասկածներ առկա չեն, ինչպես նաև լրացել են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժ նշանակելու՝ Օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետները, ուստի հայտարարատուին առաջարկվել է համապատասխան հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում ներկայացնել:
6	*«Դիանա Գասպարյանի սկեսուրն էջմիածնում ապօրինի շինարարություն է սկսել», «Hetq.am» լրատվական կայք, դեկտեմբեր 5, 2023թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացված տվյալների ստուգման շրջանակներում Հանձնաժողովը 2024 թվականի հունվարի 29-ի նիստում որոշել է իրականացնել Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանի, Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու անդամ Արամայիս Միրզոյանի և Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու անդամ Շահեն Շահինյանի, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի

	անդամների հայտարարագրերի համալիր վերլուծություն, որը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեռևս ընթացքի մեջ է:
7	*«Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչը 77 մլն դրամի ավանդ ունի», նոյեմբեր 29, 2023թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Վարդան Մանուկյանի կողմից ներկայացված հայտարարագրերի առչությամբ մամուլում տեղ գտած հրապարակմամբ արձանագրված առերևույթ խնդիրների վերաբերյալ ստուգում: Հանձնաժողովն իրականացրել է նաև Վարդան Մանուկյանի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն, որի շրջանակներում վերջինիս կողմից ներկայացվել է պարզաբանում նաև ավանդի գումարի առաջնային ծագման աղբյուրի վերաբերյալ: Մասնավորապես, Վարդան Մանուկյանը բարեվարքության ուսումնասիրության շրջանակներում պարզաբանել է, որ ավանդը ներդրվել է երկու անշարժ գույքերի վաճառքից ստացված եկամտի ստացման արդյունքում և Հանձնաժողով է ներկայացրել համապատասխան փաստաթղթերը: Արդյունքում Հանձնաժողովը եզրահանգել է, որ գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների արժանահավատության և օրինականության վերաբերյալ կասկածներ առկա չեն:
8	*«4,5 մլն դրամ, 21 հազար դոլար կանխիկ գումար, ևս 4,5 մլն դրամ՝ բանկային հաշիվներին. միայն «աշխատավարձով ապրող» Արմեն Ղուլարյանի ունեցվածքն ու հարուստ կարիերան. «Ժողովուրդ»», «Tert.am» լրատվական կայք, դեկտեմբեր 19, 2023թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացված տվյալների ստուգման շրջանակներում 2024 թվականին Հանձնաժողովն արձանագրել է, որ Արմեն Ղուլարյանի պաշտոնն ընդգրկված է Հանձնաժողովի՝ 2022 թվականի հոկտեմբերի 19-ի N 02-Լ և 2023 թվականի մայիսի 29-ի N 01-Լ որոշումներով հաստատված՝ հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչներով սահմանված պետական պաշտոնների ցանկում: Հանձնաժողովն իրականացրել է Արմեն Ղուլարյանի և նրա ընտանիքի անդամների 2021 և 2022 թվականների տարեկան հայտարարագրերի վերլուծություն: Վերլուծության

	արդյունքները քննարկվել են Հանձնաժողովի նիստում, որոշում է կայացվել արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ պարզաբանում հայցել Արմեն Ղուլարյանից և նրա ընտանիքի անդամից:
9	*«Հաշվետու եմ միայն ԿԿՀ-ին. Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչը՝ մեծ, բայց հայտարարագրում չարտացոլված ծախսերի մասին», «Infocom.am» լրատվական կայք, հունիս 27, 2023թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացված տվյալների ստուգման շրջանակներում 2024 թվականին Արտակ Թադևոսյանից պահանջվել է ներկայացնել պարզաբանում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ: Հանձնաժողովն անդրադարձել է նաև հրապարակմամբ նշված՝ 2021 թվականի տարեկան ծախսին, այն է՝ «(...) Արտակ Թադևոսյանը տարվա ընթացքում ծախսել է շուրջ 45,5 միլիոն դրամ, որից հայտարարագրում արտացոլված է միայն 5 միլիոն դրամը՝ որպես գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսեր, իսկ մնացած 40,5 միլիոն դրամը որևէ ձևով արտացոլված չէ հայտարարագրում:»: Հանձնաժողովն ընթացիկ տարեկան ծախսի հաշվարկն իրականացրել է ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի հաշվառմամբ՝ դիտարկելով վերջիններիս որպես մեկ տնտեսություն վարող սուբյեկտներ: Պարզաբանմամբ ներկայացված լրացուցիչ տվյալների համադրման արդյունքում պարզ է դարձել, որ Արտակ Թադևոսյանի կողմից սխալ են հայտարարագրվել մասնավորապես հիփոթեքային վարկին և օվերդրաֆթին վերաբերելի տեղեկությունները, որոնց, ինչպես նաև այլ տվյալների ճշգրտման արդյունքում վերահաշվարկվել և գնահատվել է Արտակ Թադևոսյանի և վերջինիս ընտանիքի անդամների ընթացիկ տարեկան ծախսը 2021 թվականի համար: Արդյունքում, Հանձնաժողովը, հաշվի առնելով անհամապատասխանությունների բնույթը և ենթադրյալ իրավախախտման համար վարչական տույժ նշանակելու՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 37-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետների անցած լինելը, որոշել է ավարտել ստուգումը և առաջարկել համապատասխան

	հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում ներկայացնել:
10	*«Անհատական բնակելի տուն, հողամաս, 2 բնակարան և այլն. ինչ ունեցվածք է հայտարարագրել ՔՊ-ական պատգամավոր Դավիթ Դանիելյանը. «Ժողովուրդ»», «Tert.am» լրատվական կայք, նոյեմբեր 16, 2023թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացված տվյալների ստուգման շրջանակներում 2024 թվականին Դավիթ Դանիելյանից պահանջվել է ներկայացնել պարզաբանում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ: Ստացված պարզաբանումների և դրանց կից ներկայացված նյութերի համադրման արդյունքում պարզ է դարձել, որ 31/12/2022 թվականի դրությամբ Դավիթ Դանիելյանին են պատկանել 3 անշարժ գույքեր, իսկ մեկ անշարժ գույքի մասով առկա է եղել կառուցվող շենքից գույք գնելու իրավունք: Անդրադարձ է կատարվել նաև մամուլում արձանագրված՝ Արտակ Խաչատրյանից ստացված եկամտին, որը ձևավորվել է Դավիթ Դանիելյանի նկարած նկարների վաճառքից: Պարզաբանման վերջնական գնահատման արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը, քանի որ գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների արժանահավատության և օրինականության վերաբերյալ կասկածներ առկա չեն եղել, իսկ ենթադրյալ իրավախախտման համար վարչական տույժ նշանակելու՝ Օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետներն անցել են:
11	*«Չարենցավանի համայնքապետը նախկին պատգամավոր Վահան Հարությունյանից 223 միլիոն դրամ եկամուտ է ստացել», «Hetq.am» լրատվական կայք, օգոստոս 9, 2023թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացված տվյալների ստուգման արդյունքում 2024 թվականին որոշում է կայացվել 2023 թվականի տարեկան հայտարարագրերի համադրմամբ իրականացնել Հակոբ Շահգալդյանի և իր ընտանիքի

	անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի համալիր վերլուծություն:
12	*«Որպես եկամուտ չհայտարարագրված վարկեր, վրիպակներ՝ ապօրինի գույքի բռնագանձման գործերով դատախազի հայտարարագրում», «Infocom.am» լրատվական կայք, հոկտեմբեր 30, 2023թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացված տվյալների ստուգման շրջանակներում Հանձնաժողովը պարզել է, որ հրապարակմանը նախորդող ժամանակահատվածում, մասնավորապես 2023 թվականի հուլիսի 3-ին, Հանձնաժողով է մուտքագրվել Միհրան Բուլղադարյանի՝ հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմումը, որով վերջինս հայտնել է, որ բացթողման պատճառով չի լրացվել հաշվետու տարվա ընթացքում բնակելի տան ձեռքբերման համար ստացված 17.500.000 ՀՀ դրամ վարկի վերաբերյալ տվյալները: Վերը նշված դիմումի հիման վրա համապատասխան հայտարարագրում փոփոխություն կատարելու գործընթացը հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի տեխնիկական խնդիրների պատճառով հնարավոր չի եղել տվյալ փուլում ապահովել նշված փոփոխությունների կատարումը, ուստի Հանձնաժողովն ստուգման ընթացքում դրանք արդեն կատարված է դիտարկել: Միաժամանակ, ուսումնասիրությամբ պարզվել է, որ այդ բնակելի տան ձեռքբերման գործարքի վերաբերյալ տվյալները հայտարարագրված են եղել նույն հայտարարագրի «Բ.1.2.1. Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված անշարժ գույք» բաժնում: Ինչ վերաբերում է հրապարակման մեջ արձանագրված մյուս առերևույթ անհամապատասխանություններին, ապա դրանց ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը հանգել է եզրակացության, որ հայտարարատուի գույքի, եկամուտների և կատարված ծախսերի օրինականության կամ արժանահավատության կասկած, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու կամ հայտարարագրերի վերլուծություն իրականացնելու հիմքեր առկա չեն, ուստի որոշել է ավարտել ուսումնասիրությունը՝ հիմք ընդունելով նմանատիպ դեպքերում Հանձնաժողովի իրավակիրառ պրակտիկան:

13	*«1 բնակարան, 2 ավտոմեքենա, շուրջ 215 մլն դրամ եկամուտ. ինչ է հայտարարագրել Շավարշ Գրիգորյանը. «Ժողովուրդ»», «Tert.am» լրատվական կայք, նոյեմբեր 10, 2023թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացված տվյալների ստուգման շրջանակներում 2024 թվականին Շավարշ Գրիգորյանից պահանջվել է ներկայացնել պարզաբանում 2020 թվականի պաշտոնական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրում համապատասխան արժեթղթերի վերաբերյալ նշումներ չկատարելու, անշարժ գույքի օտարման, իր մասնակցությամբ կազմակերպությունից հնարավոր եկամտի ստացման մանրամասների վերաբերյալ, որին ի պատասխան՝ Շավարշ Գրիգորյանը ներկայացրել է համապատասխան պարզաբանումներ և հիմնավորող փաստաթղթեր իր բաժնեմասնակցության, բաժնեմասնակցությունից ստացված եկամտի և իրեն պատկանող անշարժ գույքի վերաբերյալ: Մասնավորապես, պարզվել է, որ Շավարշ Գրիգորյանը 2021 թվականին օտարել է իրեն պատկանող ք.Երևան, Կենտրոն համայնքում գտնվող անշարժ գույքը, սակայն շարունակել է 90 և ավելի օր փաստացի բնակվել նշված բնակարանում, ինչը և հայտարարագրվել է համապատասխանաբար: Որպես շահաբաժին ստացված եկամուտների վերաբերյալ պարզվել է, որ հայտարարատուի բաժնեմասնակցությամբ ընկերության կողմից 2021 թվականի արդյունքներով շահույթի բաշխման որոշումը կայացվել է 2022 մայիս ամսին՝ պաշտոնական պարտականությունների դադարեցումից հետո, հետևաբար շահաբաժնի գծով եկամուտը ենթակա չի եղել հայտարարագրման: Պարզաբանման վերջնական գնահատման արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը:
14	*«Բացակայող տվյալներ և վրիպակներ Դատախազության՝ ապօրինի գույքի բռնագանձման վարչության պետի հայտարարագրերում», «Infocom.am» լրատվական կայք, հոկտեմբեր 29, 2023թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացված տվյալների ստուգման շրջանակներում 2024 թվականին Սիրո Ամիրխանյանից և վերջինիս ընտանիքի անդամներից պահանջվել է

	ներկայացնել պարզաբանում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ, որոնց վերջնական գնահատման արդյունքում, առկա չփարատված կասկածները հաշվի առնելով, Հանձնաժողովը որոշել է վերջիններիս 2023 թվականի տարեկան հայտարարագրերի ներկայացումից հետո իրականացնել Սիրո Ամիրխանյանի և նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի համալիր վերլուծություն:
15	*«Ավանի ՔՊ-ական թաղապետի հայրը թաունհաուսների բիզնես է սկսել», «Hetq.am» լրատվական կայք, սեպտեմբեր 15, 2023թ.:*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա իրականացված տվյալների ստուգման շրջանակներում Մանվել Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Ավան վարչական շրջանում գտնվող տունը չհայտարարագրելու հանգամանքն ուսումնասիրելու արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ հրապարակումից հետո՝ 26/09/2023 թվականին, Մանվել Հակոբյանը ներկայացրել է ուղղման դիմում՝ 2022 թվականի տարեկան հայտարարագրում բնակարանի տվյալներն ավելացնելու համար, սակայն ուղղման դիմումից պարզ չէ եղել, թե ո՞ր բնակարանի մասին է խոսքը: 2024 թվականին Հանձնաժողովը որոշել է վերադարձնել Մանվել Հակոբյանի կողմից ներկայացրած դիմումը՝ առաջարկելով նշել դիմումի մեջ նշված գույքը նույնականացնող տվյալներ: Այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումը ներկայացված է եղել հրապարակմանը նախորդող ժամանակահատվածում՝ Հանձնաժողովը որոշել է առերևույթ անհամապատասխանությունները դիտարկել դիմումով հայցվող փոփոխման ենթակա տվյալների հետ համադրմամբ: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ Հանձնաժողով չի ներկայացվել նոր դիմում:
16	*«ՌԴ 2 քաղաքացի էկոնոմիկայի փոխնախարար Նարեկ Տերյանից պահանջում է 450 000 դոլար պարտք վերադարձնել. փոխնախարարը հերքում է, որ գումար է վերցրել», «Factor.am» լրատվական կայք, մայիս 16, 2023:*

	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա հայտարարագրված տվյալների ստուգման արդյունքում Հանձնաժողովը որոշում է կայացրել իրականացնել Նարեկ Տերյանի և նրա ընտանիքի անդամի կողմից ներկայացված հայտարարագրերի համալիր վերլուծություն: Վերլուծության արդյունքում արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ Հանձնաժողովը Նարեկ Տերյանից և նրա ընտանիքի անդամից հայցել է պարզաբանում: Նարեկ Տերյանի և ընտանիքի անդամի կողմից ներկայացվել է պարզաբանում, որը գնահատման փուլում է:
17	*«Հատուկ նիստ՝ Պապիկյանի՝ $ 105.000 առեղծվածը բացահայտելու համա՞ր. ԿԿՀ-ի արտառոց պատասխանը», «yerkir.am» լրատվական կայք, օգոստոս 28, 2023թ.*, *«Պապիկյանի հարսանիքի $ 105,000-ի առեղծվածը. պարզաբանումը՝ նոր հարցերի տեղիք», «yerkir.am» լրատվական կայք, օգոստոս 15, 2023թ.*:
	Հրապարակումների մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա հայտարարագրված տվյալների ստուգման արդյունքում Հանձնաժողովը որոշել է իրականացնել Սուրեն Պապիկյանի և նրա ընտանիքի անդամների 2022 թվականի տարեկան հայտարարագրերի վերլուծություն: Վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների և պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ Հանձնաժողովը Սուրեն Պապիկյանից և նրա կնոջից հայցել է պարզաբանումներ, այդ թվում՝ որպես եկամուտ հայտարարագրված նվիրատվության գումարների վերաբերյալ, որոնց հանրագումարը դոլարային արտահայտությամբ կազմել է մոտ 78,200 ԱՄՆ դոլար: Ս.Պապիկյանը, ի թիվս այլ հարցերի, պարզաբանել է, որ նշված գումարը ստացել է հարսանիքի 490 հյուրերից, ներկայացրել է նաև նվիրատվության գումարները բանկային հաշիվներին մուտքագրելու գործարքները հիմնավորող բանկային քաղվածքները, հարսանեկան միջոցառման կազմակերպման և իրականացման համար կատարված ծախսերը, անկանխիկ եղանակով իրականացված ծախսերի վճարման հանձնարարագրերը: Ստացված պարզաբանումների գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ

	անհամապատասխանությունների վերաբերյալ Սուրեն Պապիկյանի կողմից ներկայացված պարզաբանումները փարատել են Հանձնաժողովի կասկածները, օրենքով Հանձնաժողովին վերապահված լիազորությունների շրջանակում այլ գործողություններ իրականացնելու իրավասություն չունի, ուստի որոշում է կայացվել վերլուծությունը համարել ավարտված, իսկ կնոջ՝ Արմինե Մուրադյանի մասով նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ (1457.pdf (cpcarmenia.am)):
18	*«Ներքին գործերի նորանշանակ փոխնախարար Դավիթ Համբարյանը չի հայտարարագրել իր բաժնեմասը», «hetq.am» լրատվական կայք, հունվար 24, 2023թ.*
	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա հայտարարագրված տվյալների ստուգման արդյունքում Հանձնաժողովը որոշել է իրականացնել Դավիթ Համբարյանի և նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի համալիր վերլուծություն: Վերլուծության արդյունքում արձանագրված պարզաբանման ենթակա հարցերի և անհամապատասխանությունների վերաբերյալ Հանձնաժողովը Դավիթ Համբարյանից և կնոջից հայցել է պարզաբանումներ: Ստացված պարզաբանումների գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ անհամապատասխանությունների վերաբերյալ Դավիթ Համբարյանի կողմից ներկայացված պարզաբանումները փարատել են Հանձնաժողովի կասկածները, օրենքով Հանձնաժողովին վերապահված լիազորությունների շրջանակում այլ գործողություններ իրականացնելու իրավասություն չունի, ուստի որոշում է կայացվել վերլուծությունը համարել ավարտված և թույլատրել հայտարարագրված տվյալներում կատարել փոփոխություն, իսկ կնոջ՝ Էմմա Խաչատրյանի մասով նախաձեռնել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:
19	*«ԲՀԿ-ից ՔՊ. Բագրատյանի ունեցվածքը. «Ժողովուրդ»», «armlur.am» լրատվական կայք, հուլիս 27, 2023թ.*

	Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության հիման վրա հայտարարագրված տվյալների ստուգման արդյունքում Հանձնաժողովը որոշել է իրականացնել Սերգեյ Բագրատյանի և նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի համալիր վերլուծություն: Վերլուծության արդյունքում արձանագրված պարզաբանման ենթակա հարցերի և անհամապատասխանությունների վերաբերյալ Հանձնաժողովը Սերգեյ Բագրատյանից և նրա կնոջից հայցել է պարզաբանումներ և հիմնավորող փաստաթղթեր: Ստացված պարզաբանումները գնահատման փուլում են:

Միաժամանակ, կուսակցությունների 2022 և 2023 թվականների տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքում հաշվետվությամբ ներկայացված նվիրատվությունների վերաբերյալ տվյալների արժանահավատությունն ստուգելու համար իրականացվել է կուսակցությանը նվիրատվություն կատարած՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատու անձանց, մասնավորապես՝ 36 պաշտոնատար անձանց և ընտանիքի 32 անդամների՝ 68 հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ստուգում, որոնց արդյունքերով բոլոր այն դեպքերում, երբ առկա են եղել վարչական իրավախախտման վերաբերյալ առերևույթ դեպքեր, հարուցվել են առանձին վարչական վարույթներ, իսկ արդյունքում ընդունված վարչական ակտերը հրապարակված են Հանձնաժողովի պաշտոնական կայքի «Որոշումներ» բաժնում:

3.2 Հայտարարագրերի վերլուծություն

Հիմք ընդունելով Հանձնաժողովի՝ 2022 թվականի հոկտեմբերի 19-ի՝ «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների ցանկը հաստատելու մասին» թիվ N 02-Լ, Հանձնաժողովի՝ 2023 թվականի մայիսի 29-ի՝ «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների շրջանակը հաստատելու մասին» N 01-Լ որոշումները, ինչպես նաև ՀԼՄ հրապարակումները՝ 29 պաշտոնատար անձանց և վերջիններիս ընտանիքի 41 անդամների 133 հայտարարագրերը վերլուծվել և քննարկվել են Հանձնաժողովի նիստում:

Քննարկված վերլուծությունների և ստացված պարզաբանումների գնահատման արդյունքում 30 հայտարարատուների հայտարարագրերի վերլուծությունն ավարտվել է՝ գույքային դրության արժանահավատության վերաբերյալ կասկածները փարատվելու (գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների անարժանահավատությունը հիմնավորող բավարար հիմքերի բացակայության) հանգամանքով, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու հիմքերի բացակայությամբ պայմանավորված:

3 անձանց նկատմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

Մնացած պարզաբանումները հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ գնահատման փուլում են:

IV. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

4.1 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտ

2024 թվականի հունվարի 29-ին Հանձնաժողովն ընդունել է *«Կուսակցությունների՝ հաշվետու տարվան հաջորդող յուրաքանչյուր տարում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացվող տարեկան հաշվետվության պարտադիր աուդիտի ենթակա լինելու հանգամանքը պարզելու, ինչպես նաև աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար հայտարարվող բաց մրցույթի կազմակերպման նպատակով ներկայացվող անհրաժեշտ տեղեկությունների ցանկը, ձևաթուղթը և ժամկետները սահմանելու մասին»* N 01-Ն որոշումը, որով, ի թիվս այլնի, սահմանվել է, որ կուսակցություններն անհրաժեշտ տեղեկությունները ներկայացնում են մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 31-ը, իսկ 2023 թվականի հաշվետու տարվա համար՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 25-օրյա ժամկետում: Որոշումն ուժի մեջ է մտել 2024 թվականի փետրվարի 7-ին, որից հետո՝ 25-օրյա ժամկետում 46 կուսակցություն Հանձնաժողով է ներկայացրել տարեկան հաշվետվության պարտադիր աուդիտի ենթակա լինելու հանգամանքը պարզելու, ինչպես նաև աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար հայտարարվող բաց մրցույթի կազմակերպման նպատակով անհրաժեշտ տեղեկություններ, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ բացի պետական ֆինանսավորման ենթակա 5 կուսակցություններից, հաշվետու տարվա ընթացքում կուսակցության մուտքերը կամ ելքերն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգհազարապատիկը գերազանցելու հիմքով աուդիտի են ենթակա նաև 3 կուսակցությունների տարեկան հաշվետվություններ, դրանք են՝ «Հայաստանի հանրապետական», «Հայրենիք» և «Ապրելու երկիր» կուսակցությունները:

Վերը նշված 8 կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտի գործընթացը կազմակերպելու նպատակով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ին ուղարկված՝ անդամակցող աուդիտորական կազմակերպություններից գնային առաջարկ ներկայացնելու մասին գրությանն ի պատասխան աուդիտորական կազմակերպությունների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները՝

N	Կուսակցության անվանումը	Մրցութային ծածկագրեր	Աուդիտորական կազմակերպության անվանումը		
			ԹՄ ԱՈՒԴԻՏ	ԹՐԱՍԹ ԱՈՒԴԻՏ	ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ
1	«Վերածնվող Հայաստան»	ԿՏՀԲՄԾ-2024/1	1,560,000	1,500,000	1,400,000
2	«Հայ յեղափոխական դաշնակցություն»	ԿՏՀԲՄԾ-2024/2	3,480,000	3,000,000	3,450,000
3	«Բարգավաճ Հայաստան»	ԿՏՀԲՄԾ-2024/3	2,880,000	1,800,000	1,700,000
4	«Հանրապետություն»	ԿՏՀԲՄԾ-2024/4	1,680,000	1,560,000	1,500,000
5	«Քաղաքացիական պայմանագիր»	ԿՏՀԲՄԾ-2024/5	7,080,000	7,200,000	9,100,000
6	«Ապրելու երկիր»	ԿՏՀԲՄԾ-2024/6	3,000,000	3,000,000	3,500,000
7	«Հայաստանի հանրապետական կուսակցություն»	ԿՏՀԲՄԾ-2024/7	4,200,000	4,200,000	4,400,000
8	«Հայրենիք»	ԿՏՀԲՄԾ-2024/8	2,160,000	1,800,000	1,800,000

Ներկայացված առաջարկների հիման վրա սահմանված մեթոդաբանությամբ որոշվել է յուրաքանչյուր կուսակցության տարեկան հաշվետվության աուդիտի պայմանագրի գինը և 2024 թվականի մարտի 15-ին հաստատվել է «Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի

կազմակերպման նպատակով աուդիտորական կազմակերպությունների ընտրության բաց մրցույթի հայտարարությունը հաստատելու մասին» հայտարարությունը, համաձայն որի՝ Հանձնաժողովը հայտարարել է մրցույթ՝ վերոնշյալ 8 կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների պարտադիր աուդիտի իրականացման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով:

Նշված մրցույթին մասնակցության հայտեր են ներկայացրել «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն, «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ն և «Քեյէմջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ն:

Ներկայացված մրցութային առաջարկների բացման և գնահատման արդյունքում յուրաքանչյուր կուսակցության տարեկան հաշվետվության աուդիտի իրականացման համար վիճակահանության փուլ են անցել 3 աուդիտորական կազմակերպություններ, որոնց միջև տեղի ունեցած հրապարակային վիճակահանության արդյունքում սահմանվել են վերջնական հաղթող կազմակերպությունները և վերջիններիս առաջարկվել է կնքել աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրեր, ինչի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև.

N	**Աուդիտորական կազմակերպության անվանում**	**Կուսակցության անվանում**	**Պայմանագրի արժեք (ՀՀ դրամ)**	**Պայմանագրի կնքման ամսաթիվ**
1	«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	«Վերածնվող Հայաստան»	1,500,000	12.04.2024
2	«ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ	«Հայ յեղափոխական դաշնակցություն»	3,450,000	15.04.2024
3	«ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ	«Բարգավաճ Հայաստան»	1,800,000	15.04.2024
4	«ԹՐԱՍԹ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	«Հանրապետություն»	1,560,000	15.04.2024
5	«ԹՐԱՍԹ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	«Քաղաքացիական պայմանագիր»	7,200,000	15.04.2024

6	«ԹՐԱՍԹ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	«Ապրելու երկիր»	3,000,000	15.04.2024
7	«ԹՐԱՍԹ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	«Հայաստանի հանրապետական» կուսակցություն	4,200,000	15.04.2024
8	«ԹՐԱՍԹ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	«Հայրենիք» կուսակցություն	1,800,000	15.04.2024

Կնքված պայմանագրերի հիման վրա աուդիտորական կազմակերպությունների կողմից տրվել են համապատասխան աուդիտորական եզրակացություններ, որից 2-ի կատարման ժամկետը հետաձգվել է համաձայն Հանձնաժողովի և «Քեյէմջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ի միջև կնքած համաձայնագրի՝ պայմանավորված աուդիտորական կազմակերպության կողմից ներկայացված հիմնավորմամբ առ այն, որ աուդիտի իրականացման համար անհրաժեշտ լրացուցիչ աուդիտորական ապացույցների և հավաստումների ձեռքբերման անհրաժեշտություն կա:

Հաշվետու ժամանակաշրջանում աուդիտորական կազմակերպությունների կողմից ստացվել են նաև պետական ֆինանսավորման և պարտադիր աուդիտի ենթակա կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտորական եզրակացությունները, որոնք հիմք են հանդիսացել պետական ֆինանսավորման ենթական կուսակցությունների 2022 թվականի հաշվետվությունների ստուգման համար:

4.2 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում

Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործառույթի համատեքստում Հանձնաժողովն իրականացրել է պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգումը, ինչի շրջանակներում անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր են ստացվել նաև կուսակցություններից, որոնք

համադրվել են պետական մարմիններից ստացված տեղեկությունների, ինչպես նաև կուսակցությունների տարեկան հաշվետվություններով ներկայացված տվյալների հետ: Ստուգման համար ի թիվս վերոնշյալի՝ հիմք են հանդիսացել նաև աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունները:

Կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում բոլոր այն դեպքերում, երբ հայտնաբերվել են վարչական իրավախախտման առերևույթ հատկանիշներ նախաձեռնվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ հարուցելու գործընթացներ, որոնք հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ ամփոփման փուլում են: Հայտնաբերված առերևույթ խախտումները վերաբերվել են կուսակցության հրապարակած և լիազոր մարմին ներկայացրած հաշվետվության հավաստիությունը ստուգելու համար լիազոր մարմնի պահանջի դեպքում օրենքով սահմանված փաստաթղթերի՝ սահմանված ժամկետում ամբողջ ծավալով չտրամադրելու, նվիրատուների կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու, կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու, կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելու դեպքերին:

Միաժամանակ, ստուգման գործընթացում հայտնաբերվել են առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող դեպքեր, որոնց վերաբերյալ գործի նյութերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի համաձայն՝ *Պետական նպատակային ֆինանսավորումը տրամադրելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ընդունում է որոշում, որի մասին ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը:* Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունվել է *«««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին»* սահմանադրական օրենքը, որի 1-ին հոդվածով փոփոխություն է կատարվել *««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»* 2020 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՕ-1-Ն սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասում, որով սահմանվել է, որ *կուսակցությունների պետական նպատակային ֆինանսավորումը 2022 և 2023 թվականների համար տրամադրվում է ամբողջությամբ՝ առանց Օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերով*

սահմանված պահանջների ապահովման: Նման պայմաններում պետական ֆինանսավորումը նվազեցնելու կամ չտրամադրելու՝ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքները որևէ կերպ չեն անդրադառնում կուսակցությունների պետական նպատակային ֆինանսավորման տրամադրման վրա, ինչպես նաև ստուգման պահի դրությամբ արդեն իսկ վերը նշված ֆինանսավորման միջոցները տրամադրված են եղել կուսակցություններին, ուստի այս մասով Հանձնաժողովը առանձին որոշում չի կայացրել, սակայն ստուգման գործընթացում ուսումնասիրել է համապատասխան հիմքերի առկայության կամ բացակայության փաստը:

Հարկ է նշել, որ կուսակցություններին նվիրատվություն կատարելու դեպքերի առթիվ մամուլի մի շարք հրապարակումների հիման վրա, ուսումնասիրվել են նաև այն անձանց հայտարարագրերը, որոնք նվիրատվություն են կատարել կուսակցությանը և, միաժամանակ, հանդիսացել են «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատու, պարզելու, թե արդյո՞ք կուսակցության տարեկան հաշվետվությամբ ներկայացված չափով կուսակցությանը նվիրատվություն կատարելը հիմնավորվում է այդ անձանց և իրենց ընտանիքի անդամների հայտարարագրած տվյալներով: Արդյունքում, բոլոր այն դեպքերում, երբ բացահայտվել է, որ կուսակցությանը նվիրատվություն կատարած անձանց դրամական միջոցները կամ եկամուտները չեն բավարարել կուսակցության տարեկան հաշվետվությամբ ներկայացված չափով նվիրատվություն կատարելու համար կամ բացահայտվել են սխալ կամ թերի հայտարարագրված տվյալներ, այդ թվում՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալների չհայտարարագրման դեպքեր, հարուցվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ, որոնց արդյունքում ընդունված վարչական ակտերը հրապարակել են Հանձնաժողովի պաշտոնական կայքի «Որոշումներ» բաժնում:

Վերոնշյալից բացի՝ հաշվետու ժամանակահատվածում աուդիտորական կազմակերպությունների կողմից պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտորական եզրակացությունները ստանալուց հետո Հանձնաժողովն սկսել է այդ հաշվետվությունների ստուգման գործընթացը:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 26-ի «Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգելու մասին» որոշմամբ կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգվել է 60 (վաթսուն) օրով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պետական ֆինանսավորում ստանալու

իրավունք ունեցող կուսակցություններից «Հանրապետություն», «Վերածնվող Հայաստան» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտորական եզրակացություններն ստացվել են 2024 թվականի մայիսի 30-ին, որից հետո տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքում ինչպես պետական մարմիններից, այնպես էլ կուսակցություններից տեղեկություններ և փաստաթղթեր են պահանջվել, սակայն դեռևս ամբողջ ծավալով չեն ստացվել, իսկ «Հայ յեղափոխական դաշնակցություն» և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտորական եզրակացություններն ստացվել են 2024 թվականի հունիսի 25-ին: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման գործընթացն ընթացքի մեջ է:

4.3 Կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների հրապարակում և ներկայացում

«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն), իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը:*

Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է ուսումնասիրություն՝ պարզելու կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվություններն օրենքով սահմանված կարգով և ժամկետում հրապարակելու, ինչպես նաև Հանձնաժողով ներկայացնելու՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված պահանջների պահպանվածությունը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ օրենքով սահմանված կարգով և ժամկետում չեն հրապարակվել կամ Հանձնաժողով չեն ներկայացվել 45 կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվություններն, ուստի առերևույթ վարչական իրավախախտման դեպքի առթիվ վերջիններիս պաշտոնատար անձանց նկատմամբ նախաձեռնվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ, ինչի վերաբերյալ այդ պաշտոնատար անձանց ուղարկվել են գրավոր ծանուցումներ: Նշված անձանցից 29-ը պատշաճ ծանուցվել են՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակցելու, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու նպատակով Հանձնաժողով ներկայանալու վերաբերյալ:

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրերը նշանակվել են 2024 թվականի հուլիս ամսին, դրանց վերաբերյալ տեղեկությունները կհրապարակվեն Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

4.4 Միջազգային համագործակցություն

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ակտիվորեն համագործակցել է միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ «ԱՅ ԷՖ Ի ԷՍ» կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) հետ Հանձնաժողովի՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության մանդատի շրջանակներում: Համագործակցության ընթացքում իրականացվել են մի շարք ծրագրեր:

Այսպես, 2024 թվականի մարտի 13-15-ը տեղի է ունեցել «Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների ստուգման և վերլուծության միջազգային լավագույն փորձի վերաբերյալ» թեմայով աշխատաժողով, որի շրջանակներում Հանձնաժողովի աշխատակազմի համար իրականացվել է վերապատրաստման ծրագիր՝ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման և վերլուծության միջազգային լավագույն փորձի վերաբերյալ:

Միաժամանակ, Կազմակերպության ֆինասավորմամբ և համապատասխան փորձագետի ներգրավմամբ Կազմակերպությունը տեխնիկական աջակցություն է

ցուցաբերում Հանձնաժողովին կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման կարգի մշակման աշխատանքներում:

Կազմակերպության կողմից ֆինանսավորվել են Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության բաժնի ներկայացուցչի՝ յուրաքանչյուր տարի Պրահայում կազմակերպվող «Քաղաքական ֆինանսների վերահսկողություն» թեմայով աշխատաժողովին մասնակցության հետ կապված ծախսերը:

Կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ քննարկվել է Հանձնաժողովի և Կազմակերպության հետագա համագործակցությունը, ինչի արդյունքում Հանձնաժողովը ներկայացրել է աջակցության հայտ հետևյալ ուղղություններով.

1. ԿԿՀ կարողությունների հետագա զարգացում – կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկման համատեքստում իրավական կարգավորումների (վարչական պատասխանատվություն, վարույթներ, ընթացակարգ, քրեական հաղորդումներ) և խորացված ֆինանսական վերլուծությունների իրականացման վերաբերյալ վերապատրաստումներ,

2. Կուսակցությունների կարողությունների զարգացում – ֆինանսական հաշվետվությունների լրացման կանոններ, առանձնահատկություններ, ԿԿՀ կողմից արդեն կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ վերապատրաստումների շարք,

3. Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հավաքագրման նոր էլեկտրոնային համակարգի օգտագործման, հաշվետվությունների լրացման ուղեցույցների վերաբերյալ տեսահոլովակների թողարկում,

4. 2022 և 2023 թվականների ֆինանսական հաշվետվությունների ստուգման արդյունքների ներկայացման և ամփոփման նպատակով կազմակերպվող բարձր մակարդակի միջոցառման կազմակերպում 2024 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում,

5. Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հավաքագրման նոր էլեկտրոնային համակարգի հետագա զարգացում, վերլուծական մոդուլի կառուցում, ռիսկային հաշվետվությունների դուրսբերման ինքնաշխատ համակարգ, գործերի կառավարման էլեկտրոնային համակարգ (case management system):

4.5 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների և ղեկավար մարմնի անդամների հայտարարագրերի՝ էլեկտրոնային եղանակով ներկայացում

Հանձնաժողովի էլեկտրոնային համակարգում ներդրվել է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման բաղադրիչը, որի ֆունկցիոնալությունը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ փորձարկման փուլում է: Աշխատանքների ամփոփումից հետո նախատեսվում է, որ կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունները կներկայացվեն էլեկտրոնային եղանակով:

Կուսակցությունների ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում՝ այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի՝ էլեկտրոնային նոր համակարգի միջոցով ներկայացման բաղադրիչը նույնպես ներդրվել է, որը նախատեսվում է փորձարկել և գործարկել մինչև տարեվերջ:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

V. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացված վարույթներ

Կոռուպցիայի կանխարգելման հարցում առանցքային նշանակություն ունեն Հանձնաժողովին օրենսդրությամբ վերապահված՝ առանձին տեսակի վարույթներ իրականացնելու լիազորությունները, ինչպես նաև կոնկրետ գործերով դրանց իրացման արդյունքում կայացված որոշումներն ու եզրակացությունները:

Հանձնաժողովը կոնկրետ գործերով վարույթների հարուցմամբ իրականացվում է *արտաքին ներգործություն ունեցող վարչարարություն:* Գործերի առանձնահատկություններով պայմանավորված՝ Հանձնաժողովը համակարգային առումով մեկնաբանում է *օրենսդրական կարգավորումների բովանդակային նշանակությունը, այս առնչությամբ, մասնավորապես,* գործում առկա հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերը *վերլուծության են ենթարկվում* օրենքի ձևական և բովանդակային տեսանկյունից՝ կիրառվող նորմի և դրանով հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ հարաբերակցությունը պահպանելու նպատակով:

Վարույթների արդյունքում պաշտոնատար անձանց նկատմամբ Հանձնաժողովի կողմից ընդունվող որոշումներով և եզրակացություններով հաստատվում են կոնկրետ պաշտոնատար անձանց կողմից կատարված խախտումները հիմնավորող փաստեր: Նշված վարչարարությունը գործնական առումով զսպող նշանակություն ունի պարշտոնատար անձանց կոռուպցիոն բնույթի հնարավոր հակահիրավական վարքագծի կանխարգելման համար:

Հանձնաժողովն օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով **հաշվետու ժամանակատվածում** իրականացրել է ընդհանուր առմամբ թվով 377 հետևյալ տեսակի վարույթներ՝

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված՝

- հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներ,
- շահերի բախման վերաբերյալ կարգավորումները խախտելու վերաբերյալ վարույթներ
- կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման հետ կապված իրավախախտումների վերաբերյալ վարույթներ

- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված կարգապահական վարույթ

- «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված առերևույթ խախտումների վերաբերյալ վարույթներ՝
  - անհամատեղելիության պահանջների
  - շահերի բախման դեպքի
  - վարքագծի կանոնների

1.1 Վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներ

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացվել են վարչական իրավախախտման վերաբերյալ թվով 367 վարույթներ, որոնց համար հիմք են հանդիսացել Վարչական իրավախախատումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 169.31-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտումները:

Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, ինչպես նաև 169.31-րդ հոդվածի 1-ին մասովիրականացված գործերի քննության արդյունքում Հանձնաժողովը կիրառել է թվով 30 տույժ, որից 18-ը Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին հատկանիշներով, այն է՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված

ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու, թվով 11 տույժ՝ 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի հատկանիշներով, այն է՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու, իսկ թվով 1 տույժ՝ 169.31-րդ հոդվածի 1-ին հոդվածի հատկանիշներով, այն է՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու հատկանիշով:

Հաշվետու ժամանակահատվածում «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հայտարարագրերը չներկայացնելու խախտումների կապակցությամբ իրականացված վարույթների արդյունքում վարչական իրավախախտումների վերաբերյալ թվով 98 գործեր կարճվել են՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից գործի քննության ընթացքում ներկայացվել են այն հայտարարագրերը, որոնց կապակցությամբ հարուցվել էին կոնկրետ վարույթները: Նշված գործերով Հանձնաժողովի կողմից պատճառաբանվել են կայացված որոշումները՝ արձանագրելով, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովն անհրաժեշտ է համարել յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյո՞ք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է համարվել խախտման (արարքի) որակական կողմն_այն առումով արդյո՞ք այն ունի նվազ նշանակություն, թե ոչ: Նշվածով պայմանավորված՝ մինչև գործի քննության օրը հայտարարագիրը ներկայացնելու արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը, Հանձնաժողովի գնահատմամբ չի խաթարվում:

Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ թվով 2 վարույթներ կարճվել են վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի անցման հիմքով: Հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակահատվածում կասեցվել և ընթացքի մեջ են գտնվում թվով 8 վարույթներ: Նշված վարույթների ընթացքը կասեցվել է մինչև «Վարչարարության և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված հիմքերով կասեցման հանգամանքի վերանալը:

Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ թվով 1 գործի (*Ա. Մ.*) քննության արդյունքում Հանձնաժողովի կողմից որոշում չի կայացվել: Տվյալ գործի հանգամանքների քննարկման վերաբերյալ նիստի արձանագրությունը հրապարակված է

Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հետևյալ հղումով՝ http://cpcarmenia.am/files/legislation/1457.pdf:

Մնացյալ վարույթները հաշվետու ժամանակահատվածում գտնվում են ընթացիկ փուլում:

Հանձնաժողովի կողմից Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված, այն է՝ կուսակցությունների 2021 և 2022 թվականների ընթացքում ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունները օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու կամ դրանք օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու հիմքով 2023 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում հարուցվել էին թվով 107 վարույթներ, որոնցից հաշվետու տարվա ընթացքում եզրափակվել էին միայն 49 վարույթներ: Նշված վարույթներից թվով 58-ը հաշվետու ժամանակահատվածում դեռևս գտնվել են ընթացի մեջ, որոնցից 40-ը եզրափակվել են արարքի նվազ նշանակության հիմքով, որի արդյունքում կուսակցությունների պատասխանատու պաշտոնատար անձինք ազատվել են պատասխանատվությունից և վերջիններիս օրենքով սահմանված կարգով հայտարարվել է բանավոր դիտողություն: Հանձնաժողովի եզրահանգման համար հիմք է հանդիսացել, մասնավորապես այն հանգամանքը, որ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածով նախատեսված դրույթը խախտված լինելու առնչությամբ արարքը հայտնաբերվել և խախտման կապակցությամբ ծանուցումներ էին ներկայացվել առաջին անգամ: Միաժամանակ, համակցության մեջ գնահատված այն հանգամանքը, որ մինչև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ավարտը ներկայացվել են տարեկան հաշվետվությունները և դրանց հրապարակման փաստը վկայող ապացույցները: Նշված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերից թվով 18-ի պարագայում վարույթները եզրափակվել են կուսակցությունների պատասխանատու պաշտոնատար անձանց նկատմամբ վարչական տույժերի կիրառման մասին որոշումների ընդունմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցվել, և հաշվետու ժամակահատվածում դեռևս ընթացքի մեջ են գտնվում թվով 26 վարույթներ:

Հատկանշական է այն, որ 2023 թվականի հունվարի 2-ին ուժի մեջ մտած «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-542-Ն օրենքով Հանձնաժողովին էին վերապահվել նաև շահերի բախման վերաբերյալ կարգավորումները խախտելու կապակցությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների իրականացման իրավասությունը: Նշված բնույթի վարչական իրավախախտումների վերաբերյալ

Հանձնաժողովի կողմից եզրափակվել է թվով 1 վարույթ, իսկ թվով 1-ը՝ հարուցվել է և գտնվում է ընթացիկ փուլում: Նշված բնույթի վարչական իրավախախտման մասով *առաջին անգամ գործի քննություն իրականացնելու և իրավակիրառ պրակտիկա ձևավորվելու* առիթ է հանդիսացել լրատվամիջոցի հրապարակումը՝ («Հետք» լրատվամիջոցի՝ «Թալինի ղեկավարը մոտ 16 մլն դրամի պայմանագիր է կնքել իր ընտանիքին պատկանող ընկերության հետ» վերտառությամբ հրապարակումը)[1]:

Հիշատակված հրապարակմամբ ներկայացված տեղեկատվության հիման վեր են հանվել համայնքի ղեկավարի (Տ. Ս.) կողմից դրևորված արարք՝ Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով, որի կապակցությամբ Հանձնաժողովի կողմից հարուցվել և իրականացվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթ: Նշված գործի քննությունը եզրափակվել է Հանձնաժողովի կողմից համայնքի ղեկավարի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին որոշման ընդունմամբ (http://cpcarmenia.am/files/legislation/1391.pdf):

Հիշատակված վարչական ակտի (որոշման) կայացմամբ, Հանձնաժողովը, մասնավորապես, համակարգային առումով վերլուծել է Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշները, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված այն իրավանորմերի պահանջները, որոնց չպահպանման արդյունքում վրա է հասնում վարչական պատասխանատությունը:

Այսպես, նշված գործով Հանձնաժողովն իր կողմից կայացված որոշման պատճառաբանական մասում արձանագրել է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորումների վերլուծությունից բխում է, որ իրավասու մարմին (Հանձնաժողով) շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին հայտարարություն ներկայացնելու պարագայում անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց՝ բացառություն սահմանելով միայն այն դեպքերի համար, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ: Նշված իրավակարգավորմամբ նախատեսվում է շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու պարտականություն, որը չկատարելու համար վարչական

[1] https://hetq.am/hy/article/162667

պատասխանատվություն է նախատեսված Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով: Նշված դրույթով սահմանված զանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվում է իրավասու մարմին հայտարարություն չներկայացնելու արարքով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթով հաստատված փաստական հանգամանքներով պայմանավորված՝ Հանձնաժողովը նշված գործով եզրահանգել է, որ վարույթի մասնակիցը (համայնքի ղեկավարը) պարտավոր էր, իր պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա իր մասնավոր շահի ազդեցության չեզոքացում ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ձեռնպահ մնալ գործողություն կատարելուց, տվյալ պարագայում գնման պայմանագրի կնքումից և օրենքով սահմանված ժամկետում հայտարարություն ներկայացնել իրավասու մարմին (Հանձնաժողով): Մինչդեռ, վարույթի մասնակիցը սահմանված ժամկետում ոչ միայն Հանձնաժողով չի ներկայացրել նշված հայտարարությունը, այլև, որպես պատվիրատուի ղեկավար, իր լիազորությունների շրջանակում, կատարել է գործողություն՝ կնքելով իր հետ փոխկապակցված անձի բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպության հետ պայմանագիր՝ այդ կերպ հայտնվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով շահերի բախման իրավիճակում:

1.2 «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված կարգապահական վարույթ

Հանձնաժողովը հանդիսանում է կարգապահական վարույթ հարուցող մարմին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված *<u>վարքագծի կանոնների խախտման հիմքով</u>*, այն է՝ օրենքով սահմանված կարգով գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր չներկայացնելու և օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Հանձնաժողովին պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ չներկայացնելու դեպքում, իսկ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, իրավասու մարմնի միջնորդության հիման վրա, լուծում է Բարձրագույն դատական խորհուրդը:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից հարուցվել է մեկ կարգապահական վարույթ ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավորի նկատմամբ*: Նշված վարույթը հարուցվել է* «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենք 25-րդ հոդվածի 6.1-րդ մասի ուժով՝ *հայտարարագրերի վերլուծության արդյունքում հայտնաբերված՝ հայտարարագրման ենթակա տվյալներին առնչվող առերևույթ*

խախտումների հիմքով հարուցված ***վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների հարուցմանը զուգահեռ:*** *Ընդ որում, կոնկրետ պաշտոնատար անձի հայտարարագրերի վերլուծությունն իրականացվել է* Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 29-ի «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման պետական պաշտոնների շրջանակը հաստատելու մասին» N 01-Լ որոշման հիման վրա:

Նշված կարգապահական վարույթը հաշվետու ժամանակահատվածում դեռևս գտնվում է ընթացիկ փուլում, իսկ կարգապահական վարույթին զուգահեռ հայտարարագրմանն առնչվող խախտումների հիմքով հարուցվածվարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթը Հանձնաժողովի կողմից եզրափակվել է պաշտոնատար անձի (Ա.Բ.) նկատմամբ վարչական տույժի միջոցի կիրառմամբ:

1.3 Անհամատեղելիության պահանջների, շահերի բախման դեպքերի, վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ վարույթներ

Հաշվետու ժամանակահատվածին նախորդող՝ 2023 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում հարուցված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների հիմքով Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի (Ա.Կ) և Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի (Գ.Ի) նկատմամբ հարուցված թվով **2** վարույթները գտնվել են ընթացիկ փուլում և եզրափակվել են հաշվետու տարվան հաջորդող հունվար ընթացքում:[2] Նշված վարույթները եզրափակվել են խախտման բացակայության մասին եզրակացությունների ընդունմամբ: Հանձնաժողովի նման եզրահանգման համար հիմք է հանդիսացել, մասնավորապես այն, որ վարույթի մասնակիցը (Ա.Կ) այլևս չի հանդիսացել համայնքի ավագանու անդամ, հետևաբար գործով քննարկված հանգամանքների շրջանակում, Հանձնաժողովը եզրահանգել է, որ վերացվել է պետական վարչական պաշտոն զբաղեցնող անձի կողմից այլ՝ համայնքի ավագանու անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու խախտումը, որի կապակցությամբ պետք է ընդունվեր համապատասխան եզրակացություն: Ինչ վերաբերում է Գ.Ի-ի նկատմամբ իրականացված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով իրականացվող վարույթին, ապա գործում առկա վարույթի նյութերը, ինչպես նաև քննարկվող հանգամանքները

[2] 1267.pdf (cpcarmenia.am)
1301.pdf (cpcarmenia.am)

գործող օրինադրույթների պահանջների համադրման արդյունքում, Հանձնաժողովն արձանագրել է գույքի (քննվող վարույթով պաշտոնատար անձի բաժնեմասի) հավատարմագրային կառավարման ինստիտուտի նկատմամբ վերահսկողական մեխանիզմի արդյունավետության խնդիրներ:

Մասնավորապես, մինչև 2022 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված ՀՕ-543-Ն օրենքի ուժի մեջ մտնելը (ուժի մեջ է մտել 2023 թվականի հունվարի 3-ին) առևտրային կազմակերպության՝ մասնավորապես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տեղեկությունների գրառման պահանջ օրենսդրությամբ սահմանված չի եղել: Հետևաբար, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը առևտրային կազմակերպության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տեղեկություններ պարունակող միասնական պետական գրանցամատյանը սկսել է վարել 2023 թվականի հունվարի 3-ից հետո կնքվող և գործակալություն ներկայացվող հավատարմագրային կառավարման պայմանագրերի մասով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև նշված իրավակարգավորումներն ուժի մեջ մտնելը առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տեղեկությունների գրառման պահանջ օրենսդրությամբ սահմանված չի եղել, Հանձնաժողովը օբյեկտիվորեն հնարավորություն չունի ձեռք բերելու առևտրային կազմակերպության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու փաստական հանգամանքի վերաբերյալ որևէ ապացույց, որպիսի հանգամանքներում վարչական մարմինն առաջնորդվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված ապացուցման բեռի կանոնակարգումների, ինչպես նաև նույն օրենքով սահմանված վարչարարության հիմնարար սկզբունք հանդիսացող հավաստիության կանխավարկածով, որի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքի հիմքով նախորդող հաշվետու ժամանակահատվածներում իրականացվող թվով 2 գործով նյութերը Գլխավոր դատախազություն ուղարկելու հիմքով կասեցված վարույթները (ԱԺ

պատգամավորի և համայնքի ղեկավարի) վերսկսվել և եզրափակվել են հաշվետու տարվան հաջորդող մարտ ամսվա ընթացքում[3]:

Նշված վարույթներից (Ա.Չ.) մեկը եզրափակվել է խախտման բացակայության մասին եզրակացության ընդունմամբ: Նշված գործով, մասնավորապես, Հանձնաժողովը համակարգային առումով վերլուծության է ենթարկել անհամատեղելիության պահանջների խախտումների հիմքով իրականացվող վարույթների բովանդակային նշանակությունը: Այսպես, վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների և կիրառելի իրավական նորմերի պահանջների վերլուծության համադրմամբ՝ Հանձնաժողովը տվյալ գործով արձանագրել է, որ վարույթի մասնակցի՝ որպես պատգամավորի, լիազորությունները դադարեցված լինելու պարագայում, տեղի է ունեցել իրավիճակի փոփոխություն, որով պայմանավորված վերացել է Հանձնաժողովի կողմից վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը: Այս առումով Հանձնաժողովն արձանագրել է նաև այն իրողությունը, որ Ազգային ժողովի պատգամավորն ունի պետական իշխանության օրենսդիր, ներկայացուցչական մարմնի անդամի սահմանադրաիրավական կարգավիճակ, ինչն անհամատեղելի է գործունեության որոշակի տեսակների հետ: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար օրենսդրությամբ սահմանված որոշակի արգելքների ու սահմանափակումների հիմնական նպատակը *կոռուպցիայի կանխարգելումն է, այդ թվում՝ շահերի հնարավոր բախման իրավիճակների բացառումը՝ պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունները դադարեցնելու միջոցով:*

Հաշվետու ժամանակատվածում վերսկսված մյուս վարույթը (Մ.Մ.) եզրափակվել է *անհամատեղելիության պահանջի խախտման և իրավիճակային շահերի բախման դեպքի առկայության մասին Հանձնաժողովի եզրակացության ընդունմամբ*:

Նշված վարույթում, մասնավորապես կիրառվել և համակարգային առումով մեկնաբանվել են օրենսդրությամբ սահմանված ժամկետում առևտրային կազմակերպության բաժնեմասը պաշտոնատար անձի կողմից հավատարմագրային կառավարման հանձնելու օրենսդրական կարգավորումների պահանջի էությունը, ինչպես նաև հանրային գնումների ընթացակարգերը կանոնակարգող իրավանորմերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ իրավահարաբերության ծագման պահին գործող շահերի բախման դեպքի բովանդակային սահմաններում: Մասնավորապես, վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների և կիրառելի իրավական նորմերի պահանջների վերլուծության համադրմամբ՝ Հանձնաժողովն

[3] http://cpcarmenia.am/files/legislation/1373.pdf
http://cpcarmenia.am/files/legislation/1379.pdf

արձանագրել է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու բաղադրիչի ներքո ամրագրված անհամատեղելիության պահանջի խախտումն առ այն, որ համայնքի ղեկավարի կողմից առևտրային կազմակերպության բաժնեմասը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում չի հանձնվել հավատարմագրային կառավարման, իսկ բաժնեմասի օտարման՝ նվիրատվության, պայմանագիրը կնքվել է Մ. Մ.-ի՝ տվյալ պաշտոնում պաշտոնավարման ընթացքում նույն ժամկետային սահմանափակումների խախտմամբ:

Շահերի բախման առկայության առնչությամբ Հանձնաժողովը հաստատված է համարել այն հանգամանքը, որ համայնքի կարիքների համար իրականացվող գնման գործընթացում պայմանագիր կնքվել է գործընթացի արդյունքում հաղթող ճանաչված միակ մասնակցի Մ. Մ.-ի հետ փոխկապակցված անձի բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպության հետ, որի կողմից գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնային առաջարկն ի սկզբանե գերազանցել է գնման առարկայի նախահաշվային գինը, իսկ այնուհետև գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից վերոնշյալը որպես տեխնիկական բացթողում մեկնաբանելով՝ առևտրային կազմակերպությանն առաջարկվել է ներկայացնել նոր գնային առաջարկ: Հանձնաժողովն արձանագրել է, որ նոր գնային առաջարկով պատվիրատուի և նույն առևտրային կազմակերպության միջև միևնույն գնման ընթացակարգի շրջանակում երկրորդ պամանագրի կնքումն արդեն իսկ վկայում է այն մասին, որ նշված պայմանագրի կնքման պահին համայնքի ղեկավարը տեղյակ է եղել այն հանգամանքի մասին, որ գնման գործընթացում նշված առևտրային կազմակերպությանը ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, և պայմանագրի կնքմամբ ուղղակի նպաստել է իր հետ փոխկապակցված անձի գույքային դրության բարելավմանը: Նշվածն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն պարտավոր էր լուծել պայմանագիրը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու պարագայում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ հիմք կհանդիսանային նշված պայմանագիրը չկնքելու համար: Մինչդեռ, պատվիրատուն, միևնույն գնման ընթացակարգի հիմքով, իր լիազորությունների շրջանակում, կատարել է գործողություն՝ կնքելով իր հետ փոխկապակցված անձի բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպության հետ երկրորդ պամանագիր, այդ կերպ հայտնվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով շահերի բախման իրավիճակում:

Հանձնաժողովը, նշված վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում գալով այն հետևության, որ կատարված արարքները պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված առերևույթ հանցագործության հատկանիշներ, վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում է կայացրել և դիմել է Գլխավոր դատախազություն համապատասխան հիմքերի առկայության դեպքում գործին ընթացք տալու նպատակով:

Գլխավոր դատախազի պատասխան գրության համաձայն՝ Քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայությունը հաստատվելու հիմքով հարուցված քրեական գործը կարճվել է, ինչը հաստատվել է նաև հսկող դատախազի կողմից: Այնուամենայնիվ, նախաքննության մարմնի կողմից չեն հաստատվել Հանձնաժողովի կողմից Մ. Մ. -ի նկատմամբ հարուցված վարույթի շրջանակներում քննարկված և հաստատված փաստական հանգամանքներից տարբերվող այլ փաստական հանգամանքներ, և Հանձնաժողովն որևէ կերպ կաշկանդված չի եղել ընդունելու եզրակացություն՝ իր կողմից իրականացվող վարույթի շրջանակներում հաստատված փաստերի հիման վրա: Հանձնաժողովի կողմից եզրակացությամբ հաստատված փաստերը՝ խախտման առկայության կամ բացակայության մասին, ունեն արտաքին ներգործություն և պարտադիր ենթակա են կատարման (եթե դատական կարգով չեն բողոքարկվել) դրանց հասցեատերերի կողմից:

Վերոնշյալի առնչությամբ Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված իրավակարգավորումներով, համապատասխան գրությամբ դիմել է համայնքի ավագանուն համայնքի ղեկավարի լիազորությունների դադարեցման հարցի քննարկման և արդյունքների մասին Հանձնաժողովին տեղեկացնելու առաջարկությամբ:

Համայնքի ավագանին պատասխան գրությամբ հայտնել է, որ ավագանու նիստում՝ Մ. Մ.-ի կողմից պաշտոնի անհամատեղելիության պահանջների խախտման և վերջինիս գործողություններում շահերի բախման իրավիճակի առկայության վերաբերյալ հարցի քննարկման արդյունքում խախտում չի արձանագրվել: Ուստի, վերոնշյալով պայմանավորված՝ Մ. Մ.-ն շարունակում է պաշտոնավարել համայնքի ղեկավարի պաշտոնում, մինչդեռ, վկայակոչված օրենքներով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ համայնքի ղեկավարի լիազորությունները դադարեցնելու հարցի քննարկումը հանդիսանում է համայնքի ավագանու բացառիկ լիազորությունը:

Հաշվետու ժամանակահատվածում անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով թվով 6 վարույթներ հարուցվել են լրատվամիջոցի հրապարակումների հիման վրա: Մասնավորապես, վարույթի հարուցման համար առիթ են հանդիսացել հրապարակումներում[4] հիշատակված անձանց՝ Ազգային ժողովի խմբակցության ղեկավարի օգնականի (Ս. Հ.-ի), Ազգային ժողովի նախագահի տեղակալի խորհրդականի (Ա. Բ.-ի), Ազգային ժողովի նախագահի ռեֆերենտի (Զ. Զ.-ի), Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականի (Լ. Լ.-ի), Ազգային ժողովի խմբակցության փորձագետի (Ն. Ս.-ի), ինչպես նաև Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետի (նախկին Անտառային կոմիտեի նախագահ) (Վ. Կ.-ի) պաշտոնների հետ միաժամանակ իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն զբաղեցնելու՝ տեղական ինքնակառավարման մարմնում Երևան քաղաքի ավագանու անդամ հանդիսանալու հանգամանքը:

Հիշատակված վարույթները եզրափակվել են հաշվետու ժամանակահատվածում՝ Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջներն առերևույթ խախտելու վերաբերյալ վարույթները կարճելու մասին որոշումների ընդունմամբ: Նշված վարույթների հարուցման պահին գործող օրենսդրությամբ սահմանված անհամատեղելիության պահանջների տարընթերցման կապակցությամբ նշենք, որ 2024 թվականի փետրվարի 12-ին Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում ծավալված քննարկումների արդյունքում որոշվել էր օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալ՝ փոփոխելով ավագանու անդամների անհամատեղելիությունը սահմանող իրավական նորմերը՝ հստակ նախատեսելով անհամատեղելիության պահանջները՝ բացառելու համար օրենսդրական պահանջների տարընթերցումների հնարավորությունը:

Հանձնաժողովն իր կողմից իրականացվող վարույթների շրջանակում էական է համարել այն, որ ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի հունիսի 9-ի ՀՕ-268-Ն (ուժի մեջ մտած 01.07.2022թ.-ին) օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում ավագանու անդամի համար բացառության սահմանումն առաջացրել է որոշակի տարընկալում պաշտոնների համատեղելիության տեսանկյունից, ինչպես նաև Խորհրդի

[4] https://www.aravot.am/2024/02/06/1398057/
https://armlur.am/1338583/
https://auroranews.am/news/2024-02-06-qp-akan-avaganu-andamnery-mi-qani-or-zhamanak-unen-oroshum-kayatsnelu-vayr-dnel-kam-toghnel-pashtony
https://ankakh.com/hy/article/149309
https://lurer.com/?p=554390&l=en
https://infopress.am/31048/

անդամների կողմից առանց տարընթերցումների հնարավորությունների օրենք ընդունելու անհրաժեշտության առնչությամբ ծավալված քննարկումների շրջանակներում ձևավորված ընդհանուր դիրքորոշումը՝ օրենսդիրը 2024 թվականի մայիսի 25-ին ուժի մեջ մտած ՀՕ-226-Ն օրենքի 31-րդ հոդվածի նոր խմբագրությամբ հստակ սահմանել է հանրային պաշտոնը կամ հանրային ծառայության պաշտոնը համայնքի ավագանու անդամի պաշտոնի հետ համատեղ զբաղեցնելու արգելքը: Միաժամանակ, նույն օրենքի անցումային դրույթներով բացառություն է նախատեսվել բոլոր այն անձանց համար, ովքեր մինչև օրենքն ուժի մեջ մտնելն արդեն իսկ հանրային պաշտոնը կամ հանրային ծառայության պաշտոնը համատեղել են համայնքի ավագանու անդամի պաշտոնի հետ:

Վերոնշյալ՝ 2024 թվականի մայիսի 25-ին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությամբ պայմանավորված, համապատասխան վարույթների կարճման հիմքերի կիրառելիության հարցը գնահատելիս՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարել անդադառնալ նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների վերաբերյալ իրավակարգավորումների բովանդակությանը՝ մասնավորապես արձանագրելով, որ գործով կիրառելի իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ **անհամատեղելիության պահանջների** առերևույթ խախտման հիմքով հարուցվող վարույթում վարչական մարմինը պարտավոր է գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն իրականացնել **հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից օրենքով սահմանված պահանջների առերևույթ խախտման** հաստատման կամ հերքման համար անհրաժեշտ պարզման ենթակա հանգամանքների կապակցությամբ, արդյունքում լուծել հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործը՝ հաստատելով հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից *խախտման առկայության կամ բացակայության փաստը*:

Հաջորդիվ, վարույթի կարճման որոշումներում վկայակոչվել է նաև ՀՕ-226-Ն օրենքի անցումային դրույթը, որի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը չի տարածվում այն անձանց վրա, որոնք մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հանրային պաշտոնը կամ հանրային ծառայության պաշտոնը համատեղել են համայնքի ավագանու անդամի պաշտոնի հետ: Այդ անձինք կարող են շարունակել համատեղ պաշտոնավարումը մինչև տվյալ նորընտիր ավագանու առաջին նիստի գումարման օրը: Վերոնշյալ դրույթներից հետևում է, որ սահմանվել է միջանկյալ կարգավորում բոլոր այն անձանց համար, ովքեր անհամատեղելի համարվող պաշտոնի ստանձման պահին գործող կարգավորումներով նախատեսված արգելքի առկայության պարագայում՝ մինչև նոր կարգավորումների ուժի մեջ մտնելը, այնուամենայնիվ, համատեղել են օրենքի իմաստով անհամատեղելի պաշտոնները: Վկայակոչված կարգավորմամբ անհամատեղելիության

իրավիճակում հայտնված այդ անձանց հնարավորություն է ընձեռվել շարունակել քննարկման առարկա հանդիսացող պաշտոնների համատեղ պաշտոնավարումը մինչև նորընտիր ավագանու առաջին նիստի գումարման օրը:

Արդյունքում, Հանձնաժողովն արձանագրել է, որ ըստ գործում առկա փաստական տվյալների՝ նշված փոփոխությամբ նախկինում գործող կարգավորումներով սահմանված անհամատեղելիության պահանջների չպահպանման դեպքերի համար սահմանվում է բացառություն և «Հանրային ծառայության մասին» օրենքում 2024 թվականի մայիսի 25-ից ուժի մեջ մտած կարգավորումները չեն տարածվում այն անձանց վրա, ովքեր մինչև օրենքն ուժի մեջ մտնելը հանրային պաշտոնը համատեղել են համայնքի ավագանու անդամի պաշտոնի հետ: Վերոնշյալի համատեքստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդիրը, տվյալ պարագայում, վերոնշյալ բացառության շրջանակներում թույլատրելի է համարում նշված պաշտոնների միաժամանակ զբաղեցնելու հնարավորությունը, Հանձնաժողովը եզրահանգել է այն մասին, որ ըստ էության տեղի է ունեցել իրավիճակի փոփոխություն, որի հետևանքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Վերոնշյալի առնչությամբ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ թեև Հանձնաժողովի դիրքորոշման համաձայն՝ վարույթի մասնակցի կողմից չեն պահպանվել «Հանրային ծառայության մասին» 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պաշտոնի անհամատեղելիության պահանջները, այնուամենայնիվ, համապատասխան վարույթներում քննարկված հանգամանքների շրջանակում վերացել է պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից այլ՝ համայնքի ավագանու անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու խախտման կապակցությամբ համապատասխան եզրակացություն ընդունելու անհրաժեշտությունը:

Վարքագծի կանոնների առերևույթ խախտման հիմքով Երևանի քաղաքապետի պաշտոնը զբաղեցնող անձի (Տ. Ա.-ի) նկատմամբ վարույթի հարուցման հիմք է հանդիսացել լրատվամիջոցի հրապարակումը[5], որում տեղ գտած նյութի համաձայն՝ պաշտոնատար անձը թույլ է տվել վարքագծի կանոնների առերևույթ խախտում, որը դրսևորվել է Երևանի ավագանու՝ 2024 թվականի ապրիլի 16-ի նիստի ընթացքում հրապարակմամբ վկայակոչված մի շարք արտահայտությունների հնչեցմամբ: Վերոնշյալ վարույթը հաշվետու ժամանակահատվածում գտնվում է ընթացիկ իրականացման փուլում:

Հաջորդիվ, հաշվետու ժամանակահատվածում անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով Ազգային ժողովի պատգամավորի

[5] https://iravaban.net/472071.html

օգնական (Ա. Ս.) նկատմամբ վարույթի հարուցման հիմք է հանդիսացել լրատվամիջոցի հրապարակումը[6], որում տեղ գտած նյութի համաձայն՝ պաշտոնատար անձը հանդիսանում է առևտրային կազմակերպության 100 տոկոսի բաժնեմասի սեփականատեր և գործադիր մարմնի ղեկավար: Վերոնշյալ վարույթը հաշվետու ժամանակահատվածում ևս գտնվում է ընթացիկ իրականացման փուլում:

Միաժամանակ, վարքագծի կանոնների առերևույթ խախտման հիմքով նույն պաշտոնատար անձի նկատմամբ վարույթի հարուցման հիմք է հանդիսացել լրատվամիջոցի մեկ այլ հրապարակում[7], որում տեղ գտած նյութի համաձայն՝ պաշտոնատար անձը թույլ է տվել վարքագծի կանոնների առերևույթ խախտում, որը դրսևորվել է Ազգային ժողովի տարածքում լրատվական գործակալության լրագրողին հարվածելով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված վարույթը կասեցվել է, քանի որ անհնարին է եղել տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը: Կասեցման հիմքը պայմանավորված է եղել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով (բռնության գործադրմամբ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելը) քրեական վարույթ նախաձեռնված լինելու հանգամանքով:

5.2 Հանձնաժողովի կողմից իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներ

Հաշվետու ժամակահատվածում Հանձնաժողովի կողմից մշակվել և ընդունվել են հետևյալ ենթաօրենսդրական նորմատիվ և ներքին իրավական ակտերը:

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 29-ի «Կուսակցությունների՝ հաշվետու տարվան հաջորդող յուրաքանչյուր տարում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացվող տարեկան հաշվետվության պարտադիր աուդիտի ենթակա լինելու հանգամանքը պարզելու,

[6] https://www.aravot.am/2024/02/06/1398057/
[7] https://civic.am/politics/145248-davit-levonyan.html

ինչպես նաև աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար հայտարարվող բաց մրցույթի կազմակերպման նպատակով ներկայացվող անհրաժեշտ տեղեկությունների ցանկը, ձևաթուղթը և ժամկետները սահմանելու մասին» N 01-Ն որոշում,

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 6-ի «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» N 02-Ն որոշում (մանրամասները ներկայացված են 1-ին գլխում՝ «1.1» բաժնի ներքո),
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 6-ի «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 03-Ն որոշումը, որով փոփոխության է ենթարկվել *հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամի հանձնված և հրապարակված հայտարարագրում իրենց հայտնաբերած անհամապատասխանությունը վերացնելու* նպատակով Հանձնաժողովին ներկայացված դիմումների քննության 10-օրյա ժամկետը՝ սահմանելով դիմումների քննության վարչարարության ընդհանուր՝ 30-օրյա ժամկետ: Նշված դրույթների սահմանմամբ, ըստ էության, գործնականում ապահովվել է իրագործելի ժամկետների պայմաններում Հանձնաժողովի համապատասխան գործառույթի շրջանակում կատարվող գործողությունների համար անհրաժեշտ տվյալների ստացման և դիմումների բազմակողմանի քննության իրականանացումը:
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2024 թվականի մարտի 22-ի «Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգելու մասին» N 01-Լ որոշում:

Միաժամանակ, հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից մշակվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 22-ի N 04-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը, որը հանրային քննարկման է դրվել e-draft.am հարթակում, միաժամանակ ուղարկվել է շահագրգիռ պետական մարմիններին, ինչի վերաբերյալ վերջիններիցս ստացված առաջարկությունների հիման վրա իրականացվում են որոշման նախագծի լրամշակման աշխատանքները:

Հարկ է նաև նշել, որ «ԱՅ ԷՖ Ի ԷՍ» կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ Հանձնաժողովի՝ կուսակցությունների ֆինանսական

գործունեության վերահսկողության մանդատի շրջանակներում Կազմակերպության ֆինասավորմամբ և համապատասխան փորձագետի ներգրավմամբ Կազմակերպությունը տեխնիկական աջակցություն է ցուցաբերում Հանձնաժողովին կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման կարգի մշակման աշխատանքներում:

5.3 Հանձնաժողովում ստացված այլ մարմինների գրություններին, անձանց դիմումներին /հարցումներին/ պատասխանների ներկայացման ապահովում

2024 թվականի ***1***-ին կիսամյակի ընթացքում քաղաքացիների, պետական մարմինների, զանգվածային լրատվական միջոցների, հասարակական կազմակերպությունների, այլ կազմակերպությունների կողմից Հանձնաժողովին հասցեագրված դիմումներից, գրություններից, հարցումներից թվով 40-ի ուսումնասիրության արդյունքում դրանցում բարձրացված հարցերի բովանդակությամբ պայմանավորված՝ մասնավորապես, թվով 7- դիմումներ վերահասցեագրվել են տարբեր պետական մարմիններ, այդ թվում՝ 2-ը՝ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, 3-ը՝ Գլխավոր դատախազություն:

Հանձնաժողովի կողմից դիմում-բողոքները իրավասու այլ մարմիններ վերահասցեագրվելու պարագայում այդ մասին ծանուցվել են բոլոր դիմումատու անձինք՝ միաժամանակ վերջիններիս է ներկայացվել նաև գրավոր հիմնավորում իրենց դիմումով ներկայացված հարցի՝ Հանձնաժողովին վերապահված գործառույթների շրջանակից դուրս լինելու վերաբերյալ:

Հանձնաժողովին հասցեագրված մյուս դիմումներում, հարցումներում, գրություններում, հիմնականում բարձրացվել են Հանձնաժողովի կողմից իրականացվող գործառույթների (մասավորապես հայտարարագրմանն առչվող խախտումների բնույթի) շրջանակում կիրառվող կոնկրետ իրավանորմերի բովանդակության պարզաբանման վերաբերյալ հարցեր, որոնց ի պատասխան Հանձնաժողովի կողմից ներկայացվել են գրավոր պարզաբանումներ բարձրացված կոնկրետ հարցերի վերաբերյալ:

Հատկանշական է այն, որ հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովում առաջին անգամ ստացվել էր հանրային ծառայողի դիմում, որով բողոքարկվում էր քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ

սահմանված կարգով ձևավորված էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը: Այսպես, դիմումատուն նշել էր, որ իր նկատմամբ կայացված Էթիկայի հանձնաժողովի եզրակացությամբ կատարել է արձանագրում, որ իր կողմից չեն պահպանվել ՀՀ փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի N 697-N որոշմամբ սահմանված ***քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնների*** պահանջները: Դիմումատուն խնդրել է իր կողմից ներկայացված բողոքը Հանձնաժողովում քննության առնել վերանայման վարույթի շրջանակներում և կայացնել քաղաքացիական ծառայողների Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը վերացնող որոշում:

Հանձնաժողովը, համադրելով դիմումի բովանդակությունը Հանձնաժողովի գործունեությունը կարգավորող իրավական նորմերի հետ, <u>*եզրահանգել է,*</u> որ դիմումով ներկայացված՝ *վարքագծի կանոնների խախտման* վերաբերյալ էթիկայի հանձնաժողովի *եզրակացությունը վերանայելու հարցը դուրս է Հանձնաժողովի իրավասությունից* և կայացրել է որոշում Հանձնաժողով ներկայացված հանրային <u>*ծառայողի դիմումը թողնել առանց քննության:*</u>

Այս առումով անհրաժեշտ ենք համարում նշել, որ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից հաշվետու ժամանակահատվածում շրջանառվել է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի փաթեթը, որով ի թիվս այլ օրենսդրական փոփոխությունների, նախատեսվել է նաև Հանձնաժողովին վերապահել քաղաքացիական ծառայողի դիմումի հիման վրա Քաղաքացիական ծառայության էթիկայի հանձնաժողովների կողմից վարքագծի կանոնների և (կամ) շահերի բախման կանոնների խախտումների վերաբերյալ եզրակացությունների վերանայման լիազորություն: Նշված օրենդրական փաթեթի վերաբերյալ Հանձնաժողովը ներկացրել է բովանդակային առաջարկություն առ այն, որ հանրային ծառայողների շրջանակում իրավական հավասար հնարավորություն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ նպատակահարմար է դիտարկում համակարգային առումով քննարկման առարկա դարձնել Հանձնաժողովի կողմից իրականացվող վերանայման վարույթի շրջանակում բոլոր տեսակի հանրային ծառայողների նկատմամբ կայացված էթիկայի հանձնաժողովների եզրակացությունների բողոքարկման իրավական հնարավորության սահմանման հարցը՝ համապատասխան փոփոխություն կատարելով ինչպես համայնքային, այնպես էլ այլ պետական ծառայությունների առանձին տեսակները կանոնակարգող օրենսդրությունում:

Միաժամանակ, Հանձնաժողովը կարևորելով քննարկվող օրենսդրական նախաձեռնությունը Հանձնաժողովի դիտարկման շրջանակներում զարգացնելու

հարցը՝ հանրային ծառայության բարեվարքության համակարգում միասնականություն ապահովելու նպատակով, շրջանառվող նախագծի փաթեթի վերաբերյալ մարմնի գրավոր դիրքորոշումը ներկայացրել է Արդարադատության նախարարություն՝ որպես հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականություն մշակող մարմնի:

Դիմումներ անհամատեղելիության պահանջների, շահերի բախման իրավիճակների և վարքագծի կանոնների վերաբերյալ

Դիմում 1

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողով հասցեագրվող դիմում-գրությունների գերակշիռ մասը վերաբերել է անհամատեղելիության պահանջներին: Այսպես՝ Հանձնաժողով ուղարկված դիմումով դիմումատուն հայցել է պարզաբանում առ այն, թե արդյո՞ք սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենը, ով միաժամանակ հանդիսանում է նաև համայնքի ավագանու անդամ, կարող է կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր նույն համայնքի ենթակայության տակ գտնվող համայնքային կազմակերպության կամ համայնքի այլ կառույցի հետ:

Հանձնաժողովը պարզաբանել է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքների կարգավորումները չեն արգելում ավագանու անդամի ներկայացվածությամբ առևտրային կազմակերպությանը մասնակցել համայնքային ենթակայության կազմակերպության կողմից հայտարարված գնման մրցույթին, սակայն դիմումով ներկայացված իրավիճակը ռիսկային է հետագայում համայնքային ենթակայության կազմակերպություններին վերաբերելի որոշումների կայացման տեսանկյունից և կարող է հանգեցնել ոչ միայն շահերի բախման իրավիճակի, այլ նաև նվազեցնել հայտարարված մրցույթների նկատմամբ հանրային վստահությունը: Ուստի, համայնքի ավագանու անդամի պաշտոնը զբաղեցնող անձի կողմից՝ որպես առևտրային կազմակերպության տնօրեն, համայնքային ենթակայության կազմակերպության հետ պայմանագիր կնքելու դեպքում, ավագանու անդամը հետագայում՝ մինչև պայմանագրային հարաբերությունների ավարտը, պետք է ձեռնպահ մնա համայնքային ենթակայության նշված կազմակերպության ֆինանսական հարցերի վերաբերյալ ավագանու կազմում քվեարկություններին մասնակցելուց՝ այդպիսով կառավարելով շահերի բախման հնարավոր ռիսկերը:

Դիմում 2

Հանձնաժողով ուղարկված գրությամբ հայցվել է պարզաբանում առ այն, թե արդյո՞ք մաքսային ծառայության կոմիտեի նախագահի պաշտոն զբաղեցնող անձը կարող էր 2001-2008 թվականներին համատեղությամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Հանձնաժողովը, նկատել է, որ տվյալ ժամանակահատվածում դեռևս ընդունված չի եղել «Հանրային ծառայության մասին» օրենքը, որը սահմանում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները: Մաքսային ծառայության պաշտոնները և մաքսային ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները սահմանվել են «Մաքսային ծառայության մասին» օրենքով: Հարցը, քննարկման առարկա դարձնելով օրենքի նախորդ և ներկա իրավակարգավորումների շրջանակներում, Հանձնաժողովը գտել է, որ մաքսային ծառայողը, այդ թվում՝ ծառայության կոմիտեի նախագահը, իրավունք չունի զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Դիմում 3

Հանձնաժողով ուղարկված գրությամբ դիմումատուն պարզաբանում է հայցել առ այն, թե արդյո՞ք առկա չէ շահերի բախման առերևույթ խախտում՝ նախարարի պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված անձի՝ վերջինիս մոր բաժնեմասնակցությամբ ընկերության և նույն նախարարության միջև գնման պայմանագրեր կնքելու համատեքստում:

Հանձնաժողովը, քննության առնելով դիմումի առարկան «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Գնումների մասին» օրենքի կարգավորումների ներքո, արձանագրել է, որ կնքված պայմանագրերի շրջանակներում Նախարարության կողմից որպես պատվիրատուի ղեկավար և պայմանագրերը ստորագրող անձ չի հանդիսացել նախարարի պաշտոնը զբաղեցնող անձը, ուստի շահերի բախման առերևույթ խախտում չի արձանագրվել:

Չնայած վերոգրյալին՝ Հանձնաժողովը բազմիցս վերահաստատել է այն դիրքորոշումը, որ գնումների մասին օրենսդրությամբ շահերի բախման կարգավորումները խիստ թերի են և փաստացի թույլ չեն տալիս զսպել պաշտոն զբաղեցնող անձանց՝ գործընթացի և արդյունքների վրա ունեցած ազդեցությունը՝ այդպիսով նվազեցնելով գործընթացների նկատմամբ հանրային վստահությունը: Պետական գնումների գործընթացներում շահերի բախման ռիսկերի առնչությամբ Հանձնաժողովը առանձին վերլուծությունների և իր պրակտիկայում

ուսումնասիրած դեպքերի վերաբերյալ պարբերաբար տեղեկացրել է լիազոր մարմնին, նաև մասնակցել ոլորտային օրենսդրության փոփոխությունների շուրջ քննարկումների: Շահերի բախման և պետական գնումների ոլորտի վերաբերյալ իրականացված՝ իրավական դաշտի վերլուծությունը, Հանձնաժողովի ստացած դիմումների և մեդիա հրապարակումների արդյունքներն ամփոփված են նաև Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ 2023 թվականի տարեկան հաղորդման մեջ:

Դիմում 4

Հանձնաժողով հասցեագրված մեկ այլ դիմումով դիմումատուն խնդրել է գնահատական տալ Երևանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ քաղաքապետի կողմից լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հասցեին հնչեցված արտահայտություններին՝ վարքագծի կանոնների համատեքստում:

Հաշվի առնելով այն, որ դիմումի ստացման պահին Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը դեռևս հաստատված և ուժի մեջ մտած չի եղել՝ Հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել դիմումի առարկան քննության առնել վարքագծի կանոնների ներքո: Այդուհանդերձ, Երևանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ տեղի ունեցած՝ դիմումով ներկայացված դրվագը, որի վերաբերյալ արվել են նաև մի շարք մեդիա հրապարակումներ, Հանձնաժողովը գնահատել է մտահոգիչ՝ հանրային իշխանության հեղինակության նսեմացման, հանրային իշխանության մարմնի նկատմամբ հանրային վստահության նվազեցման ռիսկերի տեսանկյունից: Միևնույն ժամանակ, Հանձնաժողովն անդրադարձել է նաև քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծին ներկայացվող միջազգային ստանդարտներին, այդ թվում՝ քաղաքական խոսքի ազատությանը և դրան ներկայացվող սահմանափակումներին:

Հանձնաժողովն առաջարկել է Երևանի քաղաքապետին՝ ձեռնարկել քայլեր՝ Երևան քաղաքի ավագանու նիստերի, ինչպես նաև այլ հրապարակային ելույթների ընթացքում թե՛ ավագանու անդամների, թե՛ քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից վարքագծի սկզբունքների, այդ թվում՝ Կանոնագրքով սահմանված վարքագծի կանոնների պահպանման ուղղությամբ:

Դիմում 5

Հանձնաժողով հասցեագրված դիմումով Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը տեղեկացրել է, որ ստացել է բողոք, ըստ որի՝ համայնքի ավագանու նիստի ժամանակ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը հայհոյանք է հնչեցրել նիստին ներկա հասարակական կազմակերպության նախագահի, կազմակերպության անդամների հասցեին, ինչը տեսանկարահանվել է և հրապարակվել զանգվածային լրատվության միջոցներով: Գրասենյակը խնդրել է քննարկման առարկա դարձնել քաղաքացու բողոքում նշված հանգամանքները՝ վարքագծի կանոնների համատեքստում:

Հաշվի առնելով այն, որ դիմումի ստացման պահին Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքն ուժի մեջ մտած չի եղել՝ Հանձնաժողովը վարույթ հարուցելու հնարավորություն չի ունեցել, ուստի, իր լիազորությունների շրջանակներում, դիմել է համայնքապետարանին՝ առաջարկելով ձեռնարկել համապատասխան միջոցներ համայնքի ավագանու նիստերի, ինչպես նաև այլ հրապարակային ելույթների ընթացքում թե՛ ավագանու անդամների, թե՛ համայնքապետարանի պաշտոնատար անձանց կողմից վարքագծի սկզբունքների և մասնավորապես՝ Վարքագծի կանոնագրքով սահմանված վարքագծի կանոնների պահպանման անհրաժեշտության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնել Կանոնագրքի սուբյեկտ հանդիսացող անձանց՝ Կանոնագրքի կիրառման հիմքով ծագող պարտականությունների վերաբերյալ:

Դիմում 6

Դիմումատուն խնդրել է տրամադրել պարզաբանում առ այն, թե արդյո՞ք վարչական մարմնի ղեկավարի անմիջական ենթակայության տակ գտնվող քաղաքացիական ծառայողի և վարչական մարմնի ղեկավարի պարտականությունները կատարող անձի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված շահերի բախման և այլ սահմանափակումների վերաբերյալ դրույթները:

Ի պատասխան դիմումի՝ Հանձնաժողովը պարզաբանել է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի գործողությունը տարածվում են հանրային

իշխանության մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, իսկ հայտարարագրման հետ կապված իրավակարգավորումների դեպքում՝ նաև օրենսդրությամբ սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց վրա:

Շահերի բախումը սահմանող հոդվածի դրույթները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների վրա, իսկ հանրային ծառայությունը ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները: Պետական ծառայությունն իր հերթին ընդգրկում է նաև քաղաքացիական ծառայությունը: Ուստի շահերի բախման և այլ սահմանափակումների վերաբերյալ «Հանրային ծառայության մասին» օրենքի դրույթները կիրառելի են քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական տարբեր մարմինների ղեկավարների նկատմամբ կիրառվող իրավակարգավորումները նույնական չեն՝ Հանձնաժողովը հայցել է լրացուցիչ տեղեկատվություն վարչական մարմնի հստակեցման առնչությամբ:

Դիմում 7

Հանձնաժողով հասցեագրված դիմումով դիմումատուն խնդրել է պարզաբանում տալ առ այն, թե արդյո՞ք, հանդիսանալով հանրային ծառայող, կարող է հաղորդում վարել, որը կազմակերպվելու է հարցազրույցի և վերլուծության միջոցով, և վերջինս հանդիսանալու է հեղինակ-վարող: Ի պատասխան դիմումի՝ Հանձնաժողովը մեկնաբանել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Միաժամանակ, որևէ աշխատանքի՝ օրենքի իմաստով թույլատրելիությունը գնահատելու համար Հանձնաժողովը բոլոր դեպքերում պահանջում է ներկայացնել աշխատանքի բնույթը նկարագրող վերաբերելի փաստաթղթեր, դրանց համալիր վերլուծության արդյունքում միայն ներկայացնում աշխատանքի թույլատրելիության վերաբերյալ դիրքորոշում: Հաշվի առնելով, որ նման տեղեկատվություն, ի պատասխան Հանձնաժողովի հարցման, չի ստացվել՝ դիրքորոշումը ներկայացվել է հիմք

ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի ընդհանուր կարգավորումները:

Դիմում 8

Դիմումատուն հայցել է Հանձնաժողովի դիրքորոշումն առ այն, թե արդյո՞ք քաղաքացիական ծառայության հետ համատեղելի է քաղաքացիական ծառայողի կողմից՝ իր հեղինակած գրքի ստեղծագործությունները հանդիսավոր միջոցառումների ընթացքում կամ որևիցե տեսաձայնագրման եղանակով հնչեցնելը և մեկնաբանելը, և արդյո՞ք դա դիտարկվում է որպես ստեղծագործական աշխատանք:

Հանձնաժողովը պարզաբանել է, որ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց ներկայացվող անհամատեղելիության պահանջներն անհրաժեշտ է դիտարկել «Հանրային ծառայության մասին» օրենքի շրջանակներում: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող պաշտոնավարմանը զուգահեռ կատարել վճարովի այլ աշխատանք, բացառությամբ՝ գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքից: Օրենքի իմաստով՝ ստեղծագործական աշխատանք է համարվում մշակույթի և արվեստի երկեր, գեղարվեստական, գեղարվեստական ժողովրդական ստեղծագործություններ (...) մեկնաբանելը: Իսկ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի կարգավորումների համաձայն՝ հեղինակային իրավունքի օբյեկտ է համարվում գրականության, գիտության և արվեստի բնագավառներում հեղինակի ինքնուրույն կամ այլ հեղինակների հետ իրականացրած ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունքը (այսուհետ՝ ստեղծագործություն), որն արտահայտված է բանավոր, գրավոր կամ այլ օբյեկտիվ ձևով, ներառյալ՝ մշտապես կամ ժամանակավոր պահպանվող էլեկտրոնային ձևը, անկախ ստեղծագործության ծավալից, նշանակությունից, արժանիքներից ու ստեղծման նպատակից:

Հաշվի առնելով վերոգրյալ իրավակարգավորումները և դիմումում նշված այն հանգամանքը, համաձայն որի՝ դիմումատուի կողմից հեղինակած գիրքն անցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող պետական գրանցման և հաշվառման գործընթաց և ստացել է գրքերի միջազգային ստանդարտ (ISBN չափորոշիչը)՝ այն դիտարկվել է իբրև հեղինակային իրավունքի օբյեկտ:

Համադրելով քննարկված իրավակարգավորումները, ինչպես նաև դիմումատուի կողմից Հանձնաժողով ներկայացված պայմանագրի նախագծի

բովանդակությունը՝ Հանձնաժողովը գտել է, որ դիմումատուի կողմից հեղինակած գրքի ստեղծագործությունները պայմանագրի կողմ հանդիսացող պատվիրատուի կողմից կազմակերպված միջոցառումների ժամանակ ներկայացնելը, օրենքի իմաստով, չի հանգեցնի անհամատեղելիության պահանջի խախտման:

Դիմում 9

Դիմումատուն, հանդիսանալով նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության դատաիրավական օրենսդրության փորձաքննության գլխավոր իրավաբան, խնդրել է դիրքորոշում տրամադրել այն մասին, թե արդյո՞ք քաղաքացիական ծառայողն իրավունք ունի հանդիսանալ որևէ հասարակական կազմակերպության հիմնադիր և/կամ անդամակցել հասարակական կազմակերպությանը:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» և «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքների իրավակարգավորումները, մեկնաբանել է, որ ոչ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու կամ վերջինիս անդամակցելու արգելք հանրային ծառայողի, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողի համար նախատեսված չէ, իսկ հասարակական կազմակերպությունը հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպություն: Միաժամանակ, Հանձնաժողովը տեղեկացրել է, որ իրավական նորմից բացառություն են կազմում միայն այն դեպքերը, երբ նման աշխատանքը հանրային ծառայողի կողմից իրականացվում է վճարովի հիմունքներով, քանի որ հանրային ծառայողի կողմից վճարովի այլ աշխատանք կատարելն Օրենքի իմաստով հանդիսանում է անհամատեղելիության պահանջի խախտում:

Դիմում 10

Հանձնաժողով հասցեագրած իր դիմումով համայնքի ղեկավարը հայտնել է, որ համայնքի կարիքների համար նախատեսվում է կնքել ապրանքների ձեռքբերման պայմանագիր: Վերջինս հայտնել է, որ գնման մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած միակ մասնակիցն իր հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունն է: Համայնքի ղեկավարը խնդրել է տալ առաջարկություն՝ շահերի բախման հնարավոր իրավիճակի լուծմանն ուղղված քայլերի վերաբերյալ:

Հանձնաժողովը, քննելով գրության առարկան «Հանրային ծառայության

մասին», «Գնումների մասին» օրենքներով և Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ կարգավորվող իրավադրույթների շրջանակներում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքապետարանի կողմից իրականացված մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցը հանդիսանում է համայնքապետի հետ փոխկապակցված անձանց բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպությունը, առաջարկել է հանդես գալ տվյալ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ՝ հրապարակելով այն համայնքապետարանի պաշտոնական կայքէջում: Ի պատասխան Հանձնաժողովի առաջարկին՝ համայնքապետի կողմից ներկայացվել և համայնքապետարանի կայքէջում հրապարակվել է համապատասխան հայտարարությունը:

Դիմում 11

Հանձնաժողով վերահասցեագրված դիմումով դիմումատուն պարզաբանում է հայցել առ այն, թե արդյո՞ք կարող է համայնքի ղեկավարի տեղակալը իր անձնական ֆեյսբուքյան էջում գովազդել որևէ ընկերության ապրանք կամ ծառայություն, և արդյո՞ք դա գործող օրենսդրությամբ թույլատրելի է ազատ մրցակցության տեսանկյունից:

Հանձնաժողովը հարցը մեկնաբանել է Վարքագծի կանոնագրքի շրջանակներում: Կանոնագրքի 33-րդ կետը սահմանում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձին արգելվում է իր պաշտոնեական (ծառայողական) դիրքն օգտագործել մասնավոր կազմակերպությունների (այդ թվում՝ առևտրային կազմակերպությունների) համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար: Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պետք է զերծ մնա սոցիալական մեդիայի օգտահաշիվներից այնպիսի գրառումներ, հավանումներ անելուց կամ վերաբերմունք արտահայտող այլ նշաններ կիրառելուց, որոնք կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել հանրային ծառայության հեղինակությունը, կասկածի տակ առնել հանրային ծառայությունում իր լիազորությունների անաչառ և պատշաճ իրականացումը: Միաժամանակ, Հանձնաժողովը տեղեկացրել է, որ վարքագծի վերոգրյալ կանոնների խախտումը կամ խախտման բացակայությունը որոշելու համար անհրաժեշտ է ներկայացնել համապարփակ տեղեկատվություն, ինչը թույլ կտա գնահատել, թե արդյո՞ք սոցիալական ցանցի անձնական էջում տեղադրված կամ այլ կերպ հասանելի դարձած բովանդակությունը արատավորող բնույթի է

կամ կարող է նսեմացնել հանրային իշխանության մարմնի հեղինակությունը, և արդյո՞ք այն ուղղված է որևէ մասնավոր կազմակերպության համար օրենքով չսահմանված արտոնության ստացմանը: Իսկ տնտեսական մրցակցության վերաբերյալ օրենսդրության, մասնավորապես՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի կարգավորման առարկան և ոլորտային օրենսդրության վերանայումը դուրս է Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից:

Դիմում 12

Հանձնաժողով վերահասցեագրված դիմումով Հանձնաժողովի պարզաբանումն է հայցվել առ այն, թե արդյո՞ք ոչ ֆորմալ կրթության կառույցներում ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա որպես դասընթացավար ներգրավվելը համատեղելի է հանրային ծառայության պաշտոնում պաշտոնավարման հետ:

Հանձնաժողովը վերլուծելով «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Կրթության մասին» օրենքի վերաբերելի իրավակարգավորումները, պարզաբանել է, որ դասընթացավարի աշխատանքը, անկախ ներգրավման եղանակից (աշխատանքային պայմանագիր, ծառայությունների մատուցման պայմանագիր) Օրենքի 31-րդ հոդվածի 13-րդ մասի իմաստով հանդիսանում է կրթական աշխատանք, հետևաբար, համատեղելի է հանրային ծառայության հետ:

Դիմում 13

Հանձնաժողով հասցեագրած դիմումով դիմումատուն հայտնել է, որ համայնքի ավագանին կայացրել է որոշում, որով 2024 թվականի հունվարի 1-ից եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի, առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժինների պետերին և աշխատակիցներին, բոլոր ուղղություններով սեփական եկամուտների հավաքագրման 100% եռամսյակային պլանը կատարելու հիմքով, որոշել է տրամադրել հավելավճար: Միաժամանակ, սույն որոշման քվեարկությանը մասնակցել է ավագանու անդամ, ում ամուսինը հանդիսանում է համայնքի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար:

Հանձնաժողովի կողմից դիմումը քննվել է «Հանրային ծառայության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների կարգավորումների շրջանակներում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագանու կողմից

ընդունված որոշումն անդրադարձել է անձանց լայն շրջանակի վրա՝ որոշման շրջանակներում ավագանու անդամի կողմից մասնավոր շահով պայմանավորված՝ իր հետ փոխկապակցված անձին արտոնություն ապահովելու հիմքով շահերի բախման կարգավորումների առերևույթ խախտում չի արձանագրվել:

Միաժամանակ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի իմաստով՝ համայնքի ավագանու անդամի շահերի բախման իրավիճակները քննելու և լուծելու իրավասություն Հանձնաժողովը չունի: Սակայն, նույն օրենքը Հանձնաժողովին լիազորել է իրավասու մարմնին կամ պաշտոնատար անձին ներկայացնել շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ (այդ թվում՝ պաշտոն զբաղեցնող անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ): Վերոգրյալից ելնելով՝ դիմումը վերահասցեագրվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ հետագա քննության առաջարկով: Նախարարությունը վերահաստատել է, որ Վանաձոր համայնքի ավագանու 29 նոյեմբերի 2023 թվականի N 66 որոշմամբ 2024 թվականի հունվարի 1-ից եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի, առևտրի, սպասարկման և տրանսպորտի բաժինների պետերին և աշխատակիցներին բոլոր ուղղություններով սեփական եկամուտների հավաքագրման 100% եռամսյակային պլանը կատարելու համար տրամադրված հավելավճարը ենթակա է վերանայման՝ հաշվի առնելով սահմանված հիմքերին չհամապատասխանելու հանգամանքը, և հայտնել է, որ որպես իրավական հսկողություն իրականացնող մարմին, համայնքի ղեկավարին տրվել է համապատասխան ցուցում՝ համայնքի ավագանու որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ:

Դիմում 14

Դիմումատուն հայտնել է, որ համայնքի ղեկավարի տեղակալը, համայնքապետարանում համակարգելով առևտրի, ծառայությունների և գովազդի ոլորտները, ֆեյսբուքյան իր էջով գովազդել է հանրային սննդի օբյեկտ՝ կատարելով համապատասխան հրապարակում, և խնդրել է Հանձնաժողովի դիրքորոշումը սույն հարցի առնչությամբ:

Հանձնաժողովը սույն դիմումն ուսումնասիրել է Վարքագծի կանոնագրքի շրջանակներում: Կանոնագրքի առանձին բաժիններ անդրադառնում են հանրային հաղորդակցությանը ներկայացվող պահանջներին, շահերի բախման կառավարմանը, հանրային իշխանության մարմնի և հանրային ծառայության հեղինակության պահպանմանը: Կանոնագրքի 2-րդ՝ «Հաղորդակցությունը զանգվածային լրատվության միջոցներով և սոցիալական մեդիայով» գլխի ներքո

սահմանված կանոն 48-ի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պետք է զերծ մնա սոցիալական մեդիայի օգտահաշիվներից այնպիսի գրառումներ, հավանումներ անելուց կամ վերաբերմունք արտահայտող այլ նշաններ կիրառելուց, որոնք կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել հանրային ծառայության հեղինակությունը, կասկածի տակ առնել հանրային ծառայությունում իր լիազորությունների անաչառ և պատշաճ իրականացումը: Կանոնագրքի 50-րդ կետը սահմանում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է խուսափել սոցիալական մեդիայի օգտահաշիվներում անձնական բնույթի այնպիսի լուսանկարների, տեսագրությունների, ձայնագրությունների կամ այլ բովանդակության հրապարակումից, որոնք կարող են հանրային ծառայությունը վարկաբեկող լուրերի տարածման պատճառ հանդիսանալ: Կանոնագրքի «Շահերի բախման կառավարում» գլխի ներքո՝ 33-րդ կետով նախատեսվել է պահանջ առ այն, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձին արգելվում է իր պաշտոնեական (ծառայողական) դիրքն օգտագործել մասնավոր կազմակերպությունների (այդ թվում՝ առևտրային կազմակերպությունների) համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար:

Միաժամանակ, դիմումին կից ներկայացված նյութերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ քննարկվող հրապարակումը կատարվել է նախքան Կանոնագրքի՝ օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելը, հետևապես, հրապարակման տեղադրման պահին Կանոնագրքի դրույթները կիրառելի չեն եղել քաղաքապետի տեղակալի նկատմամբ՝ ինչով պայմանավորված՝ վարույթ հարուցելու հիմքեր առկա չեն եղել:

Դիմում 15

Մեկ այլ դիմումով պարզաբանում է հայցվել առ այն, թե արդյո՞ք հանրային ծառայողը, գտնվելով նախածննդյան, հետծննդյան կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում, կարող է ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա ներգրավվել որպես դասընթացավար հիմնադրամներում, հասարակական կազմակերպություններում կամ այլ կառույցներում:

Վերլուծելով վերաբերելի իրավական կարգավորումները՝ Հանձնաժողովը պարզաբանել է, որ հանրային ծառայողի՝ հղիության և ծննդաբերության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելը չի ենթադրում հանրային ծառայության դադարեցում կամ կասեցում, հետևաբար՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված

անհամատեղելիության պահանջները տարածվում են վերջինիս նկատմամբ: Միաժամանակ, հիմք ընդունելով նախկինում իր ներկայացրած դիրքորոշում, Հանձնաժողովը պարզաբանել է, որ դասընթացավարի աշխատանքը կրթական աշխատանք է և նպատակային արձակուրդի ընթացքում համապատասխան կառույցներում որպես դասընթացավար ներգրավվելը չի հանգեցնի «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտման:

Դիմում 16

Դիմումատուն հայցել է Հանձնաժողովի դիրքորոշումը՝ բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորի պաշտոնի և բանկի խորհրդի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի և խորհրդատուի պաշտոնների համատեղելիության վերաբերյալ:

Ուսումնասիրելով բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությունը և վերլուծելով գործող իրավակարգավորումները՝ այդ թվում՝ ոլորտային օրենսդրությունը՝ Հանձնաժողովը մեկնաբանել է, որ համալսարանի ռեկտորի պաշտոնը «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով չի հանդիսանում հանրային պաշտոն, ուստի վերջինիս նկատմամբ կիրառելի չեն նույն օրենքով սահմանված՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին ներկայացվող անհամատեղելիություն պահանջները: Միաժամանակ համալսարանի ռեկտորի՝ այլ պաշտոն զբաղեցնելու անհամատեղելիության պահանջի առկայության կամ բացակայության հանգամանքն անհրաժեշտ է դիտարկել ռեկտորի կարգավիճակին վերաբերելի ոլորտային օրենսդրության, Համալսարանի կանոնադրության և գիտական խորհրդի կողմից ընդունված ակտերում տեղ գտած իրավակարգավորումների լույսի ներքո:

Դիմում 17

Դիմումատուն հայտնել է, որ ավագանու անդամն ապօրինի աշխատեցնելով հանրային սննդի օբյեկտը, նույն հասցեում իրականացնում է ապօրինի շինարարական աշխատանքներ և խնդրել է Հանձնաժողովին քննարկել ավագանու անդամի վարքագիծը և հետագա պաշտոնավարման նպատակահարմարությունը:

Դիմումին կից նյութերի ուսումնասիրությունից հետևել է, որ ներկայացված

հանգամանքներն արդեն իսկ ուսումնասիրվել են համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից, ինչի արդյունքում կազմվել է համապատասխան արձանագրություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը: Ուստի համայնքի ավագանու անդամի վարքագծի քննությունը դուրս է Հանձնաժողովի իրավասությունների տիրույթից: Միաժամանակ, հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնների սահմանման առանձնահատկությունները նախատեսվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածով, իսկ ավագանու անդամի վարքագծի կանոններն ընդունելու իրավասություն ունեցող մարմին օրենսդիրը չի նախատեսել, ինչի հետևանքով մինչ օրս սահմանված չեն ավագանու անդամի ո՛չ վարքագծի կանոնները, ո՛չ էլ դրանց պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինը:

Դիմում 18

Հանձնաժողով հասցեագրած դիմումով դիմումատուն հայցել է Հանձնաժողովի դիրքորոշումն առ այն, թե արդյո՞ք քաղաքացիական աշխատանք կատարող անձինք կարող են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ կամ որևէ կազմակերպությունում ունենալ բաժնեմաս: Միաժամանակ, խնդրել է արգելքի բացակայության դեպքում՝ նշել բաժնեմասնակցության տոկոսի թույլատրելի սահմանաչափը:

«Հանրային ծառայության մասին» օրենքի շրջանակներում քննելով հարցը՝ Հանձնաժողովը մեկնաբանել է, որ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը, ուղղակիորեն չեն տարածվում պետական կառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող անձանց նկատմամբ, քանի որ քաղաքացիական աշխատանքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է պայմանագրային հիմունքներով և վերջիններս չեն հանդիսանում հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձ: Ինչ վերաբերում է քաղաքացիական աշխատանք կատարող անձանց կողմից առևտրային կազմակերպություններում բաժնեմասնակցության տոկոսի թույլատրելի սահմանաչափին՝ հարկ է նշել, որ վերոգրյալի համատեքստում որևէ տոկոսային շեմ կամ սահմանաչափ վերջիններիս համար օրենսդրությամբ սահմանված չէ:

Դիմում 19

Դիմումատուն Հանձնաժողովին հայտնել է, որ համայնքի ավագանու իշխող խմբակցության ներկայացուցիչները շահերի բախման իրավիճակում կայացրել են որոշում, որով իրենց հետ ենթադրաբար փոխկապակցված անձանց բարեգործական հիմնադրամին որպես ավտոկայանատեղի է տրամադրվել համայնքի բնակելի շենքերից մեկի հարակից ճանապարհը: Դիմումատուն խնդրել է հարցը քննարկել շահերի բախման համատեքստում: Հանձնաժողովը, քննարկելով հարցը «Հանրային ծառայության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով սահմանված՝ համայնքի ավագանու անդամների շահերի բախման կարգավորումների ներքո, հայտնել է, որ շահերի բախման իրավիճակի առկայությունը կամ բացակայությունը կարող է քննարկվել բացառապես պաշտոնատար անձի որոշման կամ գործողության համատեքստում, որով արտոնություն է ապահովվել իրեն կամ օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձանց կամ կազմակերպություններին: Այսինքն՝ շահերի բախման առկայությունը չի կարող վերագրվել կոլեգիալ մարմնի կամ պաշտոն զբաղեցնող անձանց խմբի գործողություններին կամ որոշումներին և պահանջում է փոխկապակցվածության առկայություն որոշման շահառուի և պաշտոն զբաղեցնող անձի միջև:

Հաշվի առնելով, որ դիմումի առարկան վերաբերում է ո՛չ թե ավագանու կոնկրետ անդամի՝ ավագանու որոշման քվեարկության մասնակցությանը շահերի բախման իրավիճակում, այլ իբրև շահերի բախման ռիսկ նկատի է առնվում ողջ խմբակցության մասնակցությունը՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով՝ Հանձնաժողովը լիազորված չէ մեկնաբանել կամ քննել կոլեգիալ մարմնի գործողություններում շահերի բախման առկայությունը:

Դիմում 20

Հանձնաժողով հասցեագրած իր դիմումով քաղաքացին հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանում գործում է ճարտարապետներից բաղկացած աշխատանքային խումբ, որը խորհրդատվական հիմունքներով մասնագիտական կարծիք է ներկայացնում տարբեր քաղաքաշինական նախաձեռնությունների վերաբերյալ, և հայցել Հանձնաժողովի դիրքորոշումն առ այն՝ թե արդյո՞ք աշխատանքային խմբի գործունեությունն իր մեջ չի պարունակում շահերի բախման, ինչպես նաև կոռուպցիոն այլ ռիսկեր:

Երևանի քաղաքապետին կից խորհուրդների կազմավորման, գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, իսկ 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N 301-Ն որոշմամբ սահմանված են Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող՝ քաղաքաշինական փաստաթղթեր ստանալու վերաբերյալ ներկայացված հայտերի ուսումնասիրության խորհրդակցական խորհրդի կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները: Հանձնաժողովը վերոգրյալ կարգի ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ աշխատանքային խմբում ներգրավված անհատ մասնագետները չեն հանդիսանում «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք, ուստի, օրենքով սահմանված շահերի բախման կարգավորումները վերջիններիս նկատմամբ կիրառելի չեն:

Խորհրդակցական խորհրդի կազմում մասնագետների ներգրավումն իրականացվում է իրենց դիմումների հիման վրա՝ հաջորդականության սկզբունքով՝ մինչև սահմանված տեղերի լրանալը, ինչից հետևում է, որ անդամների ընտրության գործընթացում քաղաքապետը չունի հայեցողության դրսևորման հնարավորություն և անդամների ընտրությունն անձամբ չի իրականացնում: Հետևապես՝ խորհրդակցական խորհրդի ձևավորման շրջանակներում շահերի բախման կարգավորումների հնարավոր կամ փաստացի խախտման մասին կարելի կլինի խոսել միայն այն պարագայում, երբ խմբի կազմում ներգրավված լինի քաղաքապետի հետ օրենքի իմաստով փոխկապակցված անձ, ում օգտին կամ ում մասնակցությամբ կազմակերպության օգտին կկայացվի համապատասխան որոշում:

Դիմումի երկրորդ մասում դիմումատուն նշել էր, որ աշխատանքային խմբի անդամները չունեն ճարտարապետական նախագծման արտոնագրեր: Հանձնաժողովը նշել է, որ Երևան քաղաքի ավագանու՝ 2013 թվականի սեպտեմբերի 10-ին N 46-Ն որոշմամբ՝ խորհրդակցական խմբի անդամներին ներկայացվող պահանջները չեն պարունակում ճարտարապետական նախագծման արտոնագրի առկայության պայման:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհրդակցական խմբի ձևավորման և գործունեության առանձնահատկությունները սահմանող ավագանու նշյալ որոշմամբ նախատեսված չեն մասնագետների կողմից քաղաքաշինական փաստաթղթեր ստանալու վերաբերյալ ներկայացված հայտերի ուսումնասիրության գործընթացում շահերի բախմանը վերաբերելի հստակ կարգավորումներ՝ Հանձնաժողովը դիմումատուի գրության հիմա վրա առաջարկություն է ներկայացրել Երևանի քաղաքապետարան՝ առկա կարգավորումները վերանայելու և շահերի բախման հնարավոր ռիսկերի զսպման կառուցակարգեր նախատեսելու համար:

Ի պատասխան Հանձնաժողովի գրության՝ իրավասու մարմինը հայտնել է, որ աշխատակազմի աշխատակից հանդիսացող աշխատանքային խմբի անդամներն իրազեկված են կողմնակալ մոտեցում ցուցաբերելուց զերծ մնալու, հայտերի ուսումնասիրության ընթացքում շահերի բախման դեպքեր ի հայտ գալու մասին տեղեկացնելու վերաբերյալ, ինչպես նաև յուրաքանչյուր հայտ ուսումնասիրելիս հնարավոր փոխկապակցվածության առկայության դեպքում աշխատանքային խմբի անդամը բանավոր տեղեկացնում է այդ մասին, որից հետո տվյալ հարցի քննարկումը իրականացվում է վերջինիս բացակայությամբ: Այդուհանդերձ, Հանձնաժողովը գտնում է, որ բանավոր տեղեկացման՝ ներկայացված պրակտիկան, որը որևէ իրավական ակտում/կարգում տեղայնացված չէ, բավարար չէ զսպելու շահերի բախման հնարավոր իրավիճակների առաջացումը:

Դիմում 21, 22

Հանձնաժողով հասցեագրած իր գրությամբ ԱԺ պատգամավորը խնդրել է Հանձնաժողովին՝ ուսումնասիրել լրատվական թերթի կողմից իր՝ անհամատեղելիությամբ աշխատելու վերաբերյալ հրապարակումը և ներկայացնել համապատասխան դիրքորոշում: Հրապարակման առարկան վերաբերել էր պատգամավորի կողմից գրական ակումբում գրական ստեղծագործությունների մեկնաբանման, խմբագրման և թվայնացման աշխատանքների իրականացմանը և նշված աշխատանքների իրականացման համար մրցանակի ստացմանը: Գրական ստեղծագործությունների մեկնաբանումը Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 14-րդ մասը, համարել է ստեղծագործական աշխատանք, որն իր հերթին համատեղելի է պատգամավորական գործունեության հետ:

Ինչ վերաբերում է գրական ստեղծագործությունների թվայնացմանը և խմբագրմանը՝ Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական շտեմարանների

տվյալների ուսումնասիրությամբ արձանագրվել էր, որ նշված աշխատանքների իրականացման համար պատգամավորը վարձատրություն կամ այլ եկամուտ չի ստացել, հետևապես՝ նշված աշխատանքները հնարավոր չէ դիտարկել որպես այլ վճարովի աշխատանքի իրականացում:

Նույն հրապարակման շրջանակներում Հանձնաժողովը դիմում է ստացել նաև օրաթերթի խմբագրից: Վերջինս խնդրել էր նաև պարզաբանում, առ այն, թե արդյո՞ք անհամատեղելիության պահանջի խախտում չէ պատգամավորի՝ չվճարվող հիմունքներով այլ տեսակի աշխատանք կատարելը: Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումները, տեղեկացրել է, որ որպես անհամատեղելիության պահանջի խախտում օրենքը դիտարկվում է բացառապես այլ վճարովի աշխատանքի կատարումը (բացի՝ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից):

Դիմում 23

Անհամատեղելիության պահանջների վերաբերյալ մեկ այլ դիմումով դիմումատուն հայցել է Հանձնաժողովի պարզաբանումն առ այն, թե արդյո՞ք հանրային պաշտոն զբաղեցնող անձը կարող է որևէ հրատարակչի հետ ունենալ հեղինակային իրավունքի բացառիկ պայմանագիր և արդյո՞ք գեղարվեստական ստեղծագործություն թարգմանելը կարող է մեկնաբանվել որպես ստեղծագործական աշխատանք:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով«Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումները, նշել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Իսկ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի սահմանմամբ՝ հեղինակային իրավունքի օբյեկտ է համարվում ստեղծագործությունների թարգմանությունները, (...) գրականության, գիտության, արվեստի ստեղծագործությունների այլ վերափոխումները: Թարգմանությունները և այլ ածանցյալ ստեղծագործություններն ինքնուրույն ստեղծագործություններ են և պահպանվում են որպես բնօրինակներ: Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը պարզաբանել է, որ հեղինակային իրավունքի պայմանագրի հիման վրա ստեղծագործության թարգմանություն կատարելը չի հանգեցնի օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտման: Միաժամանակ,

Հանձնաժողովը հայտնել է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի լիազորությունների իրականացման հետ կապված պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի հանդեպ, իսկ հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի համար վճարումը չի կարող գերազանցել այն չափը, որին նույնպիսի գործունեության համար համանման որակներ ունեցող, պաշտոնատար անձ չհանդիսացող անձը կարող էր հավակնել:

Դիմում 24

Դիմումատուն իր դիմով հայտնել է, որ, հանդիսանալով քաղաքացիական ծառայության ավագ մասնագետի պաշտոն զբաղեցնող անձ, ցանկանում է մասնակցել հանրակրթության կառավարման, բովանդակության մշակման, մանկավարժական կադրերի մասնագիտական զարգացման, ուսուցման արդյունքների գնահատման, ուսումնական գրականության փորձաքննության, հանրակրթության ոլորտում փորձագետների շտեմարան ստեղծելու նպատակով իրականացվող մրցույթին և իրականացնել փորձագիտական աշխատանք:

Հանձնաժողովը մեկնաբանել է, որ քաղաքացիական ծառայողների անհամատեղելիության պահանջները սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքով և նշել, որ հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում (...), բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Օրենքի իմաստով՝ կրթական աշխատանք է համարվում ուսուցիչ, դասախոս (ասիստենտ) աշխատելը կամ հանրակրթական և մասնագիտական (հիմնական, լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների պահանջների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող և (կամ) դրանք ապահովող այլ աշխատանք կատարելը: Գնահատման փորձագետի առանձին գործառույթներ, ինչպես առարկայի չափորոշչին և ծրագրին համապատասխանող գնահատման վերաբերյալ մեթոդական և ուսումնական նյութերի, ուղեցույցների մշակումը, ինչպես նաև գնահատմանը վերաբերող վերապատրաստումների մոդուլների (բովանդակության) մշակումը և վերապատրաստումների իրականացումը հանրակրթական ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների

պահանջների ապահովման գործընթացին, համապատասխան գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը նպաստող աշխատանքներ են, ուստի, որպես կրթական աշխատանքի ուղղություններ, կարող են իրականացվել քաղաքացիական ծառայողի կողմից: Միաժամանակ, Հանձնաժողովը նշել է, որ դիմումատուի կողմից նշված՝ փորձագետի աշխատանքի մյուս ուղղությունները՝ գնահատմանը վերաբերող օրենսդրության, տարբեր փաստաթղթերի և ուսումնական նյութերի մասին փորձագիտական կարծիքի ներկայացումը, գնահատմանը վերաբերող խորհրդատվության տրամադրումը օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների ներքո մեկնաբանելու համար առկա տեղեկատվությունը բավարար չէ և հարցի համալիր քննարկման համար անհրաժեշտ է տրամադրել գնահատման փորձագետի կողմից Հիմնադրամում կատարման ենթակա աշխատանքների համապարփակ նկարագրությունը, ինչպես նաև աշխատանքների իրականացման պայմանագրի նախագիծը կամ դրանով նախատեսվող հստակ գործառույթները:

Դիմում 25

Մեկ այլ դիմումով դիմումատուն հայտնել է, որ համայնքապետարանի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների գրավոր փուլից հետո մրցութային հանձնաժողովի կազմի՝ իրավազոր չլինելու պատճառով մրցույթների բանավոր փուլը չի իրականացվել: Վերոգրյալը դիմումատուն պայմանավորել է այն հանգամանքով, որ համայնքապետարանի հանրային կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարը, ով նույն համայնքի ավագանու անդամի կինն է, չէր հաղթահարել մրցույթի գրավոր փուլը: Իր դիմումով քաղաքացին խնդրել է Հանձնաժողովին՝ քննության առնել դեպքը՝ ավագանու անդամի շահերի բախման և մրցույթի չեղարկման վրա վերջինիս հնարավոր ազդեցության համատեքստում:

Ավագանու անդամի շահերի բախումն ուսումնասիրելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքների շրջանակներում՝ Հանձնաժողովը գտել է, որ շահերի բախման փաստացի կամ հավանական առկայությունը պետք է քննարկվի պաշտոն զբաղեցնող անձի պարտականությունների կատարման՝ վերջինիս գործողությունների կամ որոշումների առնչությամբ, հետևապես՝ անհրաժեշտություն է առաջացել քննարկել համայնքային ծառայության մրցույթների անցկացման գործընթացում համայնքի ավագանու անդամի հնարավոր մասնակցությունը:

Վերաբերելի իրավանորմերի և առկա փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրակացրել է, որ համայնքային

ծառայության պաշտոններ զբաղեցնելու մրցույթների երկրորդ փուլի չանցկացումը և կրկնակի մրցույթների անցկացման որոշումն առերևույթ չի հակասել «Համայնքային ծառայության մասին» օրենքով և Տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանի հավելվածով սահմանված ընթացակարգին, իսկ համայնքի ավագանու անդամը որևէ ուղղակի մասնակցություն կամ ներգրավվածություն մրցույթների անցկացման ընթացակարգերին չի ունեցել, հետևապես, վերջինիս կողմից շահերի բախման օրենսդրական կարգավորումների առերևույթ խախտման արձանագրման հիմքեր չեն եղել: Միաժամանակ, մրցութային խորհրդի անդամների և նրանց որոշումների նկատմամբ ավագանու անդամի անուղղակի ազդեցությունը հնարավոր չի եղել գնահատել առկա փաստական հանգամանքներով:

5.4 Հանձնաժողովի այլ կանոնադրական գործառույթների ապահովում, շահերի ներկայացում դատական ատյաններում

Հաշվետու ժամանկահատվածում ապահովվել է Հանձնաժողովի շահերի ներկայացումը դատական ատյաններում:

Հաշվետու ժամանակահատվածում Վերաքննիչ վարչական դատարանի կողմից Հանձնաժողովի օգտին է կայացվել ևս մեկ որոշում՝ թիվ ՎԴ/4825/05/22 վարչական գործով: Նշված վարչական գործով դիմողը ներկայացրել էր Հանձնաժողովի կողմից իր վերաբերյալ ընդունված բարեվարքության եզրակացությամբ հաստատված փաստերի փոխարեն նոր փաստեր հաստատելու պահանջ: Նշված գործով Վարչական դատարանի կողմից կայացվել էր վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշում: Իր կողմից կայացված դատական ակտով, մասնավորապես, Վարչական դատարանը եզրահանգել էր, որ Հանձնաժողովի կողմից ընդունված պաշտոնատար անձանց բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ եզրակացություններն ունեն խորհրդատվական բնույթ, ինչը նշանակում է, որ սուբյեկտների համար դրանք չեն կրում պարտադիր բնույթ, այլ զուտ հանդիսանում են սուբյեկտների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության ներկայացում: Այս առնչությամբ, Վարչական դատարանն արձանագրել էր նաև այն իրաղությունը, որ բարեվարքության վերաբերյալ եզրակացության կազմման գործընթացը չի իրականացվում վարույթային կարգով, դրա վերաբերյալ որևէ որոշում չի ընդունում, ընդհանուր վարչարարական

ընթացակարգերով որևէ գործընթաց չի իրականացնում, այլ Հանձնաժողովը ստացված տեղեկատվության ուսումնասիրության և ամփոփման արդյունքում զուտ կազմում և *իրավասու մարմին է ներկայացնում անձի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն,* ուստիև բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության առջև որևէ փաստի հաստատման իրավական պահանջ դրված չէ, քանի որ այն զուտ պարունակում է տվյալ անձի մասով ստացված տեղեկատվության ամփոփում, որով Հանձնաժողովն այդ անձի վերաբերյալ ներկայացնում է իր դիրքորոշումը, կարծիքը, որը սակայն որոշում կայացնող սուբյեկտի համար չունի պարտադիր բնույթ և որևէ կերպ չի կաշկանդում նրան: Նշենք նաև, որ Վարչական դատարանը իրավահամեմատական վերլուծություն էր իրականացրել բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ եզրակացության և Հանձնաժողովի կողմից ընդունվող մյուս եզրակացությունների՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտման կամ առերևույթ շահերի բախման իրավիճակի առկայության վերաբերյալ վարույթների միջև՝ նշելով, որ ի տարբերություն վերջիններիս, Հանձնաժողովի կողմից ընդունվող բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ եզրակացություններով չեն հաստատվում փաստեր, ուստի նշված եզրակացությունները ենթակա չեն Վարչական դատարանում քննության՝ հաստատված փաստերի փոխարեն նոր փաստեր հաստատելու պահանջ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված հատուկ վարույթի շրջանակներում:

Վարչական դատարանի հիշատակված որոշումը հաշվետու ժամանակահատվածում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից թողնվել է անփոփոխ:

Հաշվետու ժամանակահատվածում Վարչական դատարանի կողմից Հանձնաժողովի օգտին է կայացվել նաև թիվ ՎԴ/6988/05/22 վարչական գործով վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշումը: Նշված վարչական գործի շրջանակներում Հայցվորը պահանջել էր ոչ իրավաչափ ճանաչել Հանձնաժողովի կողմից իր նկատմամբ ընդունված բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունը և Հանձնաժողովին պարտավորեցնել իր վերաբերյալ բարեվարքության դրական եզրակացություն կազմել:

Հանձնաժողովի կողմից վարչադատավարական կանոնների համաձայն ներկայացվել էր հայցադիմումի պատասխան, որով ամբողջությամբ առարկել էր հայցվորի փաստարկները: ՀՀ վարչական դատարանը կարճել է նշված վարչական գործի վարույթը՝ հայցվորի կողմից հայցից հրաժարման հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում Վարչական դատարանի կողմից Հանձնաժողովի օգտին է կայացվել նաև թիվ ՎԴ/7946/05/22 վարչական գործով Հայցվորի կողմից ներկայացված հայցը մերժելու մասին որոշումը:

Նշված գործով Հայցվորը վիճարկել էր Հանձնաժողովի կողմից 24.10.2022 թվականին իր նկատմամբ ընդունված թիվ ՎԻՎ/68/22 որոշումը՝ վարչական տույժ կիրառելու մասին, նշելով, որ Հանձնաժողովը սահմանված ժամկետում չի ընդունել վարչական ակտը: Վարչական դատարանի կողմից հայցը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Հանձնաժողովի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված պահանջների (ժամկետների) խախտում թույլ չի տրվել:

Հաշվետու ժամանակահատվածում թիվ ՎԴ/9333/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից Հանձնաժողովի օգտին ընդունվել է որոշում: Ընդ որում՝ վճռաբեկ բողոքը ներկայացվել էր գործով պատասխանող Հանձնաժողովի կողմից:

Նշված վարչական գործով Հայցվորը պահանջել էր պարտավորեցնել Հանձնաժողովին ոչնչացնել իր և իր ընտանիքի անդամի 2017 թվականի տարեկան ու 2018 թվականի պաշտոնի դադարեցման հայտարարագրերը:

Վճռաբեկ դատարանը նշված գործով արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ հայտարարատու անձի կողմից տարեկան հայտարարագիր ներկայացնելն օրենսդրի իմպերատիվ պահանջն է, իսկ Հանձնաժողովը պարտավոր է համապատասխան ժամկետներում ապահովել դրա զետեղումը հայտարարագրերի ռեեստրում, ապա նաև՝ հրապարակել իր պաշտոնական կայքէջում: Ինչ վերաբերում է հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ կամ օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու կամ այն խախտումներով, ոչ ամբողջական ներկայացնելու դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության վարույթ իրականացնելուն և անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն, ապա վարչական պատասխանատվության փաստի բացակայությունը որևէ կերպ չի կարող վկայել հայտարարագիր ներկայացնելու պարտականության բացակայության մասին:

Վճռաբեկ դատարանը նշված գործով արձանագրել է նաև, որ թեև հայտարարագիրը Հանձնաժողովին ներկայացնելու պահին, հայցվորն այլևս չի համարվել հայտարարատու բարձրաստիճան պաշտոնատար անձ՝ գործող «Հանրային ծառայության մասին» օրենքի համաձայն, այդուհանդերձ, ակնհայտ է, որ Հայցվորը պարտավոր է եղել օրենքով սահմանված ժամկետում ներկայացնել 2017 թվականի տարեկան հայտարարագիրը: Ավելին, Վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե անգամ Հանձնաժողովը հարուցեր համապատասխան վարույթ և

հայտարարատու անձին ենթարկեր վարչական պատասխանատվության, ապա նման պարագայում կգործեր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի դրույթն այն մասին, որ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

Արդյունքում, Վճռաբեկ ատյանը եզրահանգել է, որ տվյալ գործով բացակայել են հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագիրը վերացնելու ոչնչացնելու հիմքերը, ուստիև Հայցվորի պահանջը՝ հայտարարագիրը ոչնչացնելուն պարտավորեցնելու պահանջի մասով հայցը ենթակա է մերժման:

Հատկանշանակ է այն, որ հաշվետու ժամանակահատվածում առաջին անգամ քաղաքացիական դատավարության կարգով վարույթ է ընդունվել պետական մարմնի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը (թիվ ԵԴ2/3232/02/24 գործ): Նշված գործով Հանձնաժողովը հանդես է եկել որպես հայցվոր՝ ընդհանուր իրավասության դատարանին ներկայացնելով հայցադիմում՝ համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հնչեցրած՝ զրպարտություն հանդիսացող արտահայտությունները հերքելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

Մասնավորապես, որպես հայցապահանջի հիմքում դրված փաստարկ, Հանձնաժողովը գտել էր, որ պատասխանող պաշտոնատար անձի կողմից հրապարակմամբ[8] *արատավորվել է քաղաքական չեզոքության սկզբունքով գործող, ինքնավար մարմին հանդիսացող Հանձնաժողովի գործարար համբավը:* Այս առումով հայցում հատկապես ընդգծվել է այն իրողությունը,__որ Հանձնաժողովի գործունեության անկախությունը և քաղաքական չեզոքությունու մարմնի մանդատի իրացման և լիազորությունների իրականացման համար առանցքային նշանակություն ունի, իսկ Հանձնաժողովի ապաքաղաքականությունը և գործառնական անկախությունը պարբերաբար գնահատվում են նաև Հայաստանի Հանրապետության վարկանիշային գնահատման, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի

---

[8] «Հրապարակ օրաթերթ» ՍՊ ընկերությունն իրեն պատկանող «Հրապարակ օրաթերթ» լրատվական կայքում 2024 թվականի ապրիլի 2-ին հրապարակվել է հետևյալ նյութը՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իմ դեմ պատվեր է կատարում», Hraparak.am, Ապրիլ 02, 10:15, http://surl.li/senrj:

հակակոռուպցիոն ցանցի, ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) Մոնիթորինգի հանձնաժողովի, ինչպես նաև մի շարք այլ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների գնահատման զեկույցներում: Այսինքն՝ Հանձնաժողովը ոչ միայն ներպետական մակարդակում ունի գործարար համբավ, այլ նաև միջազգային հարթակներում ճանաչվել է որպես դրական, անաչառ, անկախ գործարար համբավ ունեցող կազմակերպություն:

Նշված գործի շրջանակներում Հանձնաժողովը հիմնավոր փաստակներ է ներկայացրել՝ վերհանելով այն իրողությունը, որ հայցվորի կողմից հրապարկմամբ տարածված ապատեղեկատվությունը միտված է չեզոքացնելու Հանձնաժողովի կողմից վերջինիս գործողություններում հաստատված խախտումների հետևանքների գիտակցումը հանրության շրջանում: Արդյունքում, վնասվում է այն հանրային շահը, որի պաշտպանության համար Հանձնաժողովն օժտված է բացառիկ մանդատով, որն էլ կոնկրետ գործով Պատասխանողի նկատմամբ իրացվել է մարմնի լիազորությունների շրջանակում կատարված վարութային գործողություններով:

Հաշվետվու ժամանակահատվածում ուժի մեջ է մտել նաև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից Հանձնաժողովի օգտին կայացված՝ թիվ ՎԴ2/0417/05/21 վարչական գործով որոշումը: Նշված վարչական գործը վերաբերում էր Հանձնաժողովի բարեվարքության հարցերով ուսումնասիրության իրականացման վարչության պետի թափուր պաշտոնի արտաքին մրցույթի արդյունքների վիճարկմանը: Վարչական դատարանը մերժել էր Հանձնաժողովի դեմ ներկայացված հայցը, իսկ Վերաքննիչ վարչական դատարանը վճիռը թողել է անփոփոխ՝ Վարչական դատարանի վճիռը համարելով հիմնավոր:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

VI.ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Պետության կողմից որդեգրված հակակոռուպցիոն քաղաքականության, ինչպես նաև Հանձնաժողովին վերապահված կանխարգելման մանդատի իրականացման տեսանկյունից Հանձնաժողովի առանցքային գործառույթներից է համարվում պետական պաշտոնների հավակնող անձանց (թեկնածուների) բարեվարքության ուսումնասիրության և դրա արդյունքում իրավասու մարմին համապատասխան խորհրդատվական եզրակացության տրամադրումը: Նշված գործընթացի շարունակական և արդյունավետ իրականացման արդյունքում հնարավոր կլինի հասնել պետական պաշտոններում հավակնող անձանց բարեվարք կերպարի ձևավորմանը, հետևողական պայքար մղելու պետական համակարգում կոռուպցիայի, հովանավորչության, անձնական կապերով առաջնորդվելով որոշումներ կայացնելու և մի շարք այլ արատավոր գործընթացների և երևույթների դեմ:

6.1 Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ

Հանձնաժողովը 2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում պետական պաշտոններում նշանակվել հավակնող անձանց (թեկնածուների) բարեվարքության ուսումնասիրության լիազորության շրջանակներում իրականացրել է թվով 264 անձանց բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ են ներկայացվել նույնքան խորհրդատվական բնույթի եզրակացություններ: Թվով 4 անձի վերաբերյալ տրամադրվել է գույքային դրության վերաբերյալ տեղեկանք:

Ներկայացված 264 եզրակացություններից՝ 192-ը եղել են դրական, 24-ը՝ բացասական, 41-ը՝ դրական վերապահումով: Թվով 7 անձի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական հնարավորություն չի եղել տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված:

Ներկայացված եզրակացություններից՝



- 17-ը վերաբերել են **դատավորների թեկնածուների հավակնորդներին**,
- 33-ը՝ **Վերաքննիչ դատարաններում** դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց,
- 6-ը՝ **Վճռաբեկ դատարանում** դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց,
- 4-ը՝ **Բարձրագույն դատական խորհրդի անդամի** թեկնածուներին,
- 2-ը Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուներին,
- 137-ը՝ **դատախազների թեկնածությունների ցուցակում** ընդգրկվել հավակնող անձանց,
- 39-ը՝ **դատախազների առաջխաղացման ցուցակում** ընդգրկվել հավակնող դատախազներին,
- 13-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի **օպերատիվ-հետախուզական** գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող անձանց,

- 13-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի **ինքնավար պաշտոնները** համալրել հավակնող անձանց,
- 4-ը /տեղեկանք/՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի:



Դատավորների թեկնածուների հավակնորդների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 17 եզրակացություններից 11-ը եղել են դրական, որոնցից 5-ը ընդգրկվել են համապատասխան ցուցակում, հաշվետվության ներկայացման օրվա դրությամբ պաշտոններում նշանակումների վերաբերյալ տեղեկատվություն առկա չի եղել, 1-ը՝ բացասական, 4-ը՝ դրական վերապահումով, որից 1-ը ընդգրկվել է համապատասխան ցուցակում: Թվով 1 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական հնարավորություն չի եղել տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված: Նշված թեկնածուն ընդգրկվել է ցուցակում և նշանակվել պաշտոնում:



Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց վերաբերյալ ներկայացված բարեվարքության 33 եզրակացություններից 23-ը եղել են դրական, որոնցից ցուցակում ընդգրկվել է 6 թեկնածու, որից պաշտոնի նշանակվել են 3-ը, 4-ը՝ բացասական, թեկնածուներից ոչ ոք չի ընդգրկվել ցուցակում, 3-ը՝ դրական՝ վերապահումով, թեկնածուներից 2-ն ընդգրկվել են առաջխաղացման ցուցակում: Թվով 3 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել՝ Հանձնաժողովի անդամների ձայների 2 կողմ, 1 դեմ բաշխվելու արդյունքում: Թեկնածուները չեն ընդգրկվել ցուցակում:



Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 6 եզրակացություններից 2-ը եղել են դրական, թեկնածուները ընդգրկվել են ցուցակում, 3-ը՝ դրական վերապահումով, որից 1 թեկնածու ԱԺ քվեարկության արդյունքում նշանակվել է պաշտոնում, 1-ը՝ բացասական, թեկնածուն չի նշանակվել պաշտոնում:



Հաշվի առնելով Բարձրագույն դատական խորհրդի անդամի և Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների ոչ մեծ թվաքանակը, անձի նույնականացումը բացառելու նպատակով, արդյունքները ներկայացվում են ընդհանրացված.

Բարձրագույն դատական խորհրդի անդամի և Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 6 եզրակացություններից 5-ը եղել են դրական, որից 3-ը նշանակվել են պաշտոնում, թվով 1-ը դրական՝ վերապահումով, թեկնածուն նշանակվել է պաշտոնում:



Դատախազների թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 137 եզրակացություններից 95-ը եղել են դրական, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 16-ը, որից 3-ը նշանակվել են պաշտոնում, 14-ը՝ բացասական, որից ցուցակում ընդգրկվել են 3-ը, այնուհետև 2 թեկնածու նշանակվել է պաշտոնում, 26-ը՝ դրական վերապահումով, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 7-ը, այնուհետև թվով 5 թեկնածու նշանակվել է պաշտոնում:



Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 39 եզրակացություններից 32-ը եղել են դրական, որից առաջխաղացման ցուցակում ընդգրկվել են 30-ը, թվով 25 թեկնածու նշանակվել է պաշտոնում, 3-ը՝ բացասական, որից ցուցակում ընդգրկվել են 2-ը, այնուհետև նշանակվել պաշտոնի, 4-ը՝ դրական՝ վերապահումով, որից ցուցակում ընդգրկվել են 4-ը, այնուհետև նշանակվել պաշտոնում:


Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուներ
40
35
30
25
20
15
10
5
0
30
4
2
25
4
2
ընդգրկվել է համապատասխան ցուցակում
նշանակվել է պաշտոնում
դրական
բացասական
դրական՝ վերապահումով


ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
100
90
80
70
60
50
40
30
20
10
0
95
14
26
2
32
3
4
Դատախազի թեկնածու
Դատախազի առաջխաղացում
Դրական
Բացասական
Դրական՝ վերապահումով
Վերջնական գնահատական չի տրվել

Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 13 եզրակացություններից 12-ը եղել են դրական, , որից 10-ը նշանակվել են համապատասխան պաշտոններում, Թվով 1 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել՝ Հանձնաժողովի անդամների ձայների 2 կողմ, 1 դեմ բաշխվելու արդյունքում: Թեկնածուն չի նշանակվել պաշտոնում:



Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 13 եզրակացություններից 12-ը եղել են դրական, բոլոր թեկնածուները նշանակվել պաշտոնում, 1-ը՝ բացասական, թեկնածուն չի ընդգրկվել ցուցակում:



6.2 Բարեվարքության ուսումնասիրության գործընթացի արդյունքում ներկայացված եզրակացությունների առանձնահատկությունները

Հարկ է նշել, որ 2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Հանձնաժողովը թեկնածուների բարեվարքության վերաբերյալ գնահատականները ձևավորելու համար նախկինում կիրառվող մեթոդաբանությունը փոփոխության է ենթարկել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն թվականի ապրիլի 11-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված՝ ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի (ուժի մեջ է մտել 2024 թվականի մայիսի 17-ին) իրավակարգավորումների համաձայն՝ Հանձնաժողովը բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում ներառված և ձեռքբերված տվյալների ուսումնասիրության, համադրման և ամփոփման արդյունքով կազմում և իրավասու

մարմին է ներկայացնում անձի բարեվարքության վերաբերյալ դրական կամ բացասական բնույթի խորհրդատվական եզրակացություն:

Համաձայն փոփոխությունների՝ սույն թվականի մայիսի 17-ից ի վեր թեկնածուի բարեվարքության վերաբերյալ ***դրական՝ վերապահումով*** եզրակացություն չի ներկայացվում:

- Անձի բարեվարքության վերաբերյալ ***դրական*** եզրակացություն ներկայացվում է այն դեպքում, երբ տվյալների ուսումնասիրության, համադրման և ամփոփման արդյունքով չեն հայտնաբերվում սույն հոդվածով ուսումնասիրության առարկա հանդիսացող գործոններ, կամ թեև հայտնաբերվում են անհամապատասխանություններ, սակայն դրանք անձի բարեվարքության գնահատման համար բացասական ազդեցություն չունեն:

- Անձի բարեվարքության վերաբերյալ **բացասական** եզրակացություն ներկայացվում է բացառապես այն դեպքում, երբ տվյալների ուսումնասիրության, համադրման և ամփոփման արդյունքով հայտնաբերվում են տվյալներ, որոնք ինքնին հանդիսանում են բավարար գործոն անձի բարեվարքության վերաբերյալ բացասական բնույթի եզրակացության տրամադրման համար, մասնավորապես՝

1) անձի և «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով նրա ընտանիքի անդամների գույքային դրության առնչությամբ արձանագրված այնպիսի տվյալներ, որոնք ձևավորում են ողջամիտ կասկած առ այն, որ վերջիններիս գույքի ծագումը, փոփոխությունը, իրականացրած գործարքները կամ հայտարարագրման ենթակա տվյալներն օրինական և արժանահավատ չեն, կամ գույքային դրության և փաստացի ստացած եկամուտների միջև առկա է էական և ակնհայտ անհամապատասխանություն.

2) հիմնավոր և հավաստի տվյալներ, որոնց բնույթը, քանակը կամ դրանց ամբողջությունն էական ազդեցություն ունեն անձի մասնագիտական գործունեության անկախության, անաչառության վրա կամ ձևավորում են հանրային անվստահություն՝ նվազեցնելով հանրային իշխանության մարմինների հեղինակությունը, և որոնք վերաբերում են՝

ա. անձի կողմից նախկինում քրեական պատասխանատվության ենթարկված լինելու, նրա նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներ կայացված լինելու հանգամանքին՝ հաշվի առնելով արարքի բնույթը և դրա հնարավոր ազդեցությունը անձի հետագա մասնագիտական գործունեության վրա,

բ. անձի վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու, անձի կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, նրա կողմից վարքագծի կանոնների, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանման վերաբերյալ

տվյալներին, որոնք ձևավորում են բարեվարքության առնչությամբ ռիսկ՝ հաշվի առնելով արարքի բնույթը, դրա հնարավոր ազդեցությունն անձի հետագա մասնագիտական գործունեության վրա, խախտումների քանակը և դրանց առնչությամբ հնարավոր հանրային ընկալումը,

գ. անձի աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագծի, այդ թվում՝ իրականացրած գործողությունների (անգործության), կայացրած որոշումների վերաբերյալ տեղեկություններին, որոնք վկայում են մարդու իրավունքների խախտումների մասին, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներում առկա այնպիսի հրապարակումներ, որոնք կարող են անձի մասնագիտական գործունեության անկախության, անաչառության վերաբերյալ ձևավորել կասկած և անվստահություն՝ նվազեցնելով հանրային իշխանության մարմինների հեղինակությունը:

6.3 Բարեվարքության ուսումնասիրության գործընթացին առնչվող օրենսդրական փոփոխություններ

Հաշվետու ժամանակահատվածում բարեվարքության ուսումնասիրության գործընթացի առնչությամբ տեղի են ունեցել օրենսդրական փոփոխություններ:

Մասնավորապես, 2024 թվականի ապրիլի 11-ին Ազգային ժողովն ընդունել է ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և հարակից օրենքները (սույն գլխի շրջանակներում այսուհետ նաև՝ Օրենքների փաթեթ), որոնցով, ի թիվս այլնի, սահմանվում են գործող դատավորների, դատախազների և քննիչների բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգերը, Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնելուն հավակնող անձանց բարեվարքության ուսումնասիրություն անցնելու պահանջ: Այսպես, նշված փաթեթում ներառված ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-160-Ն օրենքի իրավակարգավորումների համաձայն՝ Հանձնաժողովն օրենքով սահմանված դեպքերում և կարգով այսուհետ իրականացնելու է նաև բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն, որը իրականացվելու է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-ին հոդվածով սահմանված

կարգով և պայմաններով՝ սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ: Տվյալ օրենքի անցումային դրույթների համաձայն՝ օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Միաժամանակ, «Հայաստանի Հանրապետության Քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-161-ն և «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-163-Ն օրենքների անցումային դրույթների համաձայն՝ օրենքներն ուժի մեջ են մտնում բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության շրջանակներում բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի ներկայացման կարգը, բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի ձևանմուշը, լրացման կարգը, հարցաթերթիկում ներառվող տվյալների մանրամասները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

Նշվածի համատեքստում հարկ է նշել, որ ի կատարումն վերը նշված օրենսդրական փոփոխությունների՝ աշխատանքներ են իրականացվել «Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի և բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի ձևանմուշները սահմանելու մասին» Հանձնաժողովի որոշման նախագծի և հարցաթերթիկի ձևանմուշների նախագծերի մշակման, շահագրգիռ մարմիններին կարծիքի և հանրային քննարկման ներկայացման, վերջիններիս դիտարկումների հաշվառմամբ նախագծերի լրամշակման և վերջնական տարբերակները Արդարադատության նախարարություն փորձաքննության ուղարկելու ուղղությամբ: Մյուս ենթաօրենսդրական ակտերը Հանձնաժողովի կողմից մշակվել են, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններս փոխկապակցված են հարցաթերթիկի հետ՝ նշված փաստաթղթի ընդունումից հետո միայն հնարավոր կլինի ապահովել դրանց ընդունումը:

Հատկանշական է, որ դատախազությունում և քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ուսումնասիրություն անցնելու պահանջ նախատեսված է նաև «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների իրականացմանը. Փուլ II»-ի («Support to Justice Sector Reforms in Armenia: Phase II») ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրով:

Վերոնշյալի առնչությամբ, հարկ է նշել, որ նշված օրենսդրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների ընդհանուր թիվը զգալիորեն աճելու է:

Հաշվի առնելով օրենսդրական փոփոխությունների արդյունքում աշխատանքի ակնկալվող ծավալը՝ բարեվարքության ուսումնասիրություն իրականացնելու նպատակով, Հանձնաժողովը շուրջ մեկ տարի (վերջին գրությունը՝ 2024 թվականի ապրիլի 18-ին) մի քանի անգամ արդարադատության նախարարություն է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 10-ի № 1500-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը , որով նախատեսվում է Հանձնաժողովի Բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչության աշխատողների քանակի ավելացում և, ըստ այդմ, հաստիքացուցակի փոփոխություն, այդուհանդերձ մինչ օրս Հանձնաժողովի հաստիքներում փոփոխություն չի կատարվել:

VII. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԶՍՊՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Կոռուպցիոն ռիսկերի կառավարման մեթոդաբանությունների մշակումը և պիլոտային գործարկումը

Կոռուպցիոն ռիսկերի կառավարումը կոռուպցիայի կանխարգելման մանդատի մաս է կազմում, որը ենթադրում է հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի մշակում և իրականացում՝ ուղղված բացահայտված ռիսկերի նվազեցմանը: Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը գործուն քայլեր է ձեռնարկել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ՝ հիմք ընդունելով նաև ՀՀ 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումները: Շարունակվել է համագործակցությունը «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» ԵՄ թվինինգ ծրագրի հետ, որի 4-րդ՝ «Գործարար բարեվարքության խթանում» բաղադրիչի շրջանակում աշխատանքներ են իրականացվել երկու առաքելությունների փորձագետների հետ.

1. 2024 թվականի հունվարի 22-26-ը ծրագրի հերթական առաքելության հետ համագործակցությամբ ամփոփվել են պետական մասնակցությամբ երեք կազմակերպություններում 2023 թվականին մեկնարկած պիլոտային գնահատման արդյունքները: Առաքելության շրջանակում ծրագրի փորձագետները, ինչպես նաև Հանձնաժողովի ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել պիլոտային գնահատման գործընթացի մասնակից կազմակերպությունների հետ («Երևանի թիվ 119 մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Հայանտառ» ՊՈԱԿ և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ (ԱՆԻՖ)), որոնց ընթացքում փորձագետներն անդրադարձել են պիլոտային կազմակերպությունների կողմից լրացված հարցաշարերին, դրանց միջոցով վերհանված ռիսկերին և, հաշվի առնելով յուրաքանչյուր պիլոտային կազմակերպության կազմակերպահիրավական կարգավիճակի և գործունեության առանձնահատկությունները, առաջարկներ ներկայացրել

կազմակերպություններում կանխարգելիչ միջոցառումների միջոցով ռիսկերը նվազեցնելու համար:

2. 2024 թվականի մարտի 11-ից 15-ը ծրագրի 4-րդ բաղադրիչի վերջին առաքելության շրջանակում մշակվել են Հանձնաժողովի մեթոդական աջակցության վարչության՝ պետական մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործառույթի իրականացման համար անհրաժեշտ անձնակազմի հաշվարկի մեթոդաբանությունը, ինչպես նաև քննարկվել են վարչության պաշտոններին ներկայացվող որակավորման պահանջների և հմտությունների վերաբերյալ հարցեր: ԵՄ փորձագետների կողմից ներկայացված մեթոդաբանության հիմքում դրվել են մի շարք էական հանգամանքներ՝ վարչության գործառույթների «հիմնական» և «ընթացիկ» խմբերի տարանջատում, տարեկան արդյունավետ աշխատանքային օրերի և ժամերի հաշվարկ, պետական մասնակցությամբ կազմակերպությունների քանակ և կառուցվածք, որոնցում պետք է իրականացվեն կոռուպցիոն ռիսկերի գնահատումներ և այլն:

Պետական մասնակցությամբ ընկերություններում կոռուպցիոն ռիսկերի պիլոտային գնահատման արդյունքները Հանձնաժողովը ամփոփել է նաև զեկույցի մշակմամբ՝ հաշվի առնելով պետական մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության միջազգային ստանդարտների ներդրման անհրաժեշտությունը, ինչպես նաև մի շարք խնդիրների համակարգային բնույթը: Զեկույցը պարունակում է ՀՀ-ում պետական մասնակցությամբ ընկերությունների կորպորատիվ կառավարման ելակետային գնահատականը, որի շրջանակում անդրադարձ է կատարվում պետական մասնակցությամբ ընկերություններում բարեվարքության և կոռուպցիոն ռիսկերի կառավարման շրջանակը կարգավորող միջազգային ստանդարտներին, ՀՀ կարգավորող օրենսդրությանը, կորպորատիվ կառավարման այնպիսի ստանդարտների, ինչպիսիք են պետական մասնակցությամբ ընկերությունների գործառնական ինքնավարության ապահովումը, հաշվետվողականության արդյունավետ համակարգի ստեղծումը, վերջիններիս գործունեության թափանցիկության ապահովումը և այլն: Փաստաթուղթն անդրադառնում է նաև պետական (համայնքային) ոչ առևտրային կազմակերպություններում բարեվարքության և կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի ներդրման վերաբերյալ հարցերին: Զեկույցը շրջանառվել է ոլորտային հասարակական կազմակերպությունների շրջանում, որի արդյունքում հավաքագրված կարծիքների հիման վրա ենթարկվում է լրամշակման:

2024 թվականի առաջին կիսամյակում Հանձնաժողովը շարունակել է համագործակցությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ՝ հաշմանդամության գնահատման համակարգում կոռուպցիոն ռիսկերի պիլոտային գնահատման նպատակով: Գնահատման առաջին փուլում բացահայտված խնդիրների հիման վրա մեկնարկել է հետազոտական գործընթաց՝ դրանց խորքային պատճառների

բացահայտման և արդյունավետ լուծումներ առաջարկելու նպատակով: ԱՄՆ ՄԶԳ «Բարեվարքություն Հայաստան» ծրագրի և «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի հետ համագործակցությամբ շահառու խմբերի, իրավասու պետական մարմինների և ոլորտային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ իրականացվել են 35 խորին հարցազրույցներ, առանցքային տեղեկատուների 12 հարցազրույցներ, 8 խմբային հարցազրույցներ և 2 ֆոկուս խմբային քննարկումներ: Հետազոտության դաշտային աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է համապատասխան վերլուծական աշխատանքի իրականացում և զեկույցի մշակում:

Չնայած իրականացված աշխատանքներին՝ օրենսդրական դաշտում շարունակում է չկարգավորված մնալ կոռուպցիոն ռիսկերի կառավարման ոլորտում Հանձնաժողովի գործառույթների և լիազորությունների շրջանակը: Կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման գործառույթի իրականացման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների սահմանման նպատակով Հանձնաժողովը 2024 թվականին մշակել և Արդարադատության նախարարություն է ներկայացրել օրենսդրական փաթեթ, որի ընդունմամբ Հանձնաժողովին կվերապահվի հանրային և մասնավոր ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման գործիքակազմը: Նախագծի մշակումը բխում է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի 16.2-րդ միջոցառման, «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871 Լ որոշմամբ հաստատված գործողությունների ծրագրի 2-րդ հավելվածի 1.9-րդ և 4.3-րդ գործողությունների պահանջներից:

Նախագծով առաջարկվում է Հանձնաժողովին վերապահել հանրային իշխանության մարմիններում, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում հանրային իշխանության մարմիններում, ինչպես նաև 50 և ավելի տոկոս պետական և (կամ) համայնքային մասնակցությամբ ընկերություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման գործիքակազմի միասնականության ապահովման, մշակված հակակոռուպցիոն միջոցառումների, ներառյալ՝ բարեվարքության ծրագրերի կատարման նկատմամբ մոնիտորինգի իրականացման և դրանց վերաբերյալ իրավասու մարմիններ առաջարկություններ ներկայացնելու գործառույթը՝ համապատասխան լիազորությունների նախատեսմամբ, ինչպես նաև սահմանել Հանձնաժողովի և նշված կառույցների համագործակցության կառուցակարգերը:

7.2 Կոռուպցիոն ռիսկերի կառավարման և դրա կարևորության վերաբերյալ կարողությունների զարգացում

2024 թվականի առաջին կիսամյակում Հանձնաժողովը մասնակցություն է ունեցել հանրային և մասնավոր ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կառավարմանը վերաբերելի մի շարք հանրային միջոցառումների:

Հանձնաժողովի ներկայացուցիչները 2024 թվականի հունվարի 22-23-ը Ստրասբուրգում մասնակցել են Եվրոպայի խորհրդի Տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի և համագործակցության բաժնի կազմակերպած՝ «Արևելյան գործընկերության տարածաշրջանում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման գործիքները» թեմայով տարածաշրջանային աշխատաժողովին՝ ներկայացնելով կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիոն ռիսկերի կառավարման ոլորտում Հայաստանի արձանագրած առաջընթացը, ՀՀ նոր հակակոռուպցիոն ռազմավարությամբ կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի ներդրմանն ուղղված գործողությունները, այս ուղղությամբ Հանձնաժողովի իրականացրած աշխատանքները, ինչպես նաև այն մարտահրավերները, որոնց բախվում է Հանձնաժողովն այս գործառույթի արդունավետ գործարկումն ապահովելու հարցում:

Հանձնաժողովը մասնակցություն է ունեցել նաև ՀՀ-ում կորպորատիվ կառավարման վերաբերյալ կազմակերպված մի շարք միջոցառումների. Կորպորատիվ կառավարման կենտրոնի կողմից կազմակերպված՝ «G20/ՏՀԶԿ կորպորատիվ կառավարման սկզբունքներ» խորագրով աշխատաժողովին (մարտի 21, 2024), ինչպես նաև կորպորատիվ կառավարման հիմնախնդիրներին նվիրված համաժողովին (մայիսի 17, 2024), որոնց ընթացքում ընդգծվել է կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության հարցում հանրային և մասնավոր ոլորտների փոխգործելիության կարևորությունը, ինչպես նաև ներկայացվել պետական մասնակցությամբ ընկերություններում բարեվարքության խթանման և կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ Հանձնաժողովի իրականացրած աշխատանքները:

VIII. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

8.1 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը և համագործակցային շրջանակը

Հակակոռուպցիոն կրթությունը համարվում է կոռուպցիայի դեմ պայքարի երեք հենասյուներից, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման կարևոր գործիքներից մեկը: Հակակոռուպցիոն կրթությունը և իրազեկումը կարևորվում է նաև պետության մակարդակով: ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ (այսուհետ՝ Ռազմավարություն)՝ որպես ռազմավարական 3-րդ նպատակ սահմանված է հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործումը:[9]

Ըստ Ռազմավարության՝ հակակոռուպցիոն կրթությունը առանցքային նշանակություն ունի առողջ հասարակության ձևավորման և զարգացման համար հասարակության տարբեր բնագավառների զարգացման ներուժի ամբողջական իրացման տեսանկյունից:

Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր անհատի մոտ այն գիտակցության խորը սերմանումը, որ կոռուպցիան պետության թուլացման, անձի սոցիալական վիճակի վատթարացման պատճառներից մեկն է, իսկ յուրաքանչյուր քաղաքացի պետք է գիտակցի իր կարևոր դերը այս գործընթացում և ստանձնի անձական պատասխանատվություն դրա դեմ պայքարելու գործում: Այս համատեքստում՝ հակակոռուպցիոն կրթական ծրագրերը պետք է ներառեն այնպիսի գործողություններ, որոնք կօգնեն լայն հասարակությանը ձեռք բերելու գիտելիքներ, հմտություններ, ձևավորել

[9] Տե՛ս՝ « ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված Հակակոռուպցիոն ռազմավարությունը»

վերաբերմունք և վարքագիծ, որոնք անհրաժեշտ են կոռուպցիոն երևույթներ պարունակող իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու համար:

Այսինքն՝ հակակոռուպցիոն կրթությանն առնչվող միջոցառումները պետք է ուղղված լինեն վարքագծի խրախուսմանը և խթանմանը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, հանդիսանալով Ռազմավարության 3-րդ նպատակի իրականացման մի շարք միջոցառումների կատարող և համակատարող մարմին, ինչպես նաև Օրենքով սահմանված իր լիազորությունների շրջանակներում, մշակել և իրականացրել է մի շարք կրթական ծրագրեր՝ տարբեր թիրախային խմբերի համար:

Այսպես,

Կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ ԵՄ Թվինինգ ծրագրի (այսուհետ նաև՝ Ծրագիր) բաղադրիչ 1-ի գործողությունները՝ 4 ենթաբաղադրիչներով, ուղղված են հակակոռուպցիոն կրթական և իրազեկման բարձրացման ծրագրերի մշակմանը, ինչպես նաև դրանց իրականացման աջակցման ոլորտում Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունների բարելավմանը: Հաշվետու ժամանակահատվածում՝ Ծրագրի շրջանակներում, իրականացվել են հետևյալ գործողությունները.

1.1 Ծրագրով ներգրավված փորձագետների և Հանձնաժողովի վերապատրաստողի վերապատրաստում (ToT) անցած աշխատակիցների համատեղ աշխատանքի արդյունքում մշակվել են 2 մոդուլների նախագծեր՝

- Հայտարարագրման համակարգը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ
- Անհամատեղելիության պահանջները՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ

Մոդուլները, որոնք ներառում են նաև միջազգային չափանիշները, կարող են օգտագործվել որպես հիմնական գիտելիք վերապատրաստողների համար: Կախված վերապատրաստման թեմայից, այն կարող է օգտագործվել նաև որպես վերապատրաստման որոշակի թեմայի ներածություն: Վերապատրաստողները կունենան միջազգային և համեմատական ծավալուն նյութ ընտրված թեմայի վերաբերյալ, ինչպես նաև ներկայիս իրավիճակը Հայաստանում ներկայացնելու համար:

1.2 2024 թվականի հունվարի 22-26-ը ենթաբաղադրիչով ներգրավված փորձագետների հերթական առաքելության ընթացքում շարունակվել են «Կոռուպցիայի վերաբերյալ իրազեկվածությունը և վերջինիս կանխարգելումը հանրակրթության միջոցով» խորագրով աշխատաժողովները՝ կազմակերպված հանրակրթության ուսուցիչների համար: Այս անգամ՝ որպես բանախոսներ հանդես են եկել Ծրագրի շրջանակներում վերապատրաստում անցած մանկավարժները՝

հունվարի 23-ին Հրազդանի թիվ 1 ավագ և հունվարի 24-ին Երևանի Նիկոլ Աղբալյանի անվան թիվ 19 միջնակարգ դպրոցներում: Բացի վերը նշվածից, փորձագետները հունվարի 25-ին իրականացրել են վերապատրաստում՝ հասարակագիտության ուսուցիչների համար: Աշխատաժողովների նպատակն էր նույն բաղադրիչի նախորդ առաքելությունների արդյունքում հակակոռուպցիոն կրթության բովանդակության և դասավանդման մեթոդների վերաբերյալ ուսուցիչների և վերապատրաստողների համար մշակված նյութերի գործնական փորձարկումը, այսինքն՝ մեթոդական առումով ինչպես դասավանդել կոռուպցիայի կանխարգելման թեման դպրոցում: Հանդիպումներին մասնակցել են թվով 64 մանկավարժներ՝ ՀՀ մարզերի և ք. Երևանի ուս. հաստատություններից:

1.3 ենթաբաղադրիչի շրջանակներում, որն ուղղված էր բարեվարքության վերաբերյալ բուհական համակարգում ներդրման ենթակա նյութերի մշակմանը, իրականացվել են հետևյալ գործողությունները.

- Ներգրավված փորձագետների կողմից մշակված թվով 2 մոդուլների նախագծերը փորձարկվել են «Պրոֆեսորների վերապատրաստման» դասընթացի ժամանակ, որին մասնակցել են հայաստանյան տարբեր բուհերից թվով 10 դասախոսներ
- Վերը նշված հանդիպման ընթացքում մասնակիցների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա խմբագրվել է վերապատրաստման ծրագիրը և ներկայացվել մայիսի 31-ին դասախոսների համար կազմակերպված «Կոռուպցիայի վերաբերյալ իրազեկվածությունը և վերջինիս կանխարգելումը բուհական կրթության միջոցով» խորագրով աշխատաժողովի ժամանակ, որին մասնակցել են թվով 20 դասախոսներ հայաստանյան 8 ԲՈՒՀ-երից:

Հաջորդ ենթագործողությունների արդյունավետությունը մեծապես կախված է բուհերի դասախոսների աջակցությունից և համագործակցությունից: Նրանց ներդրումն անհրաժեշտ է Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների համար հարմարեցված ամբողջ ուսումնական նյութը վերջնական տեսքի բերելու նպատակով:

Մոդուլների նախագծերն ուղարկվել են ԿԳՄՍ նախարարություն և վերապատրաստում անցած դասախոսների ԲՈՒՀ-եր՝ վերջիններիս կողմից ուսումնասիրելու և, անհրաժեշտության դեպքում՝ լրամշակելու, ուսումնական ծրագրերում ներդնելու կամ դրանց հետ ինտեգրելու նպատակով: Թվով 3 բուհեր՝ մասնավորապես. Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը արդեն իսկ տեղեկացրել

են առարկայական ծրագրերում մոդուլների առանձին թեմաներ ներառելու/ինտեգրելու վերաբերյալ:

ԵՄ Թվինինգ ծրագիրը մեկնարկել է 2022 թվականի հունիսի 1-ին և ավարտվել 2024թ. մայիսի 31-ին: 2024 թվականի մայիսի 7-ին կազմակերպվել է Ծրագրի արդյունքների ներկայացման միջոցառումը: Միջոցառմանը մասնակցել են բարձրաստիճան հյուրեր Ծրագիրն իրականացնող ԵՄ անդամ պետություններից՝ Գերմանիայից, Լատվիայից, ինչպես նաև պաշտոնատար անձինք ՀՀ կառավարությունից, Եվրոպական միության պատվիրակությունից, Հայաստանում գործող դիվանագիտական ներկայացուցչություններից և միջազգային ու տեղական կազմակերպություններից: Նշենք, որ Ծրագրի ընդհանուր նպատակն է եղել խթանել Հայաստանի պետական հատվածում բարեվարքության տարածումը և կոռուպցիայի կանխարգելումը: Որպես հատուկ նպատակ ծրագիրն ուղղված է եղել աջակցելու կոռուպցիայի դեմ պայքարի (բարեվարքության) ոլորտում կրթական ծրագրերի և հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը՝ ստեղծելու կոռուպցիայի կանխարգելման միջավայր, ինչպես նաև նպաստելու Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների իրականացմանը:

Հանձնաժողովը, կարևորելով հակակոռուպցիոն կրթության արմատավորումը դեռևս դպրոցական տարիներից, մշակել է «Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման հայեցակարգի և մեթոդական ձեռնարկի» նախագիծը՝ նախատեսված կրթության կազմակերպիչների, հանրակրթական դպրոցների ուսուցիչների և հակակոռուպցիոն, ինչպես նաև ժողովրդավարության խմբակներ վարողների համար: Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության հայեցակարգն ու մեթոդական ձեռնարկը առանձին բաժիններով ներկայացնում է հակակոռուպցիոն կրթության առաքելությունը, նպատակները, նպատակային ցուցանիշները, խնդիրները, ուղղորդող սկզբունքները, թիրախային խմբերը: Ձեռնարկի նախագիծը՝ Հանձնաժողովի առաջարկը, ներկայացվել է ԿԳՄՍ նախարարություն՝ կարծիքի:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից մշակվել և իրականացվել են մի շարք կրթական և իրազեկման ծրագրեր:
Մասնավորապես՝

- Դպրոցականների համար շարունակվել է Հանձնաժողովի կողմից կազմակերպված «Դարձի՛ր փոփոխության առաջնորդ» հակակոռուպցիոն կրթական ծրագիրը, որի շրջանակներում 2024թ. ապրիլի 4-ին, 5-ին, մայիսի 22-ին և հունիսի 17-ին անցկացված դասընթացներին մասնակցել են 4

ուսումնական հաստատություններից մոտ 100 աշակերտ: «Դարձի՛ր փոփոխության առաջնորդ» հակակոռուպցիոն կրթական ծրագիրը բաղկացած է 2 փուլից. 1-ին փուլում աշակերտներին դպրոցներում Հանձնաժողովի աշխատակիցների կողմից մատուցվում են տեսական գիտելիքներ, կազմակերպվում են քննարկումներ, 2-րդ փուլում արդեն տեսական գիտելիքներին տիրապետող աշակերտները հյուրընկալվում են Հանձնաժողովում, որտեղ տեղի է ունենում 1-ին փուլից տարբերվող՝ իրավիճակային քննարկումների, խաղերի ձևով անցկացվող գործնական պարապմունք՝ ապահովելով տեսական գիտելիքների գործնական կիրառությունը: Կրթական ծրագրի 1-ին փուլի ընթացքում աշակերտներին ներկայացվել է «կոռուպցիա» հասկացությունը, դրա դեմ պայքարի միջոցները, հակակոռուպցիոն բարեփոխումները, կոռուպցիայի դրսևորումները, պատճառները, տեսակները, կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգը, կոռուպցիայի ընկալման համաթիվը և այլն: 2-րդ փուլի ընթացքում ծավալված քննարկումները վերաբերել են հետևյալ թեմաներին՝

- Կոռուպցիայի դեմ պայքարի ընկալում
- Կոռուպցիայի կանխարգելման գործիքներ
- Իրավիճակային դեպքերի քննարկում

Ծրագիրն իրականացվել է Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների կողմից:

- Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագրի ներդրման նպատակով՝ Հանձնաժողովը մշակել է «Հակակոռուպցիոն կրթությունը ՄԿՈ ոլորտում» մոդուլի մեթոդական ձեռնարկի նախագիծը: Ձեռնարկը փորձարկվել է ՄԿՈՒ ոլորտի դասավանդողների, տնօրենների և փոխտնօրենների համար հունիսի 25-ին և 28-ին կազմակերպված աշխատաժողովների ժամանակ՝ առաջարկություններ հավաքագրելու նպատակով: Հանդիպումներին մասնակցել են շուրջ 44 մանկավարժներ՝ ք. Երևանի թվով 16 և Արմավիրի, Արարատի, Կոտայքի, Վայոց Ձորի մարզերի թվով 16 ուսումնական հաստատություններից:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի աշխատակիցները կազմակերպել և իրականացրել են տարբեր հանդիպումներ նաև

հակակոռուպցիոն կրթական ծրագրեր իրականացնող գործընկեր կառույցների առաջարկությամբ.

Մասնավորապես՝

- 2024թ. ապրիլի 26-ին «Բարեվարքության դեսպանները Հայաստանում» նախագծի շրջանակներում, «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամի կողմից, «Իբիս հյուրանոցում» կազմակերպված, ուսուցիչների կարողությունների զարգացման եռօրյա դասընթացներին մասնակցությունը
- 2024թ. մայիսի 3-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարության հրավերով, նախարարությունում տեղի ունեցած՝ նախարարին կից աշակերտական խորհրդի գործող կազմի անդրանիկ նիստին, որտեղ քննարկվել են աշակերտներին հուզող մի շարք հարցեր:
- 2024թ. մայիսի 15-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բակում տեղի ունեցած «ՀՊՏՀ աշխատանքի տոնավաճառ»-ին, որտեղ, առանձին տաղավարում, ներկայացվել է ԿԿՀ-ն՝ այցելուներին ծանոթացնելով Հանձնաժողովի գործառույթներին և թափուր հաստիքներին, ինչպես նաև տոնավաճառից հետո կազմակերպված «ՀՊՏՀ-աշխատաշուկա. համագործակցության զարգացման հեռանկարները» աշխատաժողովին:
- Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի աջակցությամբ սկսել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար կրթական առցանց հարթակի (e-learning platform) կառուցման աշխատանքները: Կրթական հարթակը ծառայելու է որպես Հանձնաժողովի կրթական գործառույթի ապահովման գործիք՝ տրամադրելով բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կրթական մոդուլների, թվային գրադարանի, կրթական ինտերակտիվ լուծումների հասանելիություն: Սույն թվականի հունիսի սկզբին ԱՄՆ ՄԶԳ կողմից հայտարարվել է հարթակի կառուցման փորձագետի ներգրավման մրցույթ: Ներկայացված հայտերի գնահատումն արդեն իսկ ավարտվել է, վերջնականացման փուլում է պայմանագրի կնքման գործընթացը:

Հարթակը ներդրվելու է Հանձնաժողովի կայքէջում՝ որպես առանձին գործիք, որն ինտեգրվելու է կայքէջի գործող համակարգի հետ: Այն թույլ կտա կենտրոնացված հասանելիություն ապահովել բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման հետ կապված կրթական ռեսուրսներին: Հարթակն ունենալու է մի քանի հիմնական բաղադրիչներ՝ կրթական բաժին, էլեկտրոնային գրադարան, ինտերակտիվ լուծումների և պրակտիկ դեպքերի վերաբերյալ բաժին (cases):

Նախատեսվում է կրթական մոդուլների հասանելիությունը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին, ինչպես նաև առանձին

մոդուլներ՝ բաց հասանելիությամբ՝ հանրության համար: Պայմանագրի հիման վրա՝ ծրագրային ապահովմանն ուղղված աշխատանքների մեկնարկը նախատեսվում է սկսել հուլիսի վերջին: Հարթակի կառուցման և մոդուլների հետագա ներդրման հիմքում դրվել է միջազգային լավագույն փորձը:
Բացի առանձին հարթակի կառուցումից՝ Հանձնաժողովը Եվրոպայի խորհրդի գրասենյակի հետ համագործակցությամբ նախատեսում է մինչև տարեվերջ առանձին կրթական մոդուլներ մշակել ԵԽ «HELP» կրթական ծրագրի շրջանակներում, որի շուրջ բանակցություններ են տարվել 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում:

8.2 Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերը

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իր գործունեությունը լուսաբանելու նպատակով Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ www.cpcarmenia.am, պարբերաբար տեղադրել է Հանձնաժողովի գործունեությանն առնչվող տեղեկատվական և վերլուծական բնույթի նյութեր: Հաշվի առնելով Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում առկա խնդիրները՝ Հանձնաժողովը մեկնարկել է նոր կայքէջի մշակման աշխատանքները և առաջիկայում նախատեսվում է գործարկել Հանձնաժողովի նոր պաշտոնական կայքէջը:

Հաշվի առնելով հաշվետվողականության ու թափանցիկության կարևորությունը՝ Հանձնաժողովը շարունակում է իր գործունեության վերաբերյալ հանրայնացման աշխատանքները: 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում www.cpcarmenia.am կայքէջում տեղադրվել է շուրջ 352 հրապարակում՝ 75 հոդված, 203 որոշում և եզրակացություն, 74 հայտարարություն, իսկ ֆեյսբուքյան էջում՝ շուրջ 82 հրապարակում: Հանձնաժողովի գործունեության լուսաբանման և հանրային իրազեկման ապահովման նպատակով Հանձնաժողովի յութուբյան ալիքում և պաշտոնական կայքէջում տեղադրվել են Հանձնաժողովի գործունեությանը վերաբերող շուրջ 10 տեսանյութեր և հարցազրույցներ:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի անդամների և ստորաբաժանման աշխատակիցների մասնակցությամբ տեղի են ունեցել տասնյակ հարցազրույցներ, իրազեկման հանդիպումներ, որոնք վերաբերվել են՝ 2023 թվականի կոռուպցիայի ընկալման համաթվին, Եվրոպայի խորհրդի

Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի՝ GRECO-ի առաջարկություններին, դատական համակարգի, դատավորների նկատմամբ հարուցվող կարգապահական վարույթներին, Հանձնաժողովի անդամները Հայաստանի պատվիրակության կազմում մասնակցել են ԳՐԵԿՈ-ի 96-րդ լիագումար նիստին, «Հայաստանի կորպորատիվ կառավարման միջավայրը G20/ՏՀԶԿ կորպորատիվ կառավարման սկզբունքների ներքո» խորագրով աշխատաժողովին, Կորպորատիվ կառավարման հիմնախնդիրներին նվիրված համաժողովին, 21-րդ միջազգային հակակոռուպցիոն կոնֆերանսին և այլն: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել նաև «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» ԵՄ Թվինինգ ծրագրի արդյունքների ներկայացման միջոցառումը, որին մասնակցել են բարձրաստիճան հյուրեր Ծրագիրն իրականացնող ԵՄ անդամ պետություններից՝ Գերմանիայից, Լատվիայից, ինչպես նաև պաշտոնատար անձինք ՀՀ կառավարությունից, Եվրոպական միության պատվիրակությունից, Հայաստանում գործող դիվանագիտական ներկայացուցչություններից և միջազգային ու տեղական կազմակերպություններից:

Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանման կողմից օրական երկանգամյա պարբերականությամբ իրականացվել է շուրջ 25 լրատվամիջոցների հրապարակումների վերաբերյալ մամուլի մշտադիտարկում, որի արդյունքում յուրաքանչյուր անգամ Հանձնաժողովի գործառույթներին և լիազորություններին վերաբերող հրապարակումների վերաբերյալ կազմվել է տեղեկանք և տրամադրվել Հանձնաժողովին:

Հանձնաժողովը «Փաբլիսիս» ընկերության հետ համատեղ մշակել է նաև Հանձնաժողովի ճանաչելիության բարձրացմանն ուղղված թվով 4 իրազեկման հոլովակներ, ստատիկ վիզուալներ, ինֆոգրաֆիկաներ: Մշակվել և հաստատվել է հանրային իրազեկման արշավի մեդիա պլանը, և 2024թ.-ի հուլիսից նախատեսվում է իրականացնել Հանձնաժողովի դերի և կարևորության բարձրացմանն ուղղված տեղեկատվության լուսաբանումը հեռուստատեսության և թվային ոլորտի միջոցով:

Կոռուպցիայի դեմ պայքարում Հանձնաժողովի կանխարգելիչ քայլերն ամբողջացնելու նպատակով՝ Հանձնաժողովը, ԵՄ Թվինինգ «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» ծրագրի 2-րդ բաղադրիչի շրջանակներում, միջազգային փորձագետների աջակցությամբ, մշակել է Հանձնաժողովի հաղորդակցության ռազմավարության, դրա իրականացման գործողությունների ծրագրի և ճգնաժամային հաղորդակցության պլանի նախագծերը:

ԿԿՀ-ի հաղորդակցության ռազմավարության հիմնական նպատակն է բարձրացնել Հայաստանում կոռուպցիայի ազդեցության մասին իրազեկվածությունը, խթանել ԿԿՀ-ի աշխատանքը և բարձրացնել հասարակության վստահությունը կոռուպցիայի կանխարգելման արդյունավետության նկատմամբ: Ռազմավարությունը նպատակ ունի ընդգծել ԿԿՀ-ի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը և խրախուսել քաղաքացիներին համագործակցել կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված ջանքերին:

Հանձնաժողովի աշխատակիցները 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացրել են մի շարք միջոցառումներ, վերապատրաստումներ, իրազեկման արշավներ, մասնակցել մի շարք դասընթացների, անցկացրել կրթական հանդիպումներ՝ նախատեսված միջին և ավագ դպրոցների աշակերտների համար, ունեցել միջազգային հանդիպումներ և ուսումնական այցեր:

Հանձնաժողովը՝ կարևորելով կոռուպցիայի նկատմամբ զգայուն և դիմակայող միջավայր ստեղծելու ահրաժեշտությունը, շարունակելու է հակակոռուպցիոն իրազեկման արշավների իրականացումը: